Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3146-3147

491-99-5
Ф-31

2010

Printed in Turkey

# ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՀԱՅԵՐԷՆ ԳՐԱԲԱՐ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԱՑ

Printed in Turkey
491.99-5

# ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ
# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՀԱՅԵՐԷՆ ԳՐԱԲԱՐ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԱՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ՍՏԵՓԱՆ Պ. ՊՕՂՈՍ ՓԱՓԱԶԵԱՆՑ



Կ. ՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

—

—1868—

2002

11965

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ ԿԱԹՈՒ-
ՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ
Տ. Տ. ՊՕՂՈՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

1168
39



*Ի ՅԻՇԱՏԱԿ*

ՎԱՂԱՄԵՌԻԿ ՈՐԴԵԿԻ ԻՄՈՅ

## ՊՕՂՈՍԻԿԻ

Ի 7 ՆՈՅԵՄԲԵՐ 1867

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Printed in Turkey

Հայ մանկտին, մտքի մշակութեան ասպարիզին մէջ, Եւրոպացի ազգաց մանկտւոյն ունեցած դիւրութիւններէն զուրկ ըլլալէն զատ, ուրիշ մեծ դժուարութեան մը մէջ ալ կը գտնուի։ Գաղղիացի մանկտին, նոյնպէս Անգղիացին եւայլն պարտական են իրենց մայրենի լեզուն սորվելու եւ նոյն լեզուով այլ եւ այլ գիտութեանց եւ ուսմանց պարապելու․ բայց Հայ մանկտին պարտաւոր է իր մայրենի լեզուէն զատ, ուսանիլ Տաճկերէնը, որովհետեւ իբրեւ հպատակ Օսմանեան Տէրութեան պէտք ունի նոյն լեզուին․ ուսանիլ նաեւ Գաղղիերէնը, որովհետեւ իբրեւ Տէրութեան կէս պաշտօնական լեզու եւ իբրեւ ամէն գիտութեանց եւ արուեստից վրայ առատ նիւթ պարունակող լեզու՝ կարեւոր համարուած է։ Այսպէս ազգային ամէն վարժարանաց մէջ կը գտնուի Հայերէն, Տաճկերէն եւ Գաղղիերէն լեզուաց ուսումը․ ի բաց առեալ Անգղիերէն եւ Յունարէն եւայլն լեզուները, որոնք մասնաւոր վարժարանաց մէջ կ'աւանդուին։ Ռուսերէնն ալ Ռուսիաբնակ ազգայնոց համար նոյն կարեւորութիւնն ունի, ինչ որ Տաճկաստանի մէջ բնակող Հայոցս համար Տաճկերէն լեզուն ունի։

Հայ մանկտին ուրիշ մեծ դժուարութիւն մ'ալ կը կրէ նոյն իսկ Հայերէն լեզուի ուսմանը մէջ․ ինչ լեզու որ մայրերէն կը սորվի, նոյնը չէ վարժարանաց մէջ սորվածը․ Հայերէնը Գրաբարի եւ Աշխարհաբարի բաժնուած ըլլալով, կրկին մայրենի լեզու սորվելու կը պարտաւորի Հայ մանկտին ալ։ Եւ արդարեւ ազգային յառաջադիմութեան նորոգ սկզբ-

նաւորութենէն ի վեր, այն է 1840 թուականէն հետէ, 28 տարւոյ միջոցի մէջ, Պօլսոյ բոլոր մեծ ու պզտիկ վարժարանաց եւ մինչեւ գաւառաց մէջ ամէն կողմ, ուր որ բարեկարգ վարժարանի մը անուն կը լսուի, հոն նաեւ Հայերէն Տաճկերէն եւ Գաղղիերէն լեզուաց ուսումը կ'իմացուի: Լեզուագիտութեան համար եղած այսչափ զոհողութիւններն արդեօք հաւասար արդիւնք մ'ունեցա՞ծ են, հոս քննելու միտք չունինք. բայց սա ստոյգ է որ մարդկային յառաջադիմութեան ամենակարեւոր եւ անհրաժեշտ գիտութիւնները մեծ մասամբ մեր ազգային վարժարանաց մէջ տակաւին կը պակսին, եւ եղածներն ալ շատ ետ մնացած են:

Հայ մանկտին՝ օտար լեզուաց ուսմանը համար ըրած ժամանակի եւ աշխատութեան մեծ զոհողութիւններուն մէջ, նշանաւոր բաժին մ'ալ իր մայրենի կրկին լեզուաց ուսմանը համար հանելու պարտաւորած ըլլալով, ասկէ գրեթէ 15 տարի յառաջ ուսումնական անձանց խումբ մը մտադիր եղաւ ազգային վարժարանաց մէջ Հայերէն Աշխարհաբար ըսուած արդի լեզուին ուսումը ընդհանրացնելու համար փոյթ տանիլ, եւ մանաւանդ Քերականութիւն մ'ալ խմբագրել եւ հրատարակել: Այս նոր ձեռնարկութիւնը իր խոչընդոտն ու արգելքներն այն ատեն ունենալով՝ խափանեցաւ: Սակայն ազգային յառաջադիմութեան համար այս մեծ պիտոյքը օր օրի աւելի զգալի ըլլալ սկսաւ, այնպէս որ այսօր նոյն իսկ Գրաբարի ջերմ կուսակիցներն ալ համոզուած են թէ 28—30 տարուան մէջ ցուցուած բազմաջան աշխատութեանց արժանաւոր փոխարինութիւն մը տուած չէ Ազգը: Տասներեք տարիէ ի վեր ազ-



գային վարժարանաց մէջ Հայերէն Գրաբար լեզուի ուսուցման պաշտօնը կը վարենք. փորձով կրնանք հաստատել թէ յուսացուած արդիւնքը արդարեւ չէ տեսնուած աշակերտաց վրայ: Գրաբարի ուսումը տղուն փոքր հասակէն՝ 8—9 տարիքէն սկսելով, մինչեւ 15—16 տարիքը կը շարունակուի. բայց ուսանողաց հարիւրին 5 կամ առ առաւելն 10 հազիւ կ'ելնեն որ Գրաբար գրուած մը հասկնալու եւ կամ գրելու կարող ըլլան. մնացեալները պարապ տեղը ժամանակի կորուստ կ'ըլլեն: Եւ եթէ աղէկ մը քննելու ըլլանք, կը տեսնենք որ այն 5 կամ 10 պատանիք ալ վարժարանէն դուրս ելնելէն ետքը, (եթէ վարժապետութեան պաշտօնի չնուիրուին), սորվածնին մեծ մասամբ մոռնալու վիճակին մէջ՝ բնական հետեւութեամբ կ'իյնան. ասոր ալ պատճառը յայտնի է, այսինքն Գրաբարի մշակութիւնը վարժարանէն դուրս դադրած ըլլալը. վասն զի ազգային մատենագրութիւն եւ խմբագրութիւն այժմ ընդհանրապէս Աշխարհաբար լեզուով կ'ըլլան եւ ոչ թէ Գրաբարով:

Արդ մենք փորձով տեսնելով Գրաբարի մշակութեան եւ զարգացման դժուարութիւնները, եւ ազգային մանկտւոյն ըրած ժամանակի կորուստը, նկատողութեան տակ առնելով նաեւ Գրաբարի եւ Աշխարհաբարի կուսակիցներուն առարկութիւնները, ոչ մէկին եւ ոչ միւսին զիրար ջնջելու կարծիքն ընդունելով, երկուքին միանգամայն ուսումը կարեւոր համարելով եւ երկու կողմին ալ փոխադարձ զիջումն ընել տալով, Գրաբարի եւ Աշխարհաբարի ուսմանը միանգամայն Նոր Դասագիրքս պատրաստեցինք, մեզի նպատակ եւ սահման ունենալով, ազգային վարժարանաց մէջ մայրենի լեզուին ընդհա-

նուր ուսմանը հիմ բռնել ԳՐԱԲԱՐԸ ՀԱՍԿՆԱԼ, ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԳՐԵԼ. անանկ որ ամէն Հայ տղայ վարժարանի մէջ իր մայրենի լեզուին վրայ այս ճաշակն առնելու պարտաւոր ըլլայ . եւ աւելի մշակելու եւ զարգացնելու յարմարութիւն ունեցողները Գրաբարի յատուկ քերականութիւններուն ուսմանը եւ նախնի ընտիր մատենագրաց վերծանութեանը պարապին :

Աշխարհաբարի համար յատուկ քերականութիւն ունենալու պէտքը ինքնին կը վերնայ, եթէ միանգամ գիտենք Աշխարհաբարի Գրաբարէ ունեցած տարբերութիւնները . կամ թէ երկուքին համար ալ առանձին յօրինուած քերականութիւնները քովէ քով դնենք : Գրաբարը Բառագիտութեան հոլովմանց եւ խոնարհմանց մասին, եւ Համաձայնութեան քանի մը գլխաւոր մասերուն մէջ տարբերութիւններ ունի Աշխարհաբարէն : Եթէ Աշխարհաբարի համար յատուկ քերականութիւն մը պատրաստել հարկ ըլլայ, շատ անգամ Գրաբար քերականութենէն փոխառութիւն ընելու պէտքը պիտի տեսնուի, մանաւանդ հոլովմանց եւ համաձայնութեան մէջ : Եւ եթէ նախ Աշխարհաբարի ու յետոյ Գրաբարի քերականութիւնը ուսուցանել ուզուի, տաղտկութիւն մը եւ ժամանակի կորուստ մը աւելցուցած պիտի ըլլանք ուսանողին վրայ . եւ եթէ միայն Աշխարհաբարը ուսուցանել ուզուի, Գրաբարի ուսումը զլանալով, ուսանողին մեծ շահ մը տուած չպիտի ըլլանք . վասն զի Աշխարհաբարին հետ՝ նոյն ժամանակի զոհողութեամբ Գրաբարի ճաշակն ալ կրնայ առնել ուսանողը Նոր Դասագրքիս միջոցաւ, եւ այսպէս Աշխարհաբարի ուսումը մանաւանդ աւելի կը հիմնաւորի, որ ամէն ատեն Գրաբարին աջակցութեանը



պէտք ունի : Այս նկատողութեանց համաձայն այժմ Գրաբարի եւ Աշխարհաբարի միանգամայն քերականութեան Նոր Դասագիրքս պատրաստելով, ոչ միայն Հայերէն լեզուի ուսումը դիւրացնելու, եւ երկուքին կուսակիցներն իրարու հետ հաշտեցնելով Հայ մանկտւոյն՝ ըրած ժամանակի կորուստին մէկ մասը շահեցնելու ծառայած պիտի ըլլանք, այլ եւ ուրիշ անպատեհութեան մը առջեւն ալ առած . մինչեւ ցարդ Գրաբարի համար պատրաստուած ամէն քերականութիւն՝ Գրաբարի հոլովմանց եւ խոնարհմանց եւ համաձայնութեան կանոնաց բացատրութիւնը Աշխարհաբարի մէջ ունեցած գործածութեամբը աւանդած է . բայց ցաւալին այս է որ Գրաբարը կանոնի մը վրայ քալեցուցած ատեն, Աշխարհաբարը սանձարձակ թողած է : Քերականութիւն կարդացող կամ Նոր աւարտող տղայոց՝ Գրաբարէ Աշխարհաբար եւ Աշխարհաբարէ Գրաբար թարգմանութեան վարժութիւն ընել կը տրուի . արդ Աշխարհաբարի գործածութեան անհմուտ տղէ մը ինչ իրաւամբ կրնանք սպասել որ՝ Գրաբարի վերածէ Աշխարհաբար խօսք մը . բայց երբ այս Նոր Դասագրքիս միջոցաւ աշակերտը սորվի Գրաբարի եւ Աշխարհաբարի կանոնները, անոնց իրարմէ ունեցած տարբերութիւնները եւ գործածութեան յատուկ ձեւերը եւայլն, ան ատեն Գրաբար խօսք մը Աշխարհաբարի կամ Աշխարհաբար խօսք մը Գրաբարի թարգմանելու դիւրութիւնը կ'ունենայ :

Կը փութանք խոստովանիլ թէ այս Նոր Դասագիրքս՝ ձեռնարկուած նպատակին հասնելու ամէն կատարելութիւնները չունի . սակայն կը յուսանք որ հետզհետէ ուրիշ տպագրութիւններուն մէջ

ունենայ, փորձառութեան եւ ժամանակի օգնութեամբը։ Թէ Գրաբարի եւ թէ Աշխարհաբարի այնպիսի ձեւեր կային, որոնք կրնայինք յապաւել կամ կոկել· բայց առաջին փորձի մը մէջ չուզեցինք խրտեցնել երկուքին ալ կուսակիցները, թողուցինք որ ժամանակն ինքը զգալի ընէ այն պիտոյքները։ Նոյնպէս չուզեցինք Աշխարհաբարի ամէն ձեւերը՝ որ ազատ գործածութենէ յառաջ եկած են, Նոր Դասագրքիս մէջ խճողել եւ ծանրաբեռնել· այլ փոյթ ունեցանք անոր սովորական եւ ընտանի գործածութիւնները եւ Գրաբարի հետ վերաբերութիւն ու մերձաւորութիւն ունեցող մասերը ցուցնել, (որոնք ուշադրութեամբ քննողը պիտի տեսնէ թէ ո՛չ Գրաբարն առանց Աշխարհաբարի եւ ո՛չ Աշխարհաբարն առանց Գրաբարի կանոնները պարունակելու՝ քերականութիւն կրնան ունենալ), միշտ նպատակ ունենալով, ԳՐԱԲԱՐ ՀԱՍԿՆԱԼ, ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԳՐԵԼ սորվեցնել ընդհանուր Հայ մանկտւոյն· եւ Գրաբարի ընդարձակ ուսումը մասնաւորաց, յաջողակներու պահել։

Երբ այս Նոր ընթացքը ազգային վարժարանաց մէջ մայրենի լեզուին ուսման դիւրութիւն տալով, ոչ մէկն եւ ոչ միւսը ջնջելով երկուքին ալ՝ թէ՛ Գրաբարի եւ թէ՛ Աշխարհաբարի ծաւալմանը նպաստէ, այն ատեն մեր ջանքը մեր նպատակին հետ արդիւնաւորուած համարելով, այս Նոր ընթացքը ոչ միայն աւելի կանոնաւորելու համար պիտի խրախուսինք, այլ եւ յատուկ կրթութիւն մ'ալ, որ այս Նոր ընթացքին պիտի վերաբերի, պիտի փութանք հրատարակել։ Միւս կողմէն ալ ուրախ պիտի ըլլանք տեսնելով որ ուղղական սեռականի եւ տէր բայի սեռի խնդրի վրայ տարբերելով ուղեղ յոգնեցնող Հայ մանկտին ալ իր տարժանելի աշխատութեան կապերէն արձկուած՝ կարող պիտի ըլլայ մայրենի լեզուին Գրաբար եւ Աշխարհաբար երկու ճիւղերն ալ քիչ ատենի մէջ ուսանիլ, եւ իր անգին ժամանակին մեծ մասը այլ եւ այլ կարեւոր գիտութեանց եւ արուեստից հմտութեան զոհել։ Ինչպէս յայտնի է, այս դիւրութիւնը եւ ազատութիւնը պիտի վայելէ Հայ մանկտին, երբ թէ՛ Գրաբարի եւ թէ՛ Աշխարհաբարի կուսակիցները՝ փոխադարձ զիջողութեամբ հաշտուելով, այս Նոր ընթացքին վրայ համաձայնին· որ ըստ մեզ մայրենի լեզուին մշակուելուն եւ ընդհանրանալուն միակ միջոցն է։ Մենք ալ ինքզինքնիս երջանիկ պիտի համարինք եթէ այս համաձայնութիւնն արդիւնաւորուած տեսնելու բաղդն ունենանք, եւ այսպէս ազգային յառաջադիմութեան քայլափոխին առջեւ կեցած դարաւոր խոչընդոտ մը բարձուած տեսնենք։ Ուրիշ միջոցաւ եւ ուրիշ առիթով այս համաձայնութեան պիտոյից վրայ խօսիլ խոստանալով, այժմ կը յուսանք որ ներկայ առաջին անգամի հրատարակութիւնս ներողամիտ ընդունելութեան կ'արժանանայ։

31 յուլիս 1868 — Ս· ՓԱՓԱԶԵԱՆՑ

ԴԱՍԱԳԻՐՔ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՀԱՅԵՐԷՆ ԳՐԱԲԱՐ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԱՑ

1. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ *շիտակ խօսիլ և ուղիղ գրել կը սորվեցնէ ։*

2. *Քերականութիւնը երկու մասի կը բաժնուի* ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ *և* ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ։

### ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

### ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ

3. *Խօսք մը բառերէ կը շինուի ։*

4. *Բառերն ութ տեսակ են . Անուն, Դերանուն, Նախդիր, Բայ, Դերբայ, Մակբայ, Շաղկապ, Զայնարկութիւն . որոնք* ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ *կ'ըսուին ։*

### ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

## ԱՆՈՒՆ

5. *Անունը երկու տեսակ է , Գոյական և Ածական ։*

6. Գոյական բառը կը ցուցնէ թէ բան մը ինչ է . Ածականը կը ցուցընէ թէ բան մը ինչպէս կամ որչափ է . տուն , ջաղաց՝ գոյական են . մեծ , երկու՝ ածական ։

7. Գոյականն ալ երկու տեսակ է , Յատուկ և Հասարակ ։

8. Յատուկ են որ միայն մէկի կը պատշաճին , ինչպէս են տեղի և մարդու անունները . Երուսաղէմ , Հայկ ։ Հասարակ են այն գոյականները, որ մէկի ալ կ'ըսուին, շատի ալ. ծաղիկ, ծառ ։

9. Որքանութիւն ցուցընող ածականներն երկու տեսակ են , Որոշեալ Թուական , ինչպէս են մի , երկու , երեք ևն . և Անորոշ Թուական , ինչպէս են ոմն , ինչ , այլ , ևն ։

10. Անուններն ունին Թիւ , Հոլով և Հոլովումն ։

11. Թիւն երկու է Եզակի և Յոգնակի . Եզակին մէկ հատ բան կը ցուցնէ . Յոգնակին մէկէն աւելի . տուն՝ եզակի է . տունք, տուներ՝ յոգնակի ։ Բայց կայ անուն որ եզակի չունի , ինչպէս աչք, աղօթք, որ եզակի աչ , աղօթ չըլլար , և կ'ըսուի անեզական ։ Կայ հասարակ անուն ալ որ յոգնակի չունի . ինչպէս խաւար , հարսն , որ յոգնակի խաւարք , հարսնք չըլլար ։

12. Հոլով կ'ըսուի անունին պէսպէս փոխուիլը , իր վերջը կամ սկիզբը գիր աւելնալով ։

13. Հայերէն լեզուի մէջ հոլովը վեց է . Ուղղական , Սեռական , Գործիական , Հայցական , Տրական , Բացառական ։



14. Ամէն անուն մէկ կերպ չեն հոլովիր , այլ զանազան կերպով , և կ'ըսուի հոլովմունք ։

15. Տասը կանոնաւոր հոլովմունք կան , որ պիտի տեսնենք կարգաւ . ասոնցմէ զատ քանի մը բառ ալ Անկանոն կամ Արտաքի հոլովմունք ունին . որ ետքը պիտի աւանդենք ։

## ՏԱՍԸ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

### 16. ԱՌԱՋԻՆ ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | ԳՐԱԲԱՐ | ԱՇԽԱՐՀԱԲԱՐ |
|---|---|---|
| | Եզակի | |
| Ուղղական | Բանտ. | Բանտ. |
| Սեռական | Բանտ-ի. | Բանտ-ի. |
| Գործիական | Բանտ-իւ. | Բանտ-ով. |
| Հայցական | զԲանտ. | Բանտ-ը. |
| Տրական | Բանտ-ի. | Բանտ-ի. |
| Բացառական | ի Բանտ-է. | Բանտ-է. |
| | Յոգնակի | |
| Ուղղական | Բանտ-ք. | Բանտ-եր. |
| Սեռական | Բանտ-ից. | Բանտ-երու. |
| Գործիական | Բանտ-իւք. | Բանտ-երով. |
| Հայցական | զԲանտ-ս. | Բանտ-երը. |
| Տրական | Բանտ-ից. | Բանտ-երու. |
| Բացառական | ի Բանտ-ից. | Բանտ-երէ։ |

### 17. ԵՐԿՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Քաղաք. (1) | Քաղաք-ք. |

(1) Այս հոլովման աշխարհաբարը առաջին հոլովման

| | | |
|---|---|---|
| Սեռ. | Քաղաք-ի. | Քաղաք-աց. |
| Գործ. | Քաղաք-աւ. | Քաղաք-օք. |
| Հայց. | զՔաղաք. | զՔաղաք-ս. |
| Տր. | Քաղաք-ի. | Քաղաք-աց. |
| Բաց. | ի Քաղաք-է. | ի Քաղաք-աց։ |

## 18. ԵՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Գետ. | Գետ-ք. |
| Սեռ. | Գետ-ոյ. | Գետ-ոց. |
| Գործ. | Գետ-ով. | Գետ-ովք. |
| Հայց. | զԳետ. | զԳետ-ս. |
| Տր. | Գետ-ոյ. | Գետ-ոց. |
| Բաց. | ի Գետ-ոյ. | ի Գետ-ոց։ |

## 19. ՉՈՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | ԳՐԱԲԱՐ | ԱՇԽԱՐՀԱԲԱՐ |
|---|---|---|
| | Եզակի | |
| Ուղ. | Բարի. | Բարի. |
| Սեռ. | Բար-ւոյ. | Բար-ւոյ. |
| Գործ. | Բար-եաւ. | Բար-ւով. |
| Հայց. | զԲարի. | Բարի-ն. |
| Տր. | Բար-ւոյ. | Բար-ւոյ. |
| Բաց. | ի Բար-ւոյ. | Բարի-է. |
| | Յոգնակի | |
| Ուղ. | Բարի-ք. | Բարի-ներ. |

աշխարհաբարին նման է . Քաղաք, քաղաքի, քաղաքովէն ։ Այսպէս իմացիր նաև ետևէն եկող միւս հոլովմանց համար ալ, որոնց աշխարհաբարը քովը գրուած չէ ։



| | | |
|---|---|---|
| Սեռ. | Բար-եաց. | Բարի-ներու. |
| Գործ. | Բար-եօք. | Բարի-ներով. |
| Հայց. | զԲարի-ս. | Բարի-ները. |
| Տր. | Բար-եաց. | Բարի-ներու. |
| Բաց. | ի Բար-եաց. | Բարի-ներէ։ |

## 20. ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | ԳՐԱԲԱՐ | ԱՇԽԱՐՀԱԲԱՐ |
|---|---|---|
| | Եզակի | |
| Ուղ. | Ժամ. | Ժամ. |
| Սեռ. | Ժամ-ու. | Ժամ-ու. |
| Գործ. | Ժամ-ու. | Ժամ-ով. |
| Հայց. | զԺամ. | Ժամ-ը. |
| Տր. | Ժամ-ու. | Ժամ-ու. |
| Բաց. | ի Ժամ-է. | Ժամ-է. |
| | Յոգնակի | |
| Ուղ. | Ժամ-ք. | Ժամ-եր. |
| Սեռ. | Ժամ-ուց. | Ժամ-երու. |
| Գործ. | Ժամ-ուք. | Ժամ-երով. |
| Հայց. | զԺամ-ս. | Ժամ-երը. |
| Տր. | Ժամ-ուց. | Ժամ-երու. |
| Բաց. | ի Ժամ-ուց. | Ժամ-երէ։ |

## 21. ՎԵՑԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Սերմն. | Սերմ-անք. |
| Սեռ. | Սերմ-ան. | Սերմ-անց. |
| Գործ. | Սերմ-ամբ. | Սերմ-ամբք. |
| Հայց. | զՍերմն. | զՍերմ-անս. |

| | | |
|---|---|---|
| Տրա. | Սերմ-ան. | Սերմ-անց. |
| Բաց. | ի Սերմ-անէ. | ի Սերմ-անց։ |

## 22. ԵՕԹՆԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Եղն. | Եղ-ինք. |
| Սեռ. | Եղ-ին. | Եղ-անց. |
| Գործ. | Եղ-ամբ. | Եղ-ամբք. |
| Հայց. | զԵղն. | զԵղ-ինս. |
| Տրա. | Եղ-ին. | Եղ-անց. |
| Բաց. | յԵղ-անէ. | յԵղ-անց։ |

## 23. ՈՒԹԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | ԳՐԱԲԱՐ | ԱՇԽԱՐՀԱԲԱՐ |
|---|---|---|
| | Եզակի | |
| Ուղ. | Նեղութիւն. | Նեղու-թիւն. |
| Սեռ. | Նեղութ-եան. | Նեղու-թ-եան. |
| Գործ. | Նեղութ-եամբ. | Նեղու-թ-եամբ. |
| Հայց. | զՆեղութիւն. | Նեղու-թիւն-ը. |
| Տրա. | Նեղութ-եան. | Նեղու-թ-եան. |
| Բաց. | ի Նեղութ-ենէ. | Նեղու-թ-ենէ. |
| | Յոգնակի | |
| Ուղ. | Նեղութիւն-ք. | Նեղու-թիւն-ներ. |
| Սեռ. | Նեղութ-եանց. | Նեղու-թիւն-ներու. |
| Գործ. | Նեղութ-եամբք. | Նեղու-թիւն-ներով. |
| Հայց. | զՆեղութիւն-ս. | Նեղու-թիւն-ները. |
| Տրա. | Նեղութ-եանց. | Նեղու-թիւն-ներու. |
| Բաց. | ի Նեղութ-եանց. | Նեղու-թիւն-ներէ։ |



## 24. ԻՆՆԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Համր. | Համ-երք. |
| Սեռ. | Համ-եր. | Համ-երց. |
| Գործ. | Համ-երբ. | Համ-երբք. |
| Հայց. | զՀամր. | զՀամ-երս. |
| Տրա. | Համ-եր. | Համ-երց. |
| Բաց. | ի Համ-երէ. | ի Համ-երց։ |

## 25. ՏԱՍՆԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | ԳՐԱԲԱՐ | ԱՇԽԱՐՀԱԲԱՐ |
|---|---|---|
| | Եզակի | |
| Ուղ. | Հայկ. | Հայկ. |
| Սեռ. | Հայկ-այ. | Հայկ-այ. |
| Գործ. | Հայկ-աւ. | Հայկ-ով. |
| Հայց. | զՀայկ. | Հայկ-ը. |
| Տրա. | Հայկ-այ. | Հայկ-այ. |
| Բաց. | ի Հայկ-այ. | Հայկ-է։ |

## ԳԻՏԵԼԻՔ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՀՈԼՈՎՄԱՆՑ ՎՐԱՅ

26. Վերը ցուցուած տասը հոլովմանց վրայ կը հոլովի ամէն բառ։ Սակայն գիտնալու է որ կան բառեր որ հոլովելու ատեն՝ իրենց ետքի բաղաձայնէն առաջ եղած ձայնաւոր գիրն ուրիշ ձայնաւորի հետ կը փոխեն. Ինչպէս,

Է կը փոխուի Ի, Ե ի. Սէր, սիրոյ. Եղէգն, եղեգան։

Ի, ՈՒ կը փոխուին Ը ի չգրուած. Գիր, գ-րոյ. Ջուր, ջ-րոյ։

ԻՒ կը փոխուի ՈՒ ի. Հովիւ, հովուի։

ԵԱ կը փոխուի Ե, Է ի. Ատեան, ատենի. Հրեայ, հրէի։

ՈՅ կը փոխուի ՈՒ ի. Լոյս, լուսոյ։

27. Առաջին հոլովման, այսինքն Բան ին վրայ շատ բառեր կը հոլովին, և մասնաւոր կանոնի մը տակ չեն. ինչպէս,

Արքայ, արքայի. Բան, բանի. Վարդ, վարդի. Սիրտ, ս-րտի. Ողջոյն, ողջունի. ևն։

28. Երկրորդ հոլովման, Քաղաք ին պէս կը հոլովին սովորաբար ակ, ան, կան, րան, որ, որդ, ոց, ու, ող վերջաւորութիւնն ունեցող բառերը, և ուրիշ բառեր ալ. ինչպէս,

Ժամանակ, ժամանակի, աւ. Աւազան, աւազանի. Զօրական, կանի. Վարժարան, րանի. Թագաւոր, ւորի. Երկրորդ, դի. Խարտոց, տոցի. Մեղու, մեղուի. Սիրող, ղի. Որդեակ, որդեկի. Մակոյկ, մակուկի, մակուկաւ. ևն։

29. Երրորդ հոլովման, Գետ ին պէս կը հոլովին միավանկ ի վերջաւորած բառերը, և սովորաբար ին, ուն, եալ մասնիկ ունեցողները, և ուրիշ բառեր ալ. ինչպէս,

Ձի, ձիոյ. Դի, դիոյ. Մարմին, մարմ-նոյ. Զուարթուն, զուարթ-նոյ. Առաքեալ, առաքելոյ. ևն։

Այս հոլովման բառերուն ոմանց եզ. տրականը ում կը վերջանայ, մանաւանդ ին, եալ վերջաւորածներուն. ինչպէս,



Վերջին, վեր-նոյ՝ նաև վեր-նում. Անցեալ, անցելոյ՝ նաև անցելում. Հին, հ-նոյ՝ նաև հ-նում։

30. Չորրորդ հոլովման, Բարի ին պէս կը հոլովին սովորաբար մէկ վանկէն աւելի ի վերջաւորած բառերը. ինչպէս,

Եկեղեցի, ցւոյ. Այգի, այգւոյ. Գինի, նւոյ. Սիրելի, լւոյ. ևն։

Այս հոլովման բառերուն ոմանց եզակի տրականն ալ ւոջ կը վերջանայ, և անկէ՝ ոմանց բացառականն ալ ւոջէ. ինչպէս,

Գինի, գինւոջ. Այգի, այգւոջ. Տեղի, տեղւոջ, ի տեղւոջէ. Տարի, տարւոջ, ի տարւոջէ։

Որդի, Հոգի, Աթենացի, և ուրիշ ամէն ցի վերջաւորած անունները այս կանոնէն կը խոտորին, և Գետ ին պէս կը հոլովին. ինչպէս,

Որդի, որդւոյ, որդւով. Որդւոց, որդւովք.
Հոգի, հոգւոյ, հոգւով. Հոգւոց, հոգւովք.
Աթենացի, նացւոյ, նացւով. նացւոց, նացւովք.
Երուսաղէմացի, ցւոյ, ցւով. ցւոց, ցւովք. ևն։

31. Հինգերորդ հոլովման, Ժամ ին պէս շատ բառեր կը հոլովին, և մասնաւոր կանոնի մը տակ չեն. ինչպէս,

Զարդ, զարդու. Ծով, ծովու. Զգեստ, զգեստու. Ցուլ, ց-լու. Զէն, զինու. ևն։

Այս հոլովման բառերուն ոմանց բացառականը ուէ ալ կը վերջանայ. ինչպէս,

Զարդ, ի զարդէ կամ ի զարդուէ.
Գանձ, ի գանձէ կամ ի գանձուէ։

32. Ժամ ին մօտ կը հոլովին քանի մը բառ

վերջաւորած բառեր, և մէկ երկու ալ ուրիշ բառեր. ինչպէս,

| | | |
|---|---|---|
| Ո. | փոքր. | փոքունք. |
| Ս. | փոքու. | փոքունց. |
| Գ. | փոքու. | փոքումբք. |
| Հ. | զփոքր. | զփոքունս. |
| Տ. | փոքու. | փոքունց. |
| Բ. | ի փոքուէ. | ի փոքունց։ |

Թանձր, թանձու. Թանձունք, թանձունց.

Մանր, մանու. Մանունք, մանունց.

Ծանր, ծանու. Ծանունք, ծանունց.

Քաղցր, քաղցու. Քաղցունք, քաղցունց.

Բարձր, բարձու. Բարձունք, բարձանց (Սերմին յոգնակիին պէս), բարձամբք.

Երէց (տարիքով մեծ), երիցու. Երիցունք, երիցանց (Սերմին յոգնակիին պէս), երիցամբք.

Յօդն (շար), Յօդունք, յօդունց, յօդուամբք. (միայն յոգնակի կը հոլովի)։

33. Վեցերորդ հոլովման, Սերմին պէս կը հոլովին ն վերջաւորած բառերուն մեծ մասը. ինչպէս,

Արեգակն, գական. Հիմն, հիման. Աղեղն, ղան. Ամառն, ամարան. Ձմեռն, ձմերան (ռ փոխուած է ր) Դուռն, դրան. ևն։

Կան քանի մը բառեր, որ թէպէտ ն չեն վերջանար, բայց Սերմին նման կը հոլովին. ինչպէս,

Մահ, մահուան, մահուամբ. Մահունք, մահուանց, մահուամբք.



Պաշտօն, պաշտաման. Պաշտամունք, պաշտամանց.

Տուն, տան, տամբ. Տունք, տանց, տամբք.

Անուն, անուան, անուամբ. Անուանք, անուանց, անուամբք.

Շուն, շան, շամբ. շունք, շանց, շամբք։

34. Եօթներորդ հոլովման, Եզին պէս կը հոլովին ն վերջաւորած քանի մը բառեր. ինչպէս.

Գառն, գառին. Բեռն, բեռին. Խաշն, խաշին. ևն։

Այս հոլովման քանի մը բառերուն եզ. բացառականը և յոգ. ուղղական և հայցականը կը փոխուին. ինչպէս,

Հարսն, ի հարսնէ. Հարսունք, զհարսունս.

Մասն, ի մասնէ. Մասունք, զմասունս.

Լեառն, լերին, ի լեռնէ. Լերինք, լերանց։

35. Ութերորդ հոլովման, Նեղութիւնին պէս կը հոլովին բոլոր ութիւն, իւն, ումն, ունդ վերջաւորած բառերը. ինչպէս,

Զօրութիւն, թեան. Մեծութիւն, թեան. Արիւն, արեան. Կործանումն, կործանման. Ծնունդ, ծննդեան, (յոգ. Գետին պէս, ծննդոց, ծննդովք). Սիւն, սեան, (բաց. ի սեանէ). Ձիւն, ձեան, (բաց. ի ձեանէ). ևն։

36. Իններորդ հոլովման, Հայրին պէս կը հոլովին ր, ղ, իւր վերջաւորած բառերը. ինչպէս,

Ոսկր, ոսկեր. Ուստր, ուստեր. Դուստր, դստեր. Աստղ, աստեղ. Անգղ, անգեղ. Ալիւր, ալեր. Աղբիւր, աղբեր. ևն։

Այս հոլովման յոդնակին Քաղաքք ին յոդնակին պէս ալ կ'ըլլայ. Համբրաց, համբրօք։

37. Տասներորդ հոլովման, Հայկ ին վրայ քիչ տարբերութեամբ կը հոլովին ընդհանրապէս Յատուկ անունները. ինչպէս,

Արամ, արամայ. Այրարատ, տայ. Մեսրոպ, պայ. Սահակ, սահակայ. եւն։

Կան յատուկ անուններ՝ որ է, ոս, էս կը վերջաւորին և Հայկ ին վրայ քիչ տարբերութեամբ կը հոլովին. ինչպէս,

Հռիփսիմէ, հռիփսիմեայ, հռիփսիմեաւ.
Օգոստոս, օգոստեայ, օգոստեաւ.
Սոկրատէս, սոկրատեայ, սոկրատեաւ. եւն։

Կան յատուկ անուններ՝ որ միւս հոլովմանց վրայ կը հոլովին. ինչպէս,

Եգիպտոս, տոսի, տոսիւ. Բան ին պէս։
Երուսաղէմ, ղէմի, ղէմաւ. Քաղաք ին պէս։
Կարին, կարնոյ, կարնով. Գետ ին պէս. եւն։

Յատուկ անունները իրենց նշանակութեանը համեմատ եզակի կը հոլովին. իսկ եթէ յոգնակի հոլովել ալ պէտք ըլլայ, Քաղաքք ին յոգնակիին պէս կ'ըլլան. Հայկք, հայկաց, հայկօք։

38. Կան բառեր, որոնց եզակին մէկ կերպ, յոգնակին ուրիշ կերպ կ'ըլլայ սովորաբար. ինչպէս,

Եզ. Քար, քարի, քարիւ. Բան ին պէս.
Յոգ. Քարինք, քարանց, քարամբք. Եզնք ին պէս։
Եզ. Ձեռն, ձեռին, ձեռամբ. Եզն ին պէս.



Յոգ. Ձեռք, ձեռաց, ձեռօք. Քաղաքք ին պէս։
Եզ. Ոտն, ոտին, ոտամբ. Եզն ին պէս.
Յոգ. Ոտք, ոտից, ոտիւք. Բանք ին պէս։
Եզ. Ժողովուրդ, ժողովրդեան, ժողովրդեամբ. Սերմն ին պէս.
Յոգ. Ժողովուրդք, ժողովրդոց, ժողովրդովք. Գետք ին պէս. եւն։

39. Կան բառեր ալ, որոնք տարբեր կերպով հոլովելով ուրիշ նշանակութիւն կ'ունենան. ինչպէս,

| | |
|---|---|
| Որթ, որթոյ, որթով. | Որթ. այգի։ |
| Որթ, որթու, որթու. | Հորթ. որդի։ |
| Փող, փողոյ, փողով. | Փող. դրամ։ |
| Փող, փողի, փողիւ. | Փող. փողոց։ |
| Օդ, օդի, օդիւ. | Ոտքի ամանի. կապուստ։ |
| Օդ, օդոյ, օդով. | Օդ. հովի։ |

---

40. Վերը հոլովմանց կարգը տեսանք որ միայն հինգ հոլովմանց աշխարհաբարները դրուած են։

41. Աշխարհաբարի մէջ բառերուն խիստ մեծ մասին ընդհանուր հոլովումը առաջին հոլովման աշխարհաբարի օրինակն է։

42. Միւս չորս հոլովումները, Բարէ, Ժամ, Եղբայր, Հայկ, նոյն ընդհանուր հոլովման պէս ալ կրնան հոլովիլ. սակայն վայելչութիւնը և սովորութիւնը անոնց յատուկ քանի մը փոփոխութիւններ տուած ըլլալով եզակիին մէջ, առանձին հոլովմանց կարգն անցած են։

43. Աշխարհաբարի մէջ յոգնակի հոլովումը միօրինակ է, ինչպէս կը տեսնուի հոլովմանց կարգին մէջ. սա տարբերութեամբ որ, բոլոր միավանկ բառերուն յոգնականացուցիչ մասնիկն է եր. Բանտ, բանտեր. Ծով, ծովեր. իսկ բազմավանկ բառերունը՝ ներ. Բարի, բարիներ. Թագաւոր, թագաւորներ (1). ևն։

44. Աշխարհաբարի հինգ հոլովմանց եզակիները հետևեալ պատկերին մէջ իրարմէ ունեցած տարբերութիւննին կ'երևան,

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ո. | Բանտ. | Բարի. | Ժամ. | Նեղութիւն. | Հայկ. |
| Ս. | Բանտ-ի. | Բար-ւոյ. | Ժամ-ու. | Նեղութ-եան. | Հայկ-այ. |
| Գ. | Բանտ-ով. | Բար-ւով. | Ժամ-ով. | Նեղութ-եամբ | Հայկ-ով. |
| Հ. | Բանտ-ը. | Բարի-ն (2). | Ժամ-ը. | Նեղութիւն-ը | Հայկ-ը. |
| Տ. | Բանտ-ի. | Բար-ւոյ. | Ժամ-ու. | Նեղութ-եան. | Հայկ-այ. |
| Բ. | Բանտ-է. | Բարի-է. | Ժամ-է. | Նեղութ-ենէ. | Հայկ-է։ |

45. Ինչպէս ըսինք, աշխարհաբարի մէջ բառերուն խիստ մեծ մասը Բանտին աշխարհաբար հոլովմանը պէս կը հոլովին. ինչպէս են,

Բարեկամ, կամի, կամով. Ազգական, կանի, կանով. Որսորդ, դի, դով. Չար, րի, րով. Մեծ, ծի, ծով. Փայտ, տի, տով. ևն։

(1) Մատ մատուըներ. Ձեռ, ձեռուըներ. Ոտ ոտուըներ. Աչ աչուըներ կ'ըլլան։ կան նաև Քուրոնք. Կնկոնք. Տիրոնք. Սեռական՝ քուրոնց. կնկոնց. տիրոնց. Գործիական՝ քուրոնցմով. Բացառական՝ քուրոնցմէ։

(2) Ձայնաւոր գրով վերջացած բառերուն հայցականին ծայրը ը չդրուիր ։ այլ ն ։



46. Բարիին պէս կը հոլովին բազմավանկ ի վերջաւորածները. ինչպէս,

Սիրելի, սիրելւոյ. Գինի, գինւոյ. Եկեղեցի, եկեղեցւոյ. Որդի, որդւոյ. Հոգի, հոգւոյ. Աթենացի, աթենացւոյ. ևն։

47. Ժամին պէս կը հոլովին ըստ մեծի մասին միավանկ անունները. ինչպէս,

Ձի, ձիու. Դի, դիու. Ծով, ծովու. Շահ, շահու. Արջ, արջու. Տղայ, տղու. ևն։

Աստուած բառն ալ ասոր մօտ կը հոլովի, Աստուծու կամ Աստուծոյ, Աստուծով, Աստուծմէ, եզակի միայն. յոգնակի պէտք ըլլայ նէ, Աստուածներ, աստուածներու, ևն. որ կը նշանակէ սուտ աստուածներ։

48. Նեղութիւնին պէս կը հոլովին ամէն ութիւն, ում, ունք վերջաւորածները, և քանի մ'ալ ուրիշ բառեր. ինչպէս,

Ծանրութիւն, թեան. Կործանում, կործան-ման.
Խաւարում, խաւար-ման. Ծնունդ, ծն-նդեան.
Էրէկ, էր-կան, էր-կնով, էր-կնէ.
Կնէկ, կն-կան, կն-կնով, կն-կնէ.
Լեռ, լեռան, լեռամբ կամ լեռնով, լեռնէ.
Դուռ, դ-ռան, դ-ռամբ կամ դ-ռնով, դ-ռնէ.
Տուն, տան, տամբ կամ տընով, տընէ.
Գարուն (1), գար-նան, գար-նով, գար-նէ. ևն։

(1) Այսպէս Ամառ, ամռան Աշուն, աշնան. Ձմեռ, ձմռան կը հոլովին ։

49. Հայկին պէս կը հոլովին յատուկ անունները. ինչպէս,

Արամ, մայ. Տրդատ, տայ. Եսայի, եսայեայ. եւն։

Իա վերջաւորած յատուկ անունները սեռականի մէջ իոյ կ՚ըլլան. Անգղիա, անգղիոյ. Սպանիա, սպանիոյ. եւն։

Ասոնց եթէ յոգնակի շինել պէտք ըլլայ, ընդհանուր կանոնին համեմատ ըսելու է, Հայկեր, հայկերու. Արամներ, արամներու. եւն։

50. Գիտնալ պէտք է որ, աշխարհաբարի մէջ բառերն երբեմն վայելչաբար գրաբարի նման կը հոլովին մանաւանդ յոգնակի սեռական և գործիական հոլովներուն մէջ. ինչպէս,

Լոյս, լուսոյ. Սէր, սիրոյ. Մարմին, մարմնոյ, ով, ոց, ովք. Գետ, ոյ, ով, ոց, ովք. Թշնամիք, թշնամեաց, եօք. Որդիք, որդւոց, որդւովք. Հայք, հայոց, (հայոցմով, հայոցմէ.) Տղայք, տղայոց (կամ տղոց, տղոցմով, տղոցմէ.) Պահք, պահոց. Աթենացիք, աթենացւոց, ովք. Դրսեցիք, դրսեցւոց, ովք. Մեղք, մեղաց, մեղօք. Յոյնք՝ յունաց, (յունացմով, յունացմէ.) Ձեռք, ձեռաց, ձեռօք. Դարք, դարուց. Լերինք, լերանց, (լեռներով, լեռներէ.) Դրունք, դրանց, (դռներով, դռներէ.) եւն։

Մանաւանդ իւն, ումն, ունդ վերջաւորածները՝ յոգնակիի մէջ գրաբարի սեռական եւ գործիական հոլովներով կը բանին. Նեղութիւնք, նեղութեանց, նեղութեամբք. Կործանմունք, կործանմանց, մբք. Ծընունդք, ծննդոց, ովք, (Գետին պէս). եւն։



## 51. ԱՆԿԱՆՈՆ ԿԱՄ ԱՐՏՈՒՂԻ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

### Ա. ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Այր. | ըսել մարդ. | Արք. | ըսել մարդիկ. |
| Ս. | Առն. | ըսել մարդու. | Արանց. | ըսել մարդոց. |
| Գ. | Արամբ. | ըսել մարդով. | Արամբք. | ըսել մարդոցմով. |
| Հ. | զԱյր. | ըսել մարդը. | զԱրս. | ըսել մարդիկը. |
| Տ. | Առն. | ըսել մարդու. | Արանց. | ըսել մարդոց. |
| Բ. | յԱռնէ. | ըսել մարդէ. | յԱրանց. | ըսել մարդոցմէ։ |

Տէր, տեառն, տերամբ, զտէր, տեառն, ի տեառնէ. Տեարք, տերանց կամ տեարց, տերամբք, զտեարս, տերանց, ի տերանց։

1168
39

### Բ. ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Հայր. | հայր. | Հարք. | հայրեր. |
| Ս. | Հօր. | հօր. | Հարց. | |
| Գ. | Հարբ. | հօրմով. | Հարբք. | |
| Հ. | զՀայր. | հայրը. | զՀարս. | |
| Տ. | Հօր. | հօր. | Հարց. | |
| Բ. | ի Հօրէ. | հօրմէ. | ի Հարց։ | |

Մայր (1), մօր, մարբ, զմայր, մօր, ի մօրէ։ Մարք. մարց, մարբք, զմարս, մարց, ի մարց։

Եղբայր, եղբօր, եղբարբ, զեղբայր, եղբօր, յեղբօրէ. Եղբարք, եղբարց, եղբարբք, զեղբարս, եղբարց, յեղբարց։

(1) Այր և Մայր բառերը ուրիշ նշանակութեամբ բանին պէս կը հոլովին. Այր՝ երբ նշանակէ քարայր, կը հոլովի այրի, այրիւ. նոյնպէս Մայր՝ երբ նշանակէ ծառ մը, կը հոլովի մայրի, մայրիւ։

### Գ. ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | կին. | կին. | կանայք. | կիներ. |
| Ս. | կնոջ. | կնոջ. | կանանց. | |
| Գ. | կնաւ. | կնոջմով. | կանամբք. | |
| Հ. | զ կին. | կինը. | զ կանայս. | |
| Տ. | կնոջ. | կնոջ. | կանանց. | |
| Բ. | ի կնոջէ. | կնոջմէ. | ի կանանց։ | |

Տիկին, տիկնոջ, տիկնաւ, զտիկին, տիկնոջ, ի տիկնոջէ. Տիկնայք, տիկնանց, տիկնամբք, զտիկնայս, տիկնանց, ի տիկնանց։

### Դ. ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Քոյր. | քոյր. | Քորք. | քոյրեր. |
| Ս. | Քեռ. | քրոջ. | Քերց. | |
| Գ. | Քերբ. | քրոջմով. | Քերբք. | |
| Հ. | զ Քոյր. | քոյրը. | զ Քորս. | |
| Տ. | Քեռ. | քրոջ. | Քերց. | |
| Բ. | ի Քեռէ. | քրոջմէ. | ի Քերց։ | |

### Ե. ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Օր. | օր. | Աւուրք. | օրեր. |
| Ս. | Աւուր. | օրուան. | Աւուրց. | |
| Գ. | Աւուրբ. | օրով. | Աւուրբք. | |
| Հ. | զ Օր. | օրը. | զ Աւուրս. | |
| Տ. | Աւուր. | օրուան. | Աւուրց. | |
| Բ. | յ Օրէ. | օրուընէ. | յ Աւուրց։ | |

### Զ. ՀՈԼՈՎՈՒՄՆ — Է. ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Գիւղ. | Գիւղք. | Տիւ. | Տիւք. |
| Ս. | Գեղջ. | Գիւղից. | Տուընջեան. | — |
| Գ. | Գիւղիւ. | Գիւղիւք. | Տուընջեամբ. | — |
| Հ. | զ Գիւղ. | զ Գիւղս. | զ Տիւ. | զՏիւս. |
| Տ. | Գեղջ. | Գիւղից. | Տուընջեան. | — |
| Բ. | ի Գեղջէ. | ի Գիւղից։ | ի Տուընջենէ. | — |



### ԳԻՏԵԼԻՔ ԱՐՏՈՒՔԻ ՀՈԼՈՎՄԱՆՑ ՎՐԱՅ

52. Տեսանք որ եօթը տեսակ բառեր կան, որ արտաքի հոլովմունք ունին ։

53. Ա. Հոլովման, Այր ին պէս կը հոլովի Տէր բառն ալ. ինչպէս որ իր տեղը գրուած է։

54. Բ. Հոլովման, Հայր ին պէս կը հոլովին Մայր և Եղբայր բառերը ։

55. Գ. Հոլովման, կին ին պէս կը հոլովի Տիկին բառը։ Այսպէս կը հոլովի նաև Առնակին, առնակնոջ, են ։

56. Դ. Հոլովման, Քոյր ին պէս կը հոլովին ասկէ բաղդուածները, Հօրաքոյր, հօրաքեռ. Մօրաքոյր, մօրաքեռ, են ։

57. Ե. Հոլովման, Օր ին պէս կը հոլովին ասկէ բաղդուածները, Կէսօր, կիսաւուր, են ։

58. Զ. և Է. Հոլովումները առանձին հոլոված բառեր են ։

59. Այս արտաքի հոլով ունեցող բառերուն աշխարհաբար հոլովումներն ալ, ինչպէս վերը կ'երևայ, արտաքի են ։

— Այր ին աշխարհաբար յոգնակին, Էրիկ

մարդիկ, էրիկ մարդոց՝ արտաքի է աշխարհաբար կանոնաւոր հոլովմունքէն ։

Նոյնպէս Հայր, Կին, Քոյր, Օր բառերուն եզակի աշխարհաբարները արտաքի են. ինչպէս որ վերը կ'երեւայ ։ Իսկ յոգնակի աշխարհաբարները ընդհանուր կանոնին համեմատ՝ Հայրեր, հայրերու. Կիներ. կիներու. Քոյրեր, քոյրերու. Օրեր, օրերու, եւայլն կ'ըլլան ։ Սակայն վայելչութեան համար երբեմն ասոնց տեղ գրաբարի հոլովմանց գործածութիւնը կ'ըլլայ, Հարք, հարց. Կանայք, կանանց. Քորք, քերց. Աւուրք, աւուրց, եւն ։

Տէր բառին եզակի աշխարհաբարը՝ Կին ին եզակի աշխարհաբարին նման կը հոլովի, Տէր, տիրոջ. տիրոջմով. տիրոջմէ ։ Մայր և Եղբայր բառերուն աշխարհաբարը ճիշդ Հայր բառին պէս կ'ըլլայ։ Գեղ բառին աշխարհաբարն ալ ընդհանուր հոլովման պէս. Գեղ. գեղի. գեղով. գեղեր, եւն ։ Իսկ Տի– ին աշխարհաբարը Ցորէկ՝ կը հոլովի Օր ին պէս. Ցորեկուան, ցորեկով, ցորեկուընէ ։

60. Գիտնալ պէտք է որ, աշխարհաբարի մէջ ժամանակ ցուցընող անունները սովորաբար Օր ին աշխարհաբարին վրայ կը հոլովին. ինչպէս,

Տարի, տարուան, տարիով, տարուընէ.
Առտու, առտուան, առտուով, առտուընէ.
Իրիկուն, իրիկուան, իրիկունով, իրիկուընէ.
Գիշեր, գիշերուան, գիշերով, գիշերուընէ.
Առաջ, առաջուան, առաջով, առաջուընէ.



Երէկ, երեկուան, երեկով, երեկուընէ.
Ամառ, ամառուան, ամառով, ամառուընէ.
Ձմեռ, ձմեռուան, ձմեռով, ձմեռուընէ, եւն ։

Մահ բառն ալ կը հոլովի, մահուան, մահով, մահուընէ ։

61. Ժամանակ ցուցընող անուններէն դուրս կը մնան Ժամ, ժամու. Հեղ, հեղու. Դար, դարու՝ միավանկները, (տես 47). Եւ Րոպէ, րոպէի. Վայրկեան, վայրկենի. Եւ Գարուն, գարնան. Աշուն, աշնան (տես 48)։

## 62. ՈՐՈՇԵԱԼ ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔԸ

Մի, մէկ, միոյ կամ միոջ, միով, զմի, միում, ի միոջէ. (եզակի միայն)։

Երկու, երկուց, երկուք, զերկուս, յերկուց. } յոգնակի միայն
Երեք, երից, երիւք, զերիս, յերից.
Չորք, չորս, չորից, չորիւք, զչորս, ի չորից.

Հինգ, հնգի, հնգիւ, ի հնգէ. Հինգք, հնգից, հնգօք, ի հնգից։

Վեց, վեցի, վեցիւ, ի վեցէ. Վեցք, վեցից, վեցիւք, ի վեցից։

Եօթն, եօթը, եօթան, եօթամբ, յեօթանէ. Եօթանք, եօթանց, եօթամբք, յեօթանց։

Ութ, ութը, ութի, ութիւ, յութէ. Ութք, ութից, ութիւք, յութից։

Ինն, ինը, ըննի, ըննիւ, յըննէ. Իննունք, ըննից, ըննիւք, յըննից։

Տասն, տասը, տասին, տասամբ, ի տասնէ. Տասունք, տասանց, տասամբք, ի տասանց։

Մետասան. — տասնըմէկ։
Երկոտասան. — տասներկու։
Երեքտասան. — տասներեք։
Չորեքտասան — տասնըչորս։
Հնգետասան. — տասնըհինգ։
Վեշտասան. — տասնըվեց։
(նի, նիւ, նէ. նք, նից, նիւք։)

Եօթնեւտասան. — տասնըեօթը։
Ութեւտասան. — տասնըութը։
Իննեւտասան. — տասնըինը։
(սին, սամբ, սնէ. սանք, սանց, սամբք։)

Քսան, նի, նիւ, նից, նիւք։

Երեսուն.
Քառասուն.
Յիսուն.
Վաթսուն.
Եօթանասուն.
Ութսուն.
Իննսուն.
(սնի, սնիւ, սնէ. սունք, սնից, սնիւք։)

Հարիւր.
Երկերիւր, երկու հարիւր.
Երեքհարիւր.
Չորեքհարիւր, չորս հարիւր.
Հինգհարիւր.
Վեցհարիւր.
Եօթնհարիւր, եօթը հարիւր.
Ութնհարիւր, ութը հարիւր.
Իննհարիւր, ինը հարիւր.
(րոյ, րով. րք, րոց, րովք։)

Հազար, րի, րաւ, րէ. րք, րաց, րօք։
Բիւր, տասը հազար. րու, րու, րէ. րք, րուց, րուք։
Առաջին, ջնոյ, ջնով. ջնոց, ջնովք։

Առաջներորդ.
Երկրորդ.
Երրորդ.
Չորրորդ.
Հինգերորդ.
Վեցերորդ.
եւայլն
(ի, աւ, աց, օք։)



Երկոքեան կամ Երկոքին, Երկուքն ալ կը հոլովի այսպէս,

Ո. Երկոքեան. Երկոքին.
Ս. Երկոցուն. Երկոցունց.
Գ. Երկոքումբ. Երկոքումբք.
Հ. զԵրկոսեան. զԵրկոսին.
Տ. Երկոցուն. Երկոցունց.
Բ. յԵրկոցուն. յԵրկոցունց։

Երեքեան կամ Երեքին, երեցուն կամ երեցունց, երեքումբ կամ երեքումբք, են։

Չորեքեան կամ Չորեքին, չորեցուն կամ չորեցունց, չորեքումբ կամ չորեքումբք, են։

## ԳԻՏԵԼԻՔ ՈՐՈՇԵԱԼ ԹՈՒԱԿԱՆԱՑ ՎՐԱՅ

63. Որոշեալ թուականներուն աշխարհաբար հոլովմունքը միօրինակ աշխարհաբարի ընդհանուր հոլովման (41) վրայ է. ինչպէս, մէկ, մէկի, մէկով. Երեք, երեքի, երեքով. Երեքներ, երեքներու. Չորս, չորսի, չորսով. Չորսեր, չորսերու. Երկրորդ, երկրորդի, երկրորդով. Երկրորդներ, երկրորդներու. Երկուքն ալ, երկուքին ալ, երկուքովն ալ, են։

Միայն գիտնալ պէտք է որ

Երկու հոլովելու ատեն ք մը կ'առնէ և կ'ըլլայ, երկուքի, երկուքով, երկուքը, երկուքէ։

Եօթը, Ութը, Ինը, Տասը հոլովելու ատեն ը գրելուն տեղ ն կ'առնուն. Եօթնի. Ութնի. Իննի. Տասնի։

## 64. ԱՆՈՐՈՇ ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔԸ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Ոմն. | մէկը. | Ոմանք. | մէկ քանին. |
| Ս. | Ուրումն. | մէկու մը. | Ոմանց. | մէկ քանիին. |
| Գ. | Ոմամբ. | մէկով մը. | Ոմամբք. | մէկ քանիովը. |
| Հ. | զՈմն. | մէկը. | զՈմանս. | մէկ քանին. |
| Տ. | Ումեմն. | մէկու մը. | Ոմանց. | մէկ քանիին. |
| Բ. | յՈւմեմնէ. | մէկէ մը. | յՈմանց. | մէկ քանիէն։ |

Ոք. մէկը. ուրուք, զոք, ումեք, յումեքէ. (եզակի միայն)։

Եզակի թիւ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Իմն, | Իք, | Ինչ. | բան մը. (մը). |
| Ս. | — | Իրիք, | — | բանի մը. |
| Գ. | — | Իւիք, | — | բանով մը. |
| Հ. | Իմն, | — | Ինչ. | բան մը. |
| Տ. | Իմեմն, | Իմիք | — | բանի մը. |
| Բ. | յիմեմնէ, | յիմեքէ. | | բանէ մը։ |

| | Եզակի թիւ | | | Եզակի թիւ | |
|---|---|---|---|---|---|
| Ո. | Զի, | Զինչ. | ինչ (1) | Ամենայն. | ամէնը. |
| Ս. | Էր. | | ինչու. | Ամենայնի. | ամէնուն. |
| Գ. | Իւ. | | ինչով. | Ամենայնիւ. | ամէնով. |
| Հ. | Զի, | Զինչ. | ինչ | զԱմենայն. | ամէնը. |
| Տ. | Իմ, | Հիմ. | ինչու. | Ամենայնում. | ամէնուն. |
| Բ. | առ Իմէ. | | ինչէ։ | յԱմենայնէ. | ամէնէն։ |

Ամենեքեան կամ Ամենեքին, ամէնքն ալ, ամենեցուն կամ ամենեցունց, ևն։ Բոլորեքեան

(1) Ինչ աշխարհաբարի մէջ յոգնակի ալ ունի. ինչեր, ինչերու, ևն։



կամ Բոլորեքին, բոլորեցուն կամ բոլորեցունց, ևն. երկուքն ալ կը հոլովին Երկոքեան կամ Երկոքին ին պէս (տես 62)։

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Ո, Ով. | ով. | Ոյք. | որոնք. |
| Ս. | Ոյր. | որու. | Ոյց. | որոնց. |
| Գ. | Որով. | որով. | Որովք. | որոնցմով. |
| Հ. | զՈ, զՈվ. | զով. | զՈյս. | զորոնք. |
| Տ. | Ում. | որու. | Ոյց. | որոնց. |
| Բ. | յՈւմմէ. | որմէ. | յՈյց. | որոնցմէ։ |

| | Յոգնակի թիւ | | Յոգնակի թիւ | |
|---|---|---|---|---|
| Ո. | — | — | — | — |
| Ս. | Միմեանց | մէկմէկու. | Իրերաց. | իրարու. |
| Գ. | Միմեամբք. | մէկմէկով. | Իրերօք. | իրարմով. |
| Հ. | զՄիմեանս. | մէկզմէկ. | զիրեարս. | իրար. |
| Տ. | Միմեանց. | մէկմէկու. | Իրերաց. | իրարու. |
| Բ. | ի Միմեանց. | մէկմէկէ. | յիրերաց. | իրարմէ։ |

Այլ, այլոյ, այլով, այլում, յայլմէ. Այլք, այլոց, այլովք։ Աշխարհաբար՝ Ուրիշը, ուրիշին, ուրիշները, ևն։

Միւս, միւսոյ, միւսով, միւսում, ի միւսմէ. Միւսք, միւսոց, միւսովք։ Աշխարհաբար՝ Մէկալը, մէկալին. մէկալները, ևն։

Իւրաքանչիւր, չիւրոյ, չիւրով, չիւրում, չիւրմէ. Իւրաքանչիւրք, չիւրոց, չիւրովք, ևն։ Աշխարհաբար՝ Ամէն մէկը, ամէն մէկուն, ևն. սովորաբար եզակի կը բանի։

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ԴԵՐԱՆՈՒՆ

65. Արդէն յիշուած խօսք մը չկրկնելու համար, անոր տեղն ուրիշ բառ մը կը դրուի, որ Դերանուն կ'ըսուի։

66. Դերանունը չորս տեսակ է. Էական, Ցուցական, Ստացական և Յարաբերական։

## ԷԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

67. Էական կամ դիմական կ'ըսուին այն դերանունները, որոնք դէմք կը ցուցնեն։

68. Դէմքն երեք է. Առաջինն ան է որ կը խօսի. Երկրորդն ան՝ որու կը խօսուի, և Երրորդն ան՝ որու համար կը խօսուի։

69. Էական դերանուններն են, Ես, Դու, Ինքն, Իւր՝ որոնք դիմական են, և առանձին հոլովմունք ունին այսպէս.

Առաջին դէմք — ԵՍ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո· | Ես· | ես· | Մեք· | մենք· |
| Ս· | Իմ· | իմ· | Մեր· | մեր· |
| Գ· | Ինեւ· | ինծմով, ինձմով· | Մեօք· | մեզմով· |
| Հ· | զիս· | իս· | զՄեզ· | մեզ· |
| Տ· | Ինձ· | ինծի· | Մեզ· | մեզի· |
| Բ· | յինէն· | ինծմէ, ինձմէ, ինէ· | ի Մէնջ· | մեզմէ, մենէ։ |

Երկրորդ դէմք — ԴՈՒ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո· | Դու· | դուն· | Դուք· | դուք· |



| | | | | |
|---|---|---|---|---|
| Ս· | Քո· | քու· | Ձեր· | ձեր· |
| Գ· | Քեւ· | քեզմով· | Ձեօք· | ձեզմով· |
| Հ· | զՔեզ· | քեզ· | զՁեզ· | ձեզ· |
| Տ· | Քեզ· | քեզի· | Ձեզ· | ձեզի· |
| Բ· | ի Քէն· | քեզմէ, քենէ· | ի Ձէնջ· | ձեզմէ, ձենէ։ |

Երրորդ դէմք — ԻՒՐ — ԻՆՔՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո· | — | — | Իւրեանք· | իրենք· |
| Ս· | Իւր, Իւրեան· | իր· | Իւրեանց· | իրենց· |
| Գ· | Իւրեւ, րեաւ, րեամբ· | իրմով· | Իւրեամբք· | իրենցմով· |
| Հ· | — | — | զԻւրեանս· | իրենք· |
| Տ· | Իւր, Իւրեան· | իրեն· | Իւրեանց· | իրենց· |
| Բ· | յԻւրմէ· | իրմէ· | յԻւրեանց· | իրենցմէ։ |

Ինքն, ինքը, ինքեան, ինքեամբ, յինքենէ· Ինքեանք, ինքեանց, ինքեամբք, յինքեանց։

## ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

70. Ցուցական դերանունները գրաբարի մէջ երեք տեսակ են, և ամէն մէկ տեսակը առանձին հոլովում ունին. իսկ աշխարհաբարի մէջ երկու տեսակ՝ առանձին հոլովմամբ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սա. | Այս· | Սոյն· | սա· | աս· |
| Դա· | Այդ· | Դոյն· | դա· | ադ· |
| Նա· | Այն· | Նոյն. | նա· | ան· |

Սա, Դա, Նա՝ դիմական են. իսկ Այս, Այդ, Այն, Սոյն, Դոյն, Նոյն՝ ածական են։ Ահա այս երեք տեսակին ալ հոլովմունքը, աշխարհաբարով մէկտեղ։

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո· | Սա· | աս, աս-ի· | Սոքա· | ասոնք, աս-ոնք· |
| Ս· | Սորա· | ասոր, աս-որ· | Սոցա· | ասոնց, աս-ոնց· |
| Գ· | Սովաւ· | ասով, աս-ով· | Սոքօք· | ասոնցմով, աս-ոնցմով· |
| Հ· | զՍա· | աս, աս-ի· | զՍոսա· | ասոնք, աս-ոնք· |
| Տ· | Սմա· | ասոր, աս-որ· | Սոցա· | ասոնց, աս-ոնց· |
| Բ· | իՍմանէ· | ասկէ, ըսկէ· | իՍոցանէ· | ասոնցմէ, աս-ոնցմէ։ |

## Ասոր նման կը հոլովին.

Դա, ատ, ատ-ի, դորա, դովաւ, զդա, դմա, ի դմանէ· Դոքա, ատոնք, ատ-ոնք, դոցա, դոքօք, զդոսա, դոցա, ի դոցանէ։

Նա, ան, ան-ի, նորա, նովաւ, զնա, նմա, ի նմանէ· Նոքա, անոնք, ան-ոնք, նոցա, նոքօք, զնոսա, նոցա, ի նոցանէ։

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Այս· | | աս, ասի· |
| Ս· | Այսր, | Այսորիկ· | ասոր· |
| Գ· | Այսու, | Այսուիկ· | ասով· |
| Հ· | զԱյս, | | աս, ասի· |
| Տ· | Այսմ, | Այսմիկ· | ասոր· |
| Բ· | յԱյսմ, | յԱյսմանէ· | ասկէ, ասկից· |
| Ո· | Այս, | Այսոքիկ· | ասոնք· |
| Ս· | Այսց, | Այսոցիկ· | ասոնց· |
| Գ· | Այսու, | Այսոքիւք· | ասոնցմով· |
| Հ· | զԱյս, | զԱյսոսիկ· | ասոնք· |
| Տ· | Այսց, | Այսոցիկ· | ասոնց· |
| Բ· | յԱյսց, | յԱյսցանէ. | ասոնցմէ։ |

## Ասոր նման կը հոլովին.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո· | Այդ, | ատ, ատի· | Այդք, | Այդոքիկ· |
| Ս· | Այդր, | Այդորիկ· | Այդց, | Այդոցիկ· |



| | | | | |
|---|---|---|---|---|
| Գ. | Այդու, | Այդուիկ· | Այդու, | Այդոքիւք· |
| Հ· | զԱյդ· | | զԱյդ, | զԱյդոսիկ· |
| Տ· | Այդմ, | Այդմիկ. | Այդց, | Այդոցիկ· |
| Բ· | յԱյդմ, | յԱյդմանէ. | յԱյդց, | յԱյդցանէ։ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո· | Այն· | ան, անի· | Այնք, | Այնոքիկ· |
| Ս· | Այնր, | Այնորիկ· | Այնց, | Այնոցիկ· |
| Գ· | Այնու, | Այնուիկ· | Այնու, | Այնոքիւք· |
| Հ· | զԱյն· | | զԱյնս, | զԱյնոսիկ· |
| Տ· | Այնմ, | Այնմիկ. | Այնց, | Այնոցիկ· |
| Բ· | յԱյնմ, | յԱյնմանէ. | յԱյնց, | յԱյնցանէ։ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո· | Սոյն· | աս· | Սոքին· | ասոնք· |
| Ս· | Սորին· | | Սոցին· | |
| Գ· | Սովին. | | Սովիմբք· | |
| Հ· | զՍոյն· | | զՍոսին· | |
| Տ· | Սմին· | | Սոցին· | |
| Բ· | իՍմին· | | իՍոցունց։ | |

## Ասոր նման կը հոլովին,

Դոյն, ատ, դորին, դովին, զդոյն, դմին, ի դմին· Դոքին, դոցին, դովիմբք, զդոսին, դոցին, ի դոցունց։

Նոյն, ան, նորին, նովին, զնոյն, նմին, ի նմին· Նոքին, նոցին, նովիմբք, զնոսին, նոցին, ի նոցունց։

## ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

71. Ես, Դու՝ եական դերանուններուն եզակի և յոգնակի սեռականները Իմ, Քո, Մեր, Ձեր, և Իւր եզակին՝ Ստացական դերանուն կ'ըլլին, և ածական են. ու այսպէս կը հոլովին,

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո· | Իմ· | իմս· | Իմք· | իմինները· |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ս. | Իմոյ· | իմինիս· | Իմոց· | իմիններուս· |
| Գ. | Իմով· | իմինովս· | Իմովք· | իմիններովս· |
| Հ. | զԻմ· | իմս· | զԻմս· | իմիններս· |
| Տ. | Իմում· | իմինիս· | Իմոց· | իմիններուս· |
| Բ. | յԻմմէ· | իմինէս· | յԻմոց· | իմիններէս: |

Քո, քուկդ, քոյ, քուկինիդ, քով, զքո, քում, քումմէ. Քոյք, քուկիններդ, քոց, քովք, զքոյս, քոց, ի քոց:

Մեր, մերը, մերոյ, մերինին, մերով, զմեր, մերում, ի մերմէ. Մերք, մերինները, մերոց, մերովք, զմերս, մերոց, ի մերոց:

Ձեր, ձերը, ձերոյ, ձերինին, ձերով, զձեր, ձերում ի ձերմէ. Ձերք, ձերինները, ձերոց, ձերովք, զձերս, ձերոց, ի ձերոց:

Իւր, իրը, իւրոյ, իրենին, իւրով, զիւր, իւրում յիւրմէ. Իւրք, իրենները, իւրոց, իւրովք, զիւրս, իւրոց, յիւրոց:

### ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

72. Որ, Ո կ'ըսուի Յարաբերական դերանուն, և գոյական է. ու կը հոլովի այսպէս,

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Որ· | որ· | Որք· | որոնք· |
| Ս. | Որոյ· | որուն· | Որոց· | որոնց· |
| Գ. | Որով· | որով· | Որովք· | որոնցմով· |
| Հ. | զՈր· | որ· | զՈրս· | որոնք· |
| Տ. | Որում· | որուն· | Որոց· | որոնց· |
| Բ. | յՈրմէ· | որմէ· | յՈրոց· | որոնցմէ: |

Որ ածական ալ կ'ըլլայ եւ կը նշանակէ որ, հանկը· ատոր հոլովումն ալ մի եւ նոյնն է:



73. Էական, Ցուցական և Ստացական դերանուններու այն ունեցող երեք գրեր կան Ս, Դ, Ն, որոնց Դիմորոշ յօդ կ'ըսուի: Ս՝ առաջին դէմք կը ցուցնէ, Դ՝ երկրորդ դէմք, Ն՝ երրորդ դէմք:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ՆԱԽԴԻՐ

74. Թէ անուններուն և թէ դերանուններուն գրաբար հոլովմանց մէջ տեսանք որ Հայցական հոլովները Զ գիր մը, և բացառական հոլովներն ալ Ի կամ Յ գրերը կ'առնէին: Այս Զ, Ի, Յ գրերուն Նախդիր կ'ըսուի. և ոչ միայն Հայցական ու Բացառական հոլովները շինելու կը գործածուին, այլ ուրիշ հոլովներու վրայ ալ դրուելով բառին նշանակութիւնը կը փոխեն. ինչպէս,

75. Զ Նախդիրը գործիականի վրայ դրուելով ուրիշ հոլով մը կը շինէ, որուն պարագայական կ'ըսուի. աշխարհաբարի մէջ ալ նշանակութիւն կ'ունենայ բոլորտիքը կամ վրան (տճ. էթրաֆընտա կամ իւսթիւնտէ). ինչպէս,

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ե. Գ. | Բանտիւ. | Ե. Պ. | զԲանտիւ. | բանտին բոլորտիքը· |
| Յ. » | Բանտիւք. | Յ. » | զԲանտիւք. | բանտերուն » |
| Ե. » | Քաղաքաւ. | Ե. » | զՔաղաքաւ. | քաղաքին » |
| Յ. » | Քաղաքօք. | Յ. » | զՔաղաքօք. | քաղաքներուն » |

Այսպէս իմացիր միւս բոլոր կանոնաւոր եւ ան-
կանոն հոլովմանց եւ դերանուանց համար. Արամբ,
զԱրամբ. Նմա, զՆմա. Միով, զՄիով. Ինեւ, զԻնեւ.
Նոքօք, զՆոքօք. եւն.

76. Զ նախդրով ուրիշ հոլով մ'ալ կը շին-
ուի, որ պատմական կ'ըսուի. բացառականին է կամ
յ նախդիրը առնելով, տեղը զ կը դրուի. աշ-
խարհաբարի մէջ ալ նշանակութիւն կ'ունենայ
վրայօք կամ համար (տճ. Էօնէրէ). ինչպէս,

Ե. Բ. ի Բանտէ. Ե. Պատ. զԲանտէ. Բանտէն վրայօք.
Յ. » ի Բանտից. Յ. » զԲանտից. Բանտերէն »

Այսպէս իմացիր միւս ամէն հոլովմանց եւ դե-
րանուանց համար. յԱռնէ, զԱռնէ. ի Քերց, զՔերց.
յԵրկրորդաց, զԵրկրորդաց. ի Ձէնջ, զՁէնջ. եւն.

77. Ի կամ Յ նախդիրներով ուրիշ հոլով
մ'ալ կը շինուի, որ նախդրաւոր տրական կ'ըսուի.
հայցականին զ նախդիրն առնելով, տեղը ի կամ
յ կը դրուի. աշխարհաբարի մէջ հոլովմանց կար-
գը դրուած տրականին (որ վերջահոլով տրական կ'ըս-
ուի) նշանակութիւնը կ'ունենայ. ինչպէս,

Ե. Հ. զԲանտ. Ե. Նխդ. Տ. ի Բանտ. Բանտը.
Յ. » զԲանտս. Յ. » ի Բանտս. Բանտերը.

Այսպէս իմացիր միւս ամէն հոլովմանց եւ դե-
րանուանց համար. զՏիկին, ի Տիկին. զՏիկնայս, ի Տիկ-
նայս. զԻս, յԻս. զՁեզ, ի Ձեզ. զՆա, ի Նա. զՍոսին,
ի Սոսին. եւն.

78. Ց. ԱՌ. ԸՆԴ. ԸՍՏ. առնք ալ նախդիր
են, և նախդրաւոր տրական հոլով կը շինեն. ինչպէս,
ցնոսա. առ նոսա. ընդ նոսա. ըստ նոսա. եւն.



79. Ներգոյական ըսուած հոլով մ'ալ ու-
նինք, որ գրաբարի մէջ միեւնոյն նախդրիւ տը-
րականն է. իսկ աշխարհաբարի մէջ նշանակու-
թիւնը կ'ըլլայ մէջ կամ վրայ. ինչպէս,

Ե. Նխդ. Տր. ի Բանտ. Ե. Ներգ. ի Բանտ. Բանտի մէջ.
Յ. » » ի Բանտս. Յ. » ի Բանտս. Բանտերու մէջ:

Այսպէս իմացիր բոլոր նախդրիւ տրական
ըսուած հոլովներուն համար. ամէնքը ներգո-
յական ալ կ'ըսուին, նշանակութեան փոփո-
խութեամբը, որ խօսքին կարգէն կրնայ հաս-
կըցուիլ:

80. Եզակիի մէջ ներգոյականը յատուկ ձեւ
մ'ալ ունի, որ շատ գործածական է. եզակի Տրա-
կանին (վերջահոլով տրական) վրայ ի կամ յ դը-
նելով, եզակի ներգոյական կ'ըլլայ. ինչպէս,

Ե. Տր. Բանտի. Ե. Ներգ. ի Բանտի. Բանտի մէջ.
» » Քաղաքի. » » ի Քաղաքի. Քաղաքի մէջ.
» » Ժամու. » » ի Ժամու. Ժամուն մէջ:

81. Միայն Գետ, Բարի, Հայկ հոլովմունք-
ները եզակի տրականէն շինուած եզակի ներ-
գոյական չեն կրնար ունենալ. վասն զի տրակա-
նին վրայ ի կամ յ դնելով, բացառական կ'ըլլան
առանց ուրիշ փոփոխութեան. Տր. Գետոյ, Բց. ի
Գետոյ. Տր. Բարւոյ, Բց. ի Բարւոյ. Տր. Հայկայ,
Բց. ի Հայկայ: Ուստի այս հոլովմանց եզակի նախ-
դրիւ տրականը ներգոյականի գործածութիւնը
միշտ կը պահէ. Նխդ. տր. ի Գետ, Ներգ. ի Գետ.
Նխդ. տր. ի Բարի, Ներգ. ի Բարի. Նխդ. տր. ի
Հայկ. Ներգ. ի Հայկ:

82. Իսկ Նախադրութիւն կ'ըսուին այն բառերը, որ հոլովով մը կը բանին, ու գործողութեան մէկ պարագան, այսինքն տեղը, պատճառը, կերպը են կը ցուցնեն. ասոնցմէ խիստ գործածականներն ասոնք են.

Յետ, ետքը։ Առանց, առանց։ Իբրև, Որպէս, պէս։ Քան, նել կամ վեր։ Մինչ, մինչև։ Բաց, դուրս։ Զատ, զատ։ Կողմ, կոյս, դէպ, դին։ Վասն, Սակս, Ի սակս, Յաղագս, համար։ Ի վերայ, վրայ։ Զկնի, Զհետ, ետևէն։ Առաջի, առջև։ Ընթեր, Առընթեր, քով։ Յանդիման, Հանդէպ, դիմաց։ Ներքոյ, ի Ներքոյ, տակը։ Հանդերձ, հետ, մէկտեղ։

Ասոնց գործածութեան վրայ Երկրորդ մասին մէջ պիտի խօսինք։

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

## ԲԱՅ

83. Բայ կ'ըսուին այն բառերը, որոնք ընել կամ ըլլալ կը նշանակեն։

84. Բայերը երկու տեսակ են, Ներգործական և Չէզոք։ Ներգործական են ընել ցուցնող բայերը, որոնք գործողութեան առարկայ մ'ունին. ինչպէս, ցեանել. խմանալ։ Չէզոք են ըլլալ ցուցնող բայերը, որոնք գործողութեան առարկայ չունին. ինչպէս, Նստիլ, Մեռնիլ։

85. Բայերն ունին Թիւ, Դէմք, Եղանակ, Ժամանակ և Խոնարհում։



86. Թիւն՝ Եզակին և Յոգնակին է։

87. Դէմքը Դերանուան պէս երեք է. Առաջին, Երկրորդ, Երրորդ։

88. Եղանակն ալ երեք է. Սահմանական, որ գործողութիւնը իբր ստոյգ և հաստատուն կը պատմէ։ Հրամայական, որ կը հրամայէ կամ կ'արգիլէ։ Ստորադասական, որ գործողութիւնը կախ կը թողու, և կը ցուցնէ թէ ուրիշ եղանակով մը պիտի լմնայ։

89. Ժամանակն ալ երեք է, Ներկայ՝ որ հիմակուանը կը ցուցնէ, Անցեալ՝ անցածը, Ապառնի՝ գալիքը։ Անցեալն ալ երկու է, Անցեալ անկատար. Անցեալ կատարեալ։

90. Բայերը թիւ, դէմք, եղանակ, ժամանակ ցուցնելու համար իրենց վերջաւորութիւնը կը փոխեն. այս փոփոխութեանը Խոնարհում կ'ըսուի։ Ամէն բայ միևնոյն կերպով չխոնարհիր. գլխաւոր ութ կերպ կանոնաւոր խոնարհմունք կայ, չորս լծորդութեանց և անոնց հետևորդ օրինակաց համեմատ, որոնք են ԵՄ, անեմ, ԻՄ, անիմ, ԱՄ, անամ, ՈՒՄ, նում։

91. Երեք դերբայներ ալ կան, Անորոշ, Անցեալ, Ապառնի. որ խոնարհմանց կարգին կ'երևան, բայց դէմք չունին։

92. Նախ պիտի դնենք ութը կանոնաւոր խոնարհմանց օրինակները, և յետոյ Արտաքի խոնարհում ունեցող բայերը։

## ՈՒԹԸ ԿԱՆՈՆԱՒՈՐ ԽՈՆԱՐՀՄՈՒՆՔ

### *Ա. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ* – ԵՄ

### 93. ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

*Ներգործական* ***ՍԻՐԵՄ***, *արմատ* ՍԷՐ, ՍԻՐԵԱՑ։

#### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

*Ներկայ*

| Եզ. Գր. | Եզ. Աշխ. | Յոգ. Գր. | Յոգ. Աշխ. |
|---|---|---|---|
| Սիր-եմ. | կը Սէր-էմ. | Սիր-եմք. | կը Սէր-էնք. |
| Սիր-ես. | կը Սէր-էս. | Սիր-էք. | կը Սէր-էք. |
| Սիր-է. | կը Սէր-է. | Սիր-են. | կը Սէր-էն։ |

*Անցեալ անկատար.*

| | | | |
|---|---|---|---|
| Սիր-էի. | կը Սէր-էի. | Սիր-էաք. | կը Սէր-էինք. |
| Սիր-էիր. | կը Սէր-էիր. | Սիր-էիք. | կը Սէր-էիք. |
| Սիր-էր. | կը Սէր-էր. | Սիր-էին. | կը Սէր-էին։ |

*Անցեալ կատարեալ.*

| | | | |
|---|---|---|---|
| Սիր-եցի. | Սէր-եցի. | Սիր-եցաք. | Սէր-եցինք. |
| Սիր-եցեր. | Սէր-եցիր. | Սիր-եցէք. | Սէր-եցիք. |
| Սիր-եաց. | Սէր-եց. | Սիր-եցին. | Սէր-եցին։ |

*Ապառնի.*

| | | | |
|---|---|---|---|
| Սիր-եցից. | (պիտի) Սէր-եմ. | Սիր-եսցուք. | Սէր-ենք. |
| Սիր-եսցես. | Սէր-ես. | Սիր-եսջիք. | Սէր-էք. |
| Սիր-եսցէ. | Սէր-է. | Սիր-եսցեն. | Սէր-են։ |

#### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Սիր-եա. | Սէր-է. | Սիր-եցէք. | Սէր-եցէք. |
| Մի Սիր-եր. | Մի Սէր-եր. | Մի Սիր-էք. | Մի Սէր-էք։ |



#### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Սիր-իցեմ, | (թէոր) Սէր-եմ. | Սիր-իցեմք. | Սէր-ենք. |
| Սիր-իցես. | Սէր-ես. | Սիր-իցէք. | Սէր-էք. |
| Սիր-իցէ. | Սէր-է. | Սիր-իցեն. | Սէր-են։ |

| | | |
|---|---|---|
| ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. | Սիր-ել. | Սէր-ել |
| ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. | Սիր-եալ. | Սէր-ած։ |
| ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. | Սիր-ելոց. | Սէր-ելու։ |

---

### 94. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

*Ներգ.* ***ՀԱՏԱՆԵՄ***, *արմատ* ՀԱՏ։

#### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| Ներկայ. | | Անցեալ անկատար, | |
|---|---|---|---|
| Հատ-անեմ. | Հատ-անեմք. | Հատ-անէի. | Հատ-անէաք. |
| Հատ-անես. | Հատ-անէք. | Հատ-անէիր. | Հատ-անէիք. |
| Հատ-անէ. | Հատ-անեն։ | Հատ-անէր. | Հատ-անէին։ |

| Անցեալ կատարեալ. | | Ապառնի. | |
|---|---|---|---|
| Հատ-ի. | Հատ-աք. | Հատ-ից. | Հատ-ցուք. |
| Հատ-եր. | Հատ-էք. | Հատ-ցես. | Հատ-ջիք. |
| Հատ, եհատ. | Հատ-ին։ | Հատ-ցէ. | Հատ-ցեն։ |

| ՀՐՄ. ԵՂ. | | ՍՏՐ. ԵՂ. | |
|---|---|---|---|
| Հատ. | Հատ-էք. | Հատ-անիցեմ. | Հատ-անիցեմք. |
| Մի Հատ-ա- | Մի Հատ-ա- | Հատ-անիցես. | Հատ-անիցէք. |
| ներ. | նէք։ | Հատ-անիցէ. | Հատ-անիցեն։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. Հատ-անել. Կտրել (1)։

---

1. Հատանելին աշխարհաբար գործածութիւնն է կտրել. կը կտրեմ, կտրեցի, կտրէ, կը Սիրեմին պէս կը խոնարհի։

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Հատ-եալ. Կտրած։

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Հատ-անելոց. Կտրելու։

---

## Բ. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ – ԻՄ

### 95. ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

Ներգ. *ԽՕՍԻՄ*, արմատ ԽՕՍ, ԽՕՍԵԱՑ։

#### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| խօս-իմ. | կը խօս-իմ. | խօս-իմք. | կը խօս-ինք. |
| խօս-իս. | կը խօս-իս. | խօս-իք. | կը խօս-իք. |
| խօս-ի. | կը խօս-ի. | խօս-ին. | կը խօս-ին։ |

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| խօս-էի. | կը խօս-էի. | խօս-էաք. | կը խօս-էինք. |
| խօս-էիր. | կը խօս-էիր. | խօս-էիք. | կը խօս-էիք. |
| խօս-էր. | կը խօս-էր. | խօս-էին. | կը խօս-էին։ |

Անցեալ կատարեալ.

| | | | |
|---|---|---|---|
| խօս-եցայ. | խօս-եցայ. | խօս-եցաք. | խօս-եցանք. |
| խօս-եցար. | խօս-եցար. | խօս-եցայք. | խօս-եցաք. |
| խօս-եցաւ. | խօս-եցաւ. | խօս-եցան. | խօս-եցան։ |

Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| խօս-եցայց. (պիտի) խօս-իմ. | | խօս-եսցուք. | խօս-ինք. |
| խօս-եսցիս. | խօս-իս. | խօս-եսջիք. | խօս-իք. |
| խօս-եսցի. | խօս-ի. | խօս-եսցին. | խօս-ին։ |



#### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| խօս-եաց. | խօս-է. | խօս-եցարուք. | խօս-եցէք. |
| Մի խօս-իր. | Մի խօս-իր. | Մի խօս-իք. | Մի խօս-իք։ |

#### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| խօս-իցիմ. (թէոր) խօս-իմ. | | խօս-իցիմք. | խօս-ինք. |
| խօս-իցիս. | խօս-իս. | խօս-իցիք. | խօս-իք. |
| խօս-իցի. | խօս-ի. | խօս-իցին. | խօս-ին։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. խօս-ել. խօս-իլ։

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. խօս-եալ. խօս-ած։

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. խօս-ելոց. խօս-ելու։

### 96. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

Ներգ. *ՈՒՍԱՆԻՄ*, արմատ ՈՅՍ։

#### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Ուս-անիմ. | կ'Ուս-անիմ. | Ուս-անիմք. | կ'Ուս-անինք. |
| Ուս-անիս. | կ'Ուս-անիս. | Ուս-անիք. | կ'Ուս-անիք. |
| Ուս-անի. | կ'Ուս-անի. | Ուս-անին. | կ'Ուս-անին։ |

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Ուս-անէի. | կ'Ուս-անէի. | Ուս-անէաք. | կ'Ուս-անէինք. |
| Ուս-անէիր. | կ'Ուս-անէիր. | Ուս-անէիք. | կ'Ուս-անէիք. |
| Ուս-անէր. | կ'Ուս-անէր. | Ուս-անէին. | կ'Ուս-անէին։ |

Անցեալ կատարեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Ուս-այ. | Ուս-այ. | Ուս-աք. | Ուս-անք. |

| | | | |
|---|---|---|---|
| Ուս–ար· | Ո——ար· | Ուս–այք· | Ո——աք· |
| Ուս–աւ· | Ո——աւ. | Ուս–ան· | Ո——ան։ |

Ապառնի ·

| | | | |
|---|---|---|---|
| Ուս–այց·(պէտք) | Ո——անեմ· | Ուս–ցուք· | Ո——անենք· |
| Ուս–ցիս· | Ո——անես· | Ուս–ջիք· | Ո——անէք· |
| Ուս–ցի· | Ո——անէ· | Ուս–ցին· | Ո——անեն։ |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Ուս–իր· | Ո——է՛· | Ուս–արուք· | Ո——էք· |
| Մի Ուս–անիր· | Մէ Ո——անէր· | Մի Ուս–անիք· | Մէ Ո——անէք։ |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Ուս–անիցիմ·(ենթ) | Ո——անեմ· | Ուս–անիցիմք· | Ո——անենք· |
| Ուս–անիցիս· | Ո——անես· | Ուս–անիցիք· | Ո——անէք· |
| Ուս–անիցի· | Ո——անէ· | Ուս–անիցին· | Ո——անեն։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ· Ուս–անել· Ո——անել։

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ· Ուս–եալ· Ո——ած։

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ· Ուս–անելոց· Ո——անելու։

---

## Գ· ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ – ԱՄ

### 97· ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

Ներգ· *ԱՂԱՄ*, արմատ ԱՂ, ԱՂԱՅ։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ·

| | | | |
|---|---|---|---|
| Աղ–ամ· | Կ'Աղ–ամ· | Աղ–ամք· | Կ'Աղ–անք· |
| Աղ–աս· | Կ'Աղ–աս· | Աղ–այք· | Կ'Աղ–աք· |
| Աղ–այ· | Կ'Աղ–այ· | Աղ–ան· | Կ'Աղ–ան։ |



Անցեալ անկատար·

| | | | |
|---|---|---|---|
| Աղ–այի· | Կ'Աղ–այի· | Աղ–այաք· | Կ'Աղ–այինք· |
| Աղ–այիր· | Կ'Աղ–այիր· | Աղ–այիք· | Կ'Աղ–այիք· |
| Աղ–այր· | Կ'Աղ–ար· | Աղ–ային· | Կ'Աղ–ային։ |

Անցեալ կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Աղ–ացի· | Աղ–ացի· | Աղ–ացաք· | Աղ–ացինք· |
| Աղ–ացեր· | Աղ–ացիր· | Աղ–ացէք· | Աղ–ացիք· |
| Աղ–աց· | Աղ–աց· | Աղ–ացին· | Աղ–ացին։ |

Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Աղ–ացից·(պէտք) | Աղ–ամ. | Աղ–ասցուք· | Աղ–անք· |
| Աղ–ասցես· | Աղ–աս. | Աղ–ասջիք· | Աղ–աք· |
| Աղ–ասցէ· | Աղ–այ· | Աղ–ասցեն· | Աղ–ան։ |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Աղ–ա· | Աղ–ա· | Աղ–ացէք· | Աղ–ացէք· |
| Մի Աղ–ար· | Մէ Աղ–ար· | Մի Աղ–այք· | Մէ Աղ–աք։ |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Աղ–այցեմ·(ենթ) | Աղ–ամ· | Աղ–այցեմք· | Աղ–անք· |
| Աղ–այցես· | Աղ–աս· | Աղ–այցէք· | Աղ–աք· |
| Աղ–այցէ· | Աղ–այ· | Աղ–այցեն· | Աղ–ան։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ· Աղ–ալ· Աղ–ալ։

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ· Աղ–ացեալ· Աղ–ացած։

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ· Աղ–ալոց· Աղ–ալու։

---

## 98. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

Ներգ. *ՍՏԱՆԱՄ*, *արմատ* ՍՏԱՑ:

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Ստ-անամ. | կը Ստ—անամ. | Ստ-անամք. | կը Ստ—անանք. |
| Ստ-անաս. | կը Ստ—անաս. | Ստ-անայք. | կը Ստ—անաք. |
| Ստ-անայ. | կը Ստ—անայ. | Ստ-անան. | կը Ստ—անան: |

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Ստ-անայի. | կը Ստ—անայի. | Ստ-անայաք. | կը Ստ—անայինք. |
| Ստ-անայիր. | կը Ստ—անայիր. | Ստ-անայիք. | կը Ստ—անայիք. |
| Ստ-անայր. | կը Ստ—անար. | Ստ-անային. | կը Ստ—անային: |

Անցեալ կատարեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Ստ-ացայ. | Ստ—ացայ. | Ստ-ացաք. | Ստ—ացանք. |
| Ստ-ացար. | Ստ—ացար. | Ստ-ացայք. | Ստ—ացաք. |
| Ստ-ացաւ. | Ստ—ացաւ. | Ստ-ացան. | Ստ—ացան: |

Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| Ստ-ացայց. (պիտի) | Ստ—անամ. | Ստ-ասցուք. | Ստ—անանք. |
| Ստ-ասցիս. | Ստ—անաս. | Ստ-ասջիք. | Ստ—անաք. |
| Ստ-ասցի. | Ստ—անայ. | Ստ-ասցին. | Ստ—անան: |

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Ստ-ացիր. | Ստ—ացիր. | Ստ-ացարուք. | Ստ—ացէք. |
| Մի Ստ-անար. | Մի Ստ—անար. | Մի Ստ-անայք. | Մի Ստ—անաք: |

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Ստ-անայցեմ. (Թէ որ) | Ստ—անամ. | Ստ-անայցեմք | Ստ—անանք. |
| Ստ-անայցես. | Ստ—անաս. | Ստ-անայցէք. | Ստ—անաք. |
| Ստ-անայցէ. | Ստ—անայ. | Ստ-անայցեն. | Ստ—անան: |



| | | |
|---|---|---|
| ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ. | Ստ-անալ. | Ստ—անալ: |
| ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. | Ստ-ացեալ. | Ստ—ացած: |
| ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. | Ստ-անալոց. | Ստ—անալու: |

---

## Դ. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ — ՈՒՄ

## 99. ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

Ներգ. *ԶԵՆՈՒՄ*, *արմատ* ԶԵՆ:

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| Ներկայ. | | Անկատար. | |
|---|---|---|---|
| Զեն-ում. | Զեն-ումք. | Զեն-ուի. | Զեն-ուաք. |
| Զեն-ուս. | Զեն-ուք. | Զեն-ուիր. | Զեն-ուիք. |
| Զեն-ու. | Զեն-ուն: | Զեն-ոյր. | Զեն-ուին: |

| Անցեալ կատարեալ. | | Ապառնի. | |
|---|---|---|---|
| Զեն-ի. | Զեն-աք. | Զեն-ից. | Զեն-ցուք. |
| Զեն-եր. | Զեն-էք. | Զեն-ցես. | Զեն-ջիք. |
| Զեն, եզեն. | Զեն-ին: | Զեն-ցէ. | Զեն-ցեն: |

| ՀՐԱՄ. ԵՂ. | | ՍՏՈՐ. ԵՂ. | |
|---|---|---|---|
| Զեն. | Զեն-էք. | Զեն-ուցում. | Զեն-ուցումք. |
| Մի Զեն-ուր. | Մի Զեն-ուք: | Զեն-ուցուս. | Զեն-ուցուք. |
| | | Զեն-ուցու. | Զեն-ուցուն: |

| | | |
|---|---|---|
| ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ. | Զեն-ուլ. | Մորթել:(1) |
| ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. | Զեն-եալ. | Մորթած: |
| ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. | Զեն-լոց. | Մորթելու: |

---

1. Զենուլին աշխարհաբար գործածութիւնն է Մորթել կը մորթեմ մորթեցի, մորթէ. եւ Սիրեմին պէս կը խոնարհի:

## 100. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

Ներգ. ԶԳԵՆՈՒՄ, *արմատ* ԶԳԵԱՑ, ԶԳԵՑԱՒ։

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| Ներկայ. | | Անկատար. | |
|---|---|---|---|
| Զգե-նում. | Զգե-նումք. | Զգե-նուի. | Զգե-նուաք. |
| Զգե-նուս. | Զգե-նուք. | Զգե-նուիր. | Զգե-նուիք. |
| Զգե-նու. | Զգե-նուն։ | Զգե-նոյր. | Զգե-նուին։ |

| Անցեալ կատարեալ | | Ապառնի. | |
|---|---|---|---|
| Զգեց-այ. | Զգեց-աք. | Զգեց-այց. | Զգեց-ցուք. |
| Զգեց-ար. | Զգեց-այք. | Զգեց-ցիս. | Զգեց-ջիք. |
| Զգեց-աւ. | Զգեց-ան։ | Զգեց-ցի. | Զգեց-ցին։ |

| ՀՐՄ. ԵՂ. | | ՍՏՈՐ. ԵՂ. | |
|---|---|---|---|
| Զգեց-իր. | Զգեց-արուք. | Զգե-նուցում | Զգե-նուցումք. |
| Մի Զգե-նուր. | Մի Զգե-նուք. | Զգե-նուցուս | Զգե-նուցուք. |
| | | Զգե-նուցու. | Զգե-նուցուն։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. Զգե-նուլ. Հագնիլ (1)
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Զգեց-եալ. Հագած։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Զգե-նլոց. Հագնելու։

---

1 Զգենուլին աշխարհաբար գործածութիւնն այ Հագնիլ է. կը հագնիմ. հագայ. հագիր. Ուտեմին պէս կը խոնարհի։ Աշխարհաբարի մէջ ամ. նամ վերջաւորութեամբ բայի խոնարհում չկայ. տես Գիտելեաց մէջ (120 Զ. Է.)։



## 101. Ութը խոնարհմանց կատարեալն (1)

1. Ա. Կատարեալ յոգ. երկրորդ դէմք կ'ըլլայ նաև, Սիրեցէք. Հատէք. Խօսեցարուք. Ուսարուք. Աղացէք. Ստացարուք. Զենէք. Զգեցարուք։

Բ. Հատանեմի և Զենումի վրայ խոնարհող բայերը երբ միավանկ և բաղաձայնով սկսուած արմատ ունենան կատարեալ եզ. երրորդ դէմքը կ'ըլլայ էհատ, էզեն. երբ ձայնաւորով միավանկ արմատ ըլլայ, է կ'առնէ, Արկանեմ. Էարկ. Ածանեմ, Էած։ Բազմավանկ արմատներուն վրայ գիր աւելցնել չըլլար. Ընծանեմ, կատարեալ եզ. Գ. դէմք կ'ըլլայ Ընծեց, և ոչ էընծեց. Յաւելում, Յաւել և ոչ էյաւել կամ էյաւել։

Գ. Հատանեմի և Զենումի վրայ խոնարհող բայերուն արմատը կատարեալ եզ. Գ. դէմք և հրամայական ըլլալով, բուն արմատին գրերով կ'ըլլան, ինչպես, Տանեմ, կատ. և հրմ. Տար կ'ըլլայ. և ոչ մտ. Մուծանեմ՝ Մոյծ, և ոչ մուծ։ Այսպես շատ բայեր արմատին վրայ լծորդուած չեն, լծորդը հանելէ ետքը մնացածին վրայ ուրիշ գիր կամ մասնիկ աւելցնելով գործածական արմատնին կ'երևայ. ինչպես, Սպանանեմ, արմատ՝ Սպան. Սպանումն. Խորհիմ, արմատ՝ Խորհ. Խորհուրդ. և այլն։

Դ. Ամէն բայի ապառնի յոգ. Բ. դէմքերը յոգ. հրամայական ալ կրնան ըլլալ. ինչպես, Սիրեսջիք. Հատջիք. Խօսեսջիք, և այլն։ Ասոնց ք գիրը չի փոխելով եզ. հրամայական ալ կ'ըլլայ, ինչպես, Սիրեսջիր. Հատջիր. Խօսեսջիր. և այլն։

Ե. Ամէն բայ ապառնի եզ. Ա. դէմք և յոգ. Ա. և Բ. դէմքերու ուրիշ խոնարհում մ'ալ ունին. ինչպես, Սիրեցից՝ Սիրեսցեմ. Սիրեսցեմք, Սիրեսցէք. Հատից՝ Հատցեմ. Հատցեմք, Հատցէք. Խօսեցայց՝ Խօսեսցիմ. Ուսայց՝ Ուսցիմ, Աղացից՝ Աղասցեմ. Ստացայց՝ Ստասցիմ. Զենից՝ Զենցեմ. Զգեցայց՝ Զգեցցիմ։

ու Հրամայականը մէկ պատկերի մը վրայ տեսնելով, իրարմէ տարբերութիւննին դիւրաւ կ՚ըմբռնուի . ինչպէս ,

| | | | |
|---|---|---|---|
| Եմ. | ՍիրԵՄ, | սիրԵՑԻ, | սիրԵԱ. |
| Անել. | ՀատԱՆԵՄ, | հատԻ, | հատ. |
| Իմ. | ԽօսԻՄ, | խօսԵՑԱՅ, | խօսԵԱՅ. |
| Անիլ. | ՈւսԱՆԻՄ, | ուսԱՅ, | ուսԻՐ. |
| Ամ. | ԱղԱՄ, | աղԱՑԻ, | աղԱ. |
| Անալ. | ՍտԱՆԱՄ, | ստԱՑԱՅ, | ստԱՑԻՐ. |
| Ուլ. | ԶենՈՒՄ, | զենԻ, | զեն. |
| Նուլ. | ԶգեՆՈՒՄ, | զգեցԱՅ, | զգեցԻՐ: |

102. Ամէն բայ՝ թէ Ներգործական և թէ Չէզոք, որ արմատին վրայ եմ կը վերջաւորի, Սիրեմին պէս կը խոնարհին .

Ն. Գործեմ. գործեցի. գործեա՛:

Չ. Ժամանեմ. ժամանեցի. ժամանեա՛:

103. Արմատին վրայ անեմ վերջաւորածները Հատանեմին պէս.

Ն. Տեսանեմ. տեսի. տե՛ս:

Չ. Ելանեմ. ելի. ե՛լ:

104. Արմատին վրայ իմ վերջաւորածները՝ Խօսիմին պէս .

Ն. Դատիմ. դատեցայ. դատեա՛ց:

Չ. Աշխատիմ. աշխատեցայ. աշխատեա՛ց:

105. Արմատին վրայ անիմ վերջաւորածները՝ Ուսանիմին պէս.

Ն. Ծնանիմ. ծնայ. ծնի՛ր:

Չ. Մեռանիմ. մեռայ. մեռի՛ր:



106. Արմատին վրայ ամ վերջաւորածները՝ Աղամին պէս.

Ն. Հաւատամ. հաւատացի. հաւատա՛:

Չ. Գնամ. գնացի. գնա՛:

107. Արմատին վրայ անամ վերջաւորածները՝ Ստանամին պէս.

Ն. Գողանամ. գողացայ. գողացիր:

Չ. Հեռանամ. հեռացայ. հեռացիր:

108. Արմատին վրայ ում վերջաւորածները Զենումին պէս.

Ն. Թողում. թողի. թո՛ղ:

Չէզոք բայ չկայ այս լծորդութեան վրայ խոնարհելի:

109. Արմատին վրայ նում վերջաւորածները՝ Զգենումին պէս.

Ն. Ընթեռնում. ընթերցայ. ընթերցի՛ր:

Չ. Զբօսնում. զբօսայ. զբօսի՛ր:

110. Այս ընդհանուր կանոնէն կը խոտորին:

Ա. Ածեմ, Բերեմ, Հանեմ, Հեղուսեմ բայերը, որ եմ կը վերջաւորին, բայց անեմին, այսինքն Հատանեմին պէս կը խոնարհին. Ածի, ածից, ած. Բերի, բերից, բեր. Հանի, հանից, հան. Հեղուսի, հեղուսից, հեղոյս. եւ չըսուիր Ածեցի, Բերեցի, Հանեցի, Հեղուսեցի, եւայլն:

Բ. Ասեմ, Գիտեմ, Կարեմ, Մարթեմ բայերը, որոնց կատարեալն, ապառնին, հրամայականը եւ անցեալ դերբայը, Աղամին վրայ կը խոնարհին. ինչպէս,

| | | |
|---|---|---|
| Կատ. | Ասացի. | Ասացաք. |
| | Ասացեր. | Ասացէք. |

Ասաց· Ասացին։

Ապռ. Ասացից· Ասասցուք·
Ասասցես. Ասասջիք·
Ասասցէ. Ասասցեն։

Հրմ. Ասա· Ասացէք·
Մի Ասեր· Մի Ասէք։

Անց. Դ. Ասացեալ·

Այսպէս կը խոնարհին

Գիտեմ, գիտացի, գիտա, գիտացեալ·
Կարեմ, կարացի, կարացից, (կարացիր)·
Մարթեմ, մարթացի, մարթացից, (մարթացիր)։

Գ. Հարկանեմ՝ կը խոնարհի Հատանեմին պէս. բայց կ գիրն ալ դուրս ձգուելով, կտր. Հարի, եւ ոչ հարկի. հրմ. Հար կ'ըլլայ եւ ոչ հարկ։

Դ. Նստիմ, Տանիմ, (արմատ տար) բայերը, որ իմ կը վերջաւորին, բայց անիմին, այսինքն Ուսանիմին պէս կը խոնարհին. Նստայ, նստայց· Տարայ, տարայց։ Հրամայականին մէջ ալ կը խոտորին. եզակի՝ Նիստ. Տար. յոգնակի՝ Նստարուք. Տարայք։

Ե. Հոգամ, Ցնծամ, Որսամ, Յուսամ բայերն ալ կատարեալի եւ ապառնիի մէջ անամին, այսինքն Ստանամին պէս կը խոնարհին. Հոգացայ, հոգացայց. Ցնծացայ, ցնծացայց, եւն. հրամայականի մէջ ըստ կանոնի՝ ամ լծորդութեան պէս Հոգա, Ցնծա, եւն։

Զ. Լնում, Խնում, Ընկենում բայերն ալ Զենումին պէս կը խոնարհին. բայց ասոնց արմատը լից, խից, ընկէց ըլլալով Լցի, լցից, լից. Խցի, խցից, խից. Ընկեցի, ընկեցից, ընկեաց, կ'ըլլան. անցեալ դերբայ՝ Լցեալ, Խցեալ, Ընկեցեալ։ Առնում բայն ալ Զենումին պէս կը խոնարհի, ն գիրը կորսնցնելով. Առի, առից, առ, առեալ։



111. Չիմ, նչիմ, նում վերջաւորած եւ ուրիշ քանի մը չէզոք բայեր կան, որ Ուսանիմին պէս կը խոնարհին, բայց քիչ տարբերութեամբ. ինչպէս,

Ս. Ներ. Թաքչիմ եւն։

Անչ. Թաքչէի եւն։

Կտր. Թաքեայ· Թաքեաք·
Թաքեար· Թաքեայք·
Թաքեաւ· Թաքեան։

Ապռ. Թաքեայց· Թաքիցուք·
Թաքիցես· Թաքիջիք·
Թաքիցէ. Թաքիցեն։

Հրմ. Թաքիր· Թաքերուք·
Մի Թաքչիր. Մի Թաքչիք։

ՍՏՈՐ. Թաքչիցիմ եւն։

ԱՆՈՐ. Դ. Թաքչել։

ԱՆՑ. Դ. Թաքուցեալ։

ԱՊՌ. Դ. Թաքչելոց։

Թռչիմ. թռեայ. թռիր։
Փախչիմ. փախեայ. փախիր։
Կորնչիմ. կորեայ. կորիր. (կորուսեալ)։
Մարտնչիմ. մարտեայ. մարտիր։
Մատչիմ. մատեայ. մատիր. (մատերուք, մատիք)։
Թաքնում. թաքեայ. թաքիր։
Փախնում. փախեայ. փախիր։
Ցամնում. ցամեայ. ցամիր։
Զարթնում. զարթեայ. զարթիր. (զարթերուք, զարթիք)։

Քաղցնում. քաղցեայ. քաղցիր. (քաղցեալ)։

Երդնում. երդուայ. երդուիր. (երդուարուք. երդուեալ)։

Յանցանեմ. յանցեայ. յանցիր. (յանցուցեալ, յանցեալ)։

Մեղանչեմ. մեղայ. մեղիր. (մեղարուք. մեղուցեալ)։

112. Կեամ բայն ալ Աղամ ին պէս բայց քիչ մը տարբեր կը խոնարհի.

կեամ. կէի. կեցի. կեցից. կեաց. կեայցեմ. կեալ. կեցեալ. կելոց։

Այսպէս՝ Լամ. լացի. լաց։ Կամ. կացի. կաց՝ կը խոնարհին։

113. Ուցանեմ վերջաւորութեամբ ներգործական կ՚ըլլան ամէն չէզոք բայ. Մեռանիմ, Մեռուցանեմ. Դառնամ, Դարձուցանեմ. Ապրիմ, Ապրեցուցանեմ. Ննջեմ, Ննջեցուցանեմ. Ամրանամ, Ամրացուցանեմ, ևն։ Ասոնց արմատը Մեռոյց, Դարձոյց, Ապրեցոյց են ըլլալով, կատարեալ եզակի երրորդ դէմք կ՚ըլլան. և հրամայականը նոյն արմատին ծայրի յ ց գրերը թողլով կը կազմուի. որով Ցուցանեմ ին պէս կը խոնարհին։ Աշխարհաբարի մէջ ալ չէզոք բայերը ներգործական կ՚ըլլան ցընեմ կամ ցունեմ յանգով. ինչպէս կը Մեռնիմ, կը Մեռցունեմ. կը Քնանամ, կը Քնացընեմ են. ուստի ամբողջ օրինակ մը դնենք թէ գրաբար և թէ աշխարհաբար. վասն զի աշխարհաբարի մէջ ալ փոփոխութիւն կը կրէ. ինչպէս,



Ս. Ներ. Մեռուցանեմ. կը Մեռցունեմ, ևն։

Անկ. Մեռուցանէի, կը Մեռցունէի, ևն։

Կտր. Մեռուցի. Մեռցուցի. Մեռուցաք. Մեռցուցինք.
Մեռուցեր. Մեռցուցիր. Մեռուցէք. Մեռցուցիք.
Մեռոյց. Մեռցուց. Մեռուցին. Մեռցուցին։

Ապռ. Մեռուցից. (պիտի) Մեռցունեմ. Մեռուսցուք։
Մեռուսցես. Մեռուսջիք.
Մեռուսցէ. Մեռուսցեն։

Հրմ. Մեռո. Մեռցու, Մեռուցէք. Մեռցուցէք։
Մեռցուր.

Մի Մեռուցաներ. Մի Մեռուցանէք.
Մի Մեռցուներ. Մի Մեռցունէք։

Ստոր. Մեռուցանիցեմ. (Թէ որ) Մեռցունեմ, ևն։

Դերբ. Մեռուցանել։ Մեռուցեալ։ Մեռուցանելոց։

---

114. Վերը խոնարհմանց կարգին մէջ տեսանք որ միայն հինգ ընդունելութեանց աշխարհաբարները խոնարհուած են. կը Սիրեմ, կը Խօսիմ, կ՚Ուսանիմ, կ՚Աղամ, կը Ստանամ. մէյ մ՚ալ Մեռուցանեմ ին աշխարհաբարը կը Մեռցունեմ որ հիմա տեսանք. ուստի աշխարհաբարի մէջ ընդ ամէնը վեց խոնարհում կայ վեց ընդունելութեամբ, եմ, նեմ. իմ, նիմ. ամ, նամ։

115. Այս վեց խոնարհմանց կատարեալն ու հրամայականը մէկ պատկերի մը վրայ տեսնելով, իրարմէ տարբերութիւնին դիւրաւ կ՚ըմբռնուի. ինչպէս,

Եմ. Կը Սիրեմ. սիրեցի. սիրէ.
Նեմ. Կը Մեռցունեմ. մեռցուցի. մեռցու.
Իմ. Կը Խօսիմ. խօսեցայ. խօսէ.
Նիմ. Կ'Ուսանիմ. ուսայ. ուսիր.
Ամ. Կ'Աղամ. աղացի. աղա.
Նամ. Կը Ստանամ. ստացայ. ստացիր:

116. Աշխարհաբարի մէջ ամէն բայ թէ ներգործական և թէ չէզոք, որ եմ կը վերջաւորին՝ կը Սիրեմին պէս կը խոնարհին.

Ն. կը Գովեմ. գովեցի. գովէ:
Չ. կը Սպասեմ. սպասեցի. սպասէ:

117. Նեմ (ցունեմ կամ ցընեմ) վերջաւորածները՝ որ միայն ներգործական բայ են՝ կը Մեռցունեմին պէս.

Ն. կը Վերցունեմ կամ կը Վերցընեմ. վերցուցի. վերցու կամ վերցուր:
Չ. կը Մացունեմ կամ կը Մացընեմ. մացուցի. մացու կամ մացուր:

118. Իմ (1) վերջաւորածները՝ կը Խօսիմին պէս.

Ն. կը Խորհիմ. խորհեցայ. խորհէ:
Չ. կը Բնակիմ. բնակեցայ. բնակէ:

119. Նիմ վերջաւորածները՝ կ'Ուսանիմ կամ կ'Ուսնիմին պէս.

Ն. կը Ծնանիմ կամ կը Ծնիմ. ծնայ. ծնիր:
Չ. կը Մեռնիմ. մեռայ. մեռիր:

(1) Իմ և նիմ լծորդութեանց տակ խոնարհուող բայերը մեծ մասամբ չէզոք են, ներգործական քիչ կայ:



Կ'Ուսանիմին պէս կը խոնարհին նաև չիմ վերջաւորած չէզոք բայերը.

կը Փախչիմ. փախայ. փախիր:
կը Թռչիմ. թռայ. թռիր:

120. Ամ վերջաւորածները՝ կ'Աղամին պէս.

Ն. կը Բաղձամ. բաղձացի. բաղձա:
Չ. կը Յուսամ. յուսացի. յուսա:

121. Նամ վերջաւորածները՝ կը Ստանամին պէս.

Ն. կը Մոռնամ. մոռցայ. մոռցիր:
Չ. կ'Ամչնամ. ամչցայ. ամչցիր:

122. Այս ընդհանուր կանոնէն քանի մը խոտորումներ կան.

Ա. Քանի մը նեմ վերջաւորած բայեր՝ նիմ վերջաւորածներուն պէս կը խոնարհին. ինչպէս,

Գտնեմ. գտայ. գտիր: Մտնեմ. մտայ. մտիր:
Իջնեմ. իջայ. իջիր: Ելնեմ. ելայ. ելիր, (ել):
Տեսնեմ. տեսայ. տեսիր. (տես):
Հեծնեմ. հեծայ. հեծիր:

Նեմ վերջաւորածները պէտք չէ շփոթել ցունեմ կամ ցընեմ վերջաւորածներուն հետ:

Բ. կը Ցուցընեմ, կը Հարցընեմ (գրաբար Ցուցանեմ, Հարցանեմ. որ ը ի փոխուած է աշխարհաբարի մէջ) սովորաբար կը Մեռցունեմին պէս կը խոնարհին.

Ցուցըցի, ցուցըցիր, ցուցուց. Ցուցըցինք, ցուցըցիք, ցուցըցին. (կամ գրաբարի ձեւ՝ Ցուցի, ցու-

ցիր, ցուցուց. Ցուցինք, ցուցիք, ցուցին)։ Ցուցու. Ցուցըցէք, (կամ՝ Ցոյց. Ցուցէք)։

Հարցուցի, հարցուցիր, հարցուց. Հարցուցինք, հարցուցիք, հարցուցին։ Հարցուր. Հարցուցէք։

Գ. Կը Սկսիմ, կը Փրթիմ, կը Պրծիմ, կը Նստիմ, որ թէեւ իմ կը վերջաւորին, բայց ամին պէս կը խոնարհին. Սկսայ. Սկսէր, (Սկսէ. Սկսեցէք)։ Փրթայ. Փրթէր։ Պրծայ. Պրծէր։ Նստայ. Նստէր, (Նիստ, Նստէ. Նստեցէք)։

Դ. Կը Հանգչիմ, կը Խօսիմին պէս կը խոնարհի. Հանգչեցայ, հանգչէ։

Ե. Կը Մնամ. հրամայականն ըստ կանոնի կ'ըլլայ Մնա, բայց Մնացէք կը գործածուի։

Կ'իյնամ (Կ'ինկնամ), որ թէեւ ամ կը վերջաւորի, բայց իմին պէս կը խոնարհի. Ինկայ. Ինկէր. կամ աւելի աղէկ կերպով, կ'ընկնիմ, որ իմ կը վերջաւորի եւ ըստ այնմ կը խոնարհի. Ընկայ. Ընկէր։

Կը Բանամ, կը Լամ, քիչ խոտորմամբ կը խոնարհին, ամ լծորդութեան պէս. Բացի, Բացիր, Բացաւ. Լացի, Լացիր, Լացաւ. Բաց, Լաց։

Զ. Կ'ընթեռնում, կը Զգենում. ում վերջաւորածներուն պէս կը խոնարհին. Ընթերցայ. Ընթերցէր։ Զգեցայ. Զգեցէր։

Է. Կը Թողում, կ'Առնում. ում վերջաւորութեամբ առանձին խոնարհում ունին։

Ս. Ներ. Կը Թողում, կը Թողուս, կը Թողու. կը Թողունք, կը Թողուք, կը Թողուն։

Անկ. Կը Թողուի, կը Թողուիր, կը Թողուր. կը Թողուինք, կը Թողուիք, կը Թողուին։

Կատ. Թողի, Թողիր, Թողաւ. Թողինք, Թողիք, Թողին. կամ՝ Թողուցի, Թողուցիր, Թողուց. Թողուցինք, Թողուցիք, Թողուցին։



Ապ. Պիտի Թողում, եւն։

ՀՐՄ. Թող, մի Թողուր. Թողէք, մի Թողուք։

ՍՏՈՐ. Թէ որ Թողում, եւն։

ԴԵՐԲ. Թողուլ. Թողած կամ Թողուցած. Թողելու։

Այսպէս կը խոնարհի կ'Առնում. Կատ. Առի, առիր, առաւ. Առինք, առիք, առին։ Հրմ. Առ. Առէք։

---

123. Վերը (84) ըսինք թէ բայերը երկու տեսակ են, Ներգործական և Չէզոք։ Ներգործականը՝ որ ըսել կը նշանակէ, գործողութեան առարկայ մ'ունենալու է, որ ան ալ ըսուի, և է կրաւորական բայը. ըսող մը հարկաւ պէտք ունենայ ըսուողի մը. ուստի ամէն ներգործական բայ ի հարկէ կրաւորական մը պէտք ունենայ. ինչպէս թէ որ ըսեմ կը սիրեմ, հարկաւ բան մը կայ որ կը սիրուի. կը տեսնեմ՝ բան մը կայ որ կը տեսնուի։

124. Արդ՝ ներգործական բայերուն կրաւորականները խոնարհման յատուկ լծորդութիւն չունին. ուստի գիտնալ պէտք է որ,

1° Առաջին լծորդութեան, այսինքն եմ և ամ վերջաւորուած ներգործականներուն կրաւորականը, երկրորդ լծորդութեան իմ և իմին պէս խոնարհելով կ'ըլլայ.

Սիրեմ՝ ներգործական, Սիրիմ՝ կրաւորական.

Անկ. Սիրէի, ևլն։ Կատ. Սիրեցայ, սիրեցար, սիրեցաւ՝ Սիրեցաք, սիրեցայք, սիրեցան։ Ապռ. Սիրեցայց, սիրեսցիս, սիրեսցի. Սիրեսցուք, սիրեսջիք, սիրեսցին։ Հրմ. Սիրեաց, մի սիրիր. Սիրեցարուք, մի սիրիք՝ Ստոր. Սիրիցիմ, ևլն։ Ան. Դ. Սիրել (և ոչ թէ Սիրէլ)՝ Անց. Դ. Սիրեալ կամ Սիրեցեալ։ Ապռ. Դ. Սիրելոց։

Հատանեմ՝ Ներգ. Հատանիմ՝ Կրաւ։ Անկ. Հատանէի, ևլն։ Կատ. Հատայ, հատար, հատաւ. Հատաք, հատայք, հատան։ Ապռ. Հատայց, հատցիս, հատցի. Հատցուք, հատջիք, հատցին։ Հրմ. Հատիր, մի հատանիր. Հատարուք, մի հատանիք։ Ստոր. Հատանիցիմ. ևլն։ Ան. Դ. Հատանել։ Անց. Դ. Հատեալ։ Ապռ. Դ. Հատանելոց։

2°. Երկրորդ լծորդութեան, այսինքն ԵՄ և ՆԵՄ վերջաւորուած ներգործականներուն կրաւորականը առանձին խոնարհում չունի. այլ ներգործականին հետ միևնոյն է. Խօսիմ կը նշանակէ թէ՛ կը խօսիմ ներգործաբար, և թէ՛ կը խօսուիմ կրաւորաբար. նոյնպէս Ուսանիմ կը նշանակէ թէ կը սորվիմ, և թէ՛ կը սորվուիմ։ Այս տեսակ բայերուն Հասարակ Բայ կ'ըսուի։

3°. Երրորդ լծորդութեան, այսինքն ԱՄ վերջաւորուած ներգործականներուն կրաւորականը՝ նոյն լծորդութեան երկրորդ օրինակին, այսինքն ԱՆԱՄ (Ստանամ) ին պէս խոնարհելով կ'ըլլայ։

Կրաւ. Աղամ. Անկ. Աղայի, ևլն։ Կատ. Աղացայ, աղացար, աղացաւ. Աղացաք, աղացայք, աղացան։ Ապռ. Աղացայց, աղասցիս, աղասցի. Աղասցուք, աղասջիք, աղասցին։ Հրմ. Աղացիր, մի աղար. Աղացարուք, մի աղայք։ Ստոր. Աղայցիմ, աղայցիս, աղայցի. Աղայցիմք, աղայցիք, աղայցին. (Ստորադասականը Ստանամ ին պէս այցեմ ըլլալու տեղ, այցիմ կը վերջանայ, տարբերութիւնը միայն այս է)։ Ան. Դ. Աղալ։ Անց. Դ. Աղացեալ։ Ապռ. Դ. Աղալոց։



Իսկ ԱՆԱՄ վերջաւորուած ներգործականներուն կրաւորականը առանձին խոնարհում չունի. այլ ներգործականին հետ միևնոյն է. Ստանամ կը նշանակէ թէ՛ կը ստանամ ներգործաբար, և թէ՛ կը ստացուիմ կրաւորաբար. միայն ստորադասականին մէջ Ստանայցեմ կ'ըլլայ՝ փոխանակ Ստանայցիմ ըլլալու։ Ասոնք ալ Հասարակ Բայ կ'ըսուին։

4°. Չորրորդ լծորդութեան, այսինքն ՈՒՄ վերջաւորուած ներգործականներուն կրաւորականը՝ նոյն լծորդութեան երկրորդ օրինակին, այսինքն ՆՈՒՄ (Զգենում) ին պէս խոնարհելով կ'ըլլայ.

Կրաւ. Զենում. Անկ. Զենուի, ևլն։ Կատ. Զենայ՝ զենար, զենաւ. Զենաք, զենայք, զենան։ Ապռ. Զենայց, զենցիս, զենցի. Զենցուք, զենջիք, զենցին։ Հրմ. Զենիր, մի զենուր. Զենարուք, մի զենուք։ Ստոր. Զենուցում. ևլն։ Ան. Դ. Զենուլ։ Անց. Դ. Զենեալ. Ապռ. Դ. Զենլոց։

Իսկ ՆՈՒՄ վերջաւորուած ներգործականներուն կրաւորականը առանձին խոնարհում չունի. այլ ներգործականին հետ միևնոյն է. Զգենում կը նշանակէ թէ՛ կը հագնիմ ներգործա-

բար, և թէ՛ կը հագուիմ կրաւորաբար։ Ասոնք ալ Հասարակ բայ կ՚ըսուին։

125. Այս գիտելիքէն կը հետևի ուրեմն թէ ութը կանոնաւոր խոնարհմանց մէջ չորսը հասարակ են, այսինքն, թէ՛ ներգործական և թէ կրաւորական նշանակութեամբ կը գործածուին. որ են իմ (Խօսիմ), անիմ (Ուսանիմ), անամ (Սպանամ), նում (Զգենում) լծորդութիւնները։ Մնացեալ չորս լծորդութիւնները եմ, անեմ, ամ, ում, միայն ներգործականի յատուկ են (ինչպէս նաև չէզոքի). ասոնց կրաւորականը շինելու համար հարկ է եմը (Սիրեմը) իմին (Խօսիմին), անեմը (Հասկանեմը) անիմին (Ուսանիմին), ամը (Աղամը) անամին (Սպանամին), ումը (Զենումը) նումին (Զգենումին) պէս խոնարհել։

126. Աշխարհաբարի մէջ կրաւորականի յատուկ լծորդութիւնն է ՈՒԻՄ. ամէն ներգործական բայ այս յանգն ընդունելով կրաւորական կ՚ըլլայ. և կը խոնարհի աշխարհաբարի իմ լծորդութեան, այսինքն կը Խօսիմին պէս։ կը Սիրեմ ներգործականին կրաւորականը կ՚ըլլայ կը Սիրուիմ, և այսպէս կը խոնարհի,

| | | |
|---|---|---|
| Ս. Ներ. | կը Սիր-ուիմ. | կը Սիր-ուինք. |
| | կը Սիր-ուիս. | կը Սիր-ուիք. |
| | կը Սիր-ուի. | կը Սիր-ուին։ |
| Անկ. | կը Սիր-ուէի. | կը Սիր-ուէինք. |
| | կը Սիր-ուէիր. | կը Սիր-ուէիք. |
| | կը Սիր-ուէր. | կը Սիր-ուէին։ |



| | | | |
|---|---|---|---|
| Կատ. | Սիր-ուեցայ. | | Սիր-ուեցանք. |
| | Սիր-ուեցար. | | Սիր-ուեցաք. |
| | Սիր-ուեցաւ. | | Սիր-ուեցան։ |
| Ապառ. (Պիտի) | Սիր-ուիմ. | | Սիր-ուինք. |
| | Սիր-ուիս. | | Սիր-ուիք. |
| | Սիր-ուի. | | Սիր-ուին։ |
| ՀՐՄ. | Սիր-ուէ. | | Սիր-ուեցէք. |
| Մի | Սիր-ուիր. | | Մի Սիր-ուիք։ |
| ՍՏՈՐ. (Թէ որ) | Սիր-ուիմ. | | Սիր-ուինք. |
| | Սիր-ուիս. | | Սիր-ուիք. |
| | Սիր-ուի. | | Սիր-ուին։ |
| ԴԵՐԲ. | Սիր-ուիլ։ | Սիր-ուած։ | Սիր-ուելու։ |

127. Այս օրինակին վրայ կը խոնարհին աշխարհաբարի մէջ բոլոր կրաւորական բայերը. միայն գիտնալու է որ ուիմ յանգը՝ ամ և նամ լծորդութեամբ բայերուն պարզ արմատին, կամ կատարեալին վրայ դնելու է. ինչպէս,

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ներգ. | Կ՚Աղամ. | Կատ. | աղացի. | Կրա. | Կ՚Աղացուիմ. |
| » | կը Շինեմ. | » | շինեցի. | » | կը Շինուիմ. |
| » | կը Ստանամ. | » | ստացայ. | » | կը Ստացուիմ. |
| » | կը Մոռնամ. | » | մոռցայ. | » | կը Մոռցուիմ. |
| » | կը Լուամ. | » | լուացի. | » | կը Լուացուիմ։ |

128. Գիտնալ պէտք է որ չէզոք բայք ուցանեմ վերջաւորութեամբ շինուած ներգործական բայերուն կրաւորականի տեղ՝ չէզոքները կը գործածուին թէ գրաբարի և թէ աշխարհաբարի մէջ. Մեռուցանեմ, կը Մեռցընեմ ներգ. Մեռանիմ, կը Մեռնիմ չէզոքը կը գործածուի կրաւորականի տեղ։

## ԱՐՏՈՒՂԻ (1) ԲԱՅԵՐՈՒ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

### 129. *Ներգործական* ԱՌՆԵՄ, *արմատ* ԱՐԱՐ։

Ս. Ներ. *Առնեմ.* Կ'ընեմ. *եւն։*
Անկ. *Առնէի.* Կ'ընէի. *եւն։*
Կատ. *Արարի.* Ըրի. | *Արարաք.* Ըրինք.
*Արարեր.* Ըրիր. | *Արարէք.* Ըրիք.
*Արար.* Ըրաւ. | *Արարին.* Ըրին։
Ապա. *Արարից.* (պիտի) ընեմ (2). | *Արասցուք.*
*Արասցես.* | *Արասջիք։*
*Արասցէ.* | *Արասցեն։*
ՀՐՄ. *Արա.* Ըրէ. | *Արարէք.* Ըրէք.
*Մի առներ.* Մի ըներ. | *Մի առնէք.* Մի ընէք։
ՍՏՈՐ. *Առնիցեմ.* (Թող) ընեմ. *եւն։*
ԱՆՈ. Դ. *Առնել.* Ընել։
ԱՆՑ. Դ. *Արարեալ.* Ըրած։
ԱՊՌ. Դ. *Առնելոց.* Ընելու։

---

(1) Վերը (93—101) *ութը կանոնաւոր խոնարհմանց օրինակները գրուած են. այժմ պիտի գրենք այն բայերը, որոնք կանոնաւոր խոնարհմունքէ կը խոտորին, կամ թէ երկու տարբեր բայեր մէկմէկու կ'ամբողջանան։ Արտուղի բայերը գլխաւորաբար արմատական ժամանակներու մէջ, այսինքն կատարեալի, ապառնիի, հրամայականի և անցեալ դերբայի մէջ կանոնաւոր խոնարհումէ կը խոտորին. ուստի օրինակներուն մէջ միայն արմատական ժամանակները գրուած են, իսկ կանոնաւոր ժամանակներուն միայն առաջին դէմքը նշանակուած է։*

(2) Այս *արտուղի բայերուն աշխարհաբարները գրուած են որոնք գրաբարին պէս արտուղի խոնարհում ունին. իսկ որոնց որ աշխարհաբարները կանոնաւոր են, հոն ամբողջ խոնարհուած չեն, միայն առաջին դէմքը գրուած է։*



### 130. *Ներգործական* ԴՆԵՄ, *արմատ* ԴԻՐ։

Ս. Ներ. *Դնեմ.* Կը դնեմ. *եւն։*
Անկ. *Դնէի.* Կը դնէի. *եւն։*
Կատ. *Եդի.* Դրի. | *Եդաք.* Դրինք.
*Եդիր.* Դրիր. | *Եդիք.* Դրիք.
*Եդ.* Դրաւ. | *Եդին.* Դրին։
Ապա. *Եդից.* (պիտի) դնեմ. | *Դիցուք.*
*Դիցես.* | *Դիջիք.*
*Դիցէ.* | *Դիցեն։*
ՀՐՄ. *Դիր* Դիր. | *Դիք.* Դրէք.
*Մի դներ.* Մի դներ. | *Մի դնէք.* Մի դնէք։
ՍՏՈՐ. *Դնիցեմ.* (Թող) դնեմ. *եւն։*
ԱՆՈ. Դ. *Դնել.* Դնել։
ԱՆՑ. Դ. *Եդեալ.* Դրած։
ԱՊՌ. Դ. *Դնելոց.* Դնելու։

### 131. *Ներգործական* ՈՒՏԵՄ, *արմատ* ԿԵՐ։

Ս. Ներ. *Ուտեմ.* Կ'ուտեմ. *եւն։*
Անկ. *Ուտէի.* Կ'ուտէի. *եւն։*
Կատ. *Կերայ.* Կերայ. | *Կերաք.* Կերանք.
*Կերար.* Կերար. | *Կերայք.* Կերաք.
*Կերաւ, Եկեր.* Կերաւ. | *Կերան.* Կերան։
Ապա. *Կերայց.* (պիտի) ուտեմ. | *Կերիցուք.*
*Կերիցես.* | *Կերիջիք.*
*Կերիցէ.* | *Կերիցեն։*
ՀՐՄ. *Կեր.* Կեր. | *Կերայք.* Կերէք.
*Մի ուտեր.* Մի ուտեր. | *Մի ուտէք.* Մի ուտէք։

ՍՏՈՐ. Ուտիցեմ· (Թէոր) ուտեմ. եւն:
ԱՆՈ. Դ. Ուտել· ուտել:
ԱՆՑ. Դ. Կերեալ· կերած:
ԱՊՌ. Դ. Ուտելոց. ուտելու:

### 132. Չէզոք ՅԱՌՆԵՄ, արմատ՝ ՅԱՌ, ՅԱՐԻՐ:

Ս. Ներ. Յառնեմ· ոտքի կ'ելնեմ եւն:
Անկ. Յառնէի· ոտքի կ'ելնէի. եւն:
Կտր. Յարեայ· ոտքի ելայ· Յարեաք·
Յարեար· Յարեայք·
Յարեաւ· Յարեան:
Ապռ. Յարեայց· ոտքի պիտի ելնեմ· Յարիցուք·
Յարիցես· Յարիջիք·
Յարիցէ· Յարիցեն:
ՀՐՄ. Արի· ոտքի ել Արիք·
Մի յառներ· Մի յառնէք:
ՍՏՈՐ. Յառնիցեմ· (Թէոր) ոտքի ելնեմ. եւն:
ԱՆՈ. Դ. Յառնել. ոտքի ելնել:
ԱՆՑ. Դ. Յարուցեալ· ոտքի ելած:
ԱՊՌ. Դ. Յառնելոց· ոտքի ելնելու:

### 133. Ներգործական ԸՄՊԵՄ, արմատ՝ ԱՐԲ:

Ս. Ներ. Ըմպեմ· կը խմեմ. եւն:
Անկ. Ըմպէի· կը խմէի. եւն:
Կտր. Արբի· խմեցի· Արբաք·
Արբեր· Արբէք·
Արբ, Եարբ· Արբին:



Ապռ. Արբից· (պիտի) խմեմ· Արբցուք·
Արբցես· Արբջիք·
Արբցէ· Արբցեն:
ՀՐՄ. Արբ· խմէ· Արբէք·
Մի ըմպեր· Մի ըմպէք:
ՍՏՈՐ. Ըմպիցեմ· (Թէոր) խմեմ. եւն:
ԱՆՈ. Դ. Ըմպել· խմել:
ԱՆՑ. Դ. Արբեալ· խմած:
ԱՊՌ. Դ. Ըմպելոց· խմելու:

### 134. Ներգործական ԼՍԵՄ, արմատ՝ ԼՈՒ:

Ս. Ներ. Լսեմ· կը լսեմ. եւն:
Անկ. Լսէի· կը լսէի. եւն:
Կտր. Լուայ· լսեցի· Լուաք·
Լուար· Լուայք·
Լուաւ. Լուան:
Ապռ. Լուայց: (պիտի) լսեմ· Լուիցուք·
Լուիցես· Լուիջիք.
Լուիցէ· Լուիցեն:
ՀՐՄ. Լուր. լսէ. Լուարուք·
Մի լսեր· Մի լսէք:
ՍՏՈՐ. Լսիցեմ· (Թէոր) լսեմ. եւն
ԱՆՈ. Դ. Լսել· լսել:
ԱՆՑ. Դ. Լուեալ· լսած:
ԱՊՌ. Դ. Լսելոց· լսելու:

### 135. Ներգործ. ՃԱՆԱՉԵՄ, արմատ՝ ԾԱՆ:

Ս. Ներ. Ճանաչեմ· կը ճանչեմ. եւն:

Անկ. ճանաչէի. կը ճանչէի. եւն։

Կատ. Ծանեայ. ճանչցայ. Ծանեաք.
Ծանեար. Ծանեայք.
Ծանեաւ. Ծանեան։

Ապառ. Ծանեայց. (պիտի) ճանչնամ. Ծանիցուք.
Ծանիցես. Ծանիջիք.
Ծանիցէ. Ծանիցեն։

Հրմ. Ծանիր. ճանչէ. Ծաներուք.
Մի ճանաչեր. Մի ճանաչէք։

Ստոր. ճանաչիցեմ. (թէ որ) ճանչնամ. եւն։
Անր. Դ. ճանաչել. ճանչնալ։
Անց. Դ. Ծանուցեալ. ճանչցած։
Ապառ. Դ. ճանաչելոց. ճանչնալու։

## 136. Ներգործական ՈՒՆԻՄ, արմատ՝ ԿԱԼ։

Ս. Ներ. Ունիմ. կը բռնեմ. եւն։
Անկ. Ունէի. կը բռնէի. եւն։

Կատ. Կալայ. բռնեցի. Կալաք.
Կալար. Կալայք.
Կալաւ. Կալան։

Ապառ. Կալայց. (պիտի) բռնեմ. Կալցուք.
Կալցիս. Կալջիք.
Կալցի. Կալցին։

Հրմ. Կալ, կա՛. բռնէ. Կալարուք.
Մի ունիր. Մի ունիք։

Ստոր. Ունիցիմ. (թէ որ) բռնեմ. եւն։
Անր. Դ. Ունել. բռնել։
Անց. Դ. Կալեալ. բռնած։
Ապառ. Դ. Ունելոց. բռնելու։



## 137. Ներգործական ՏԱՄ, արմատ՝ ՏՈՒ։

Ս. Ներ. Տամ. կու տամ. (1) եւն։
Անկ. Տայի. կու տայի. եւն։

Կատ. Ետու. տուի. Տուաք. տուինք.
Ետուր. տուիր. Ետուք. տուիք.
Ետ. տուաւ. Ետուն. տուին։

Ապառ. Տաց. (պիտի) տամ. Տացուք.
Տացես. Տաջիք.
Տացէ. Տացեն։

Հրմ. Տուր. տուր. Տուք. տուէք.
Մի տար. Մի տար. Մի տայք. Մի տաք։

Ստոր. Տայցեմ. (թէ որ) տամ. եւն։
Անր. Դ. Տալ. տալ։
Անց. Դ. Տուեալ. տուած։
Ապառ. Դ. Տալոց. տալու։

## 138. Չէզոք ԳԱՄ, արմատ՝ ԵԿ։

Ս. Ներ. Գամ. կու գամ. եւն։
Անկ. Գայի. կու գայի. եւն։

---

1. Խոնարհմանց մէջ տեսանք որ աշխարհաբարի մէջ Սահմ. Ներկային եւ Անկատարը սկիզբներնին կը մասնիկ մը կ՚առնեն, բաղաձայնով սկսած բայերու քով. իսկ ձայնաւորով սկսածներուն քով ը գիրը կը թողու տեղը ապաթարց (՚) նշանով մը. ինչպէս կը Սիրեմ, կ՚Աղամ։ Երեք բայ կայ, Տամ, Գամ, Լամ, որ կը մասնիկին տեղ կու կ՚առնեն առջեւերնին. կու տամ, կու գամ, կու լամ։ Հինգ բայ ալ կայ, որ ամենեւին կը մասնիկ չեն առներ. Եմ, կամ, Ունիմ, Գիտեմ, Կրնամ։

Կտր. Եկի. Եկայ. Եկաք. Եկանք.
Եկիր. Եկար. Եկիք. Եկաք.
Եկն. Եկաւ. Եկին. Եկան:

Ապռ. Եկից. (դէմք) Գամ. Եկեսցուք.
Եկեսցես. Եկեսջիք.
Եկեսցէ. Եկեսցեն:

ՀՐՄ. Եկ. Եկուր. Եկայք. Եկէք.
Մի Գար. Մի Գար. Մի Գայք. Մի Գաք:

ՍՏՈՐ. Գայցեմ. (նոյն) Գամ. եւն:

ԱՆՈ. Դ. Գալ. Գալ:

ԱՆՑ. Դ. Եկեալ. Եկած:

ԱՊՌ. Դ. Գալոց. Գալու:

## 139. Չէզոք ԵՐԹԱՄ, արմատ՝ ԵՐԹ, ՉՈԳ:

Ս. Ներ. Երթամ. Կ'երթամ. եւն:

Անկ. Երթայի. Կ'երթայի. եւն:

Կտր. Չոգայ. Գնացի. Չոգաք. Գնացինք.
Չոգար. Գնացիր. Չոգայք. Գնացիք.
Չոգաւ. Գնաց. Չոգան. Գնացին:

Ապռ. Երթայց. (դէմք) Երթամ. Երթիցուք.
Երթիցես. Երթիջիք.
Երթիցէ. Երթիցեն:

ՀՐՄ. Երթ. Գնա. Երթայք. Գացէք.
Մի Երթար. Մի Երթաս. Մի Երթայք. Մի Երթաք:

ՍՏՈՐ. Երթայցեմ. (նոյն) Երթամ. եւն:

ԱՆՈ. Դ. Երթալ. Երթալ:

ԱՆՑ. Դ. Երթեալ. Գացած:

ԱՊՌ. Դ. Երթալոց. Երթալու:



## 140. Պակասաւոր ԵՄ, արմատ՝ Է: (1)

Ս. Ներ. Եմ. Եմ. Եմք. Ենք.
Ես. Ես. Էք. Էք.
Է. Է. Են. Են:

Անկ. Էի. Էի. Էաք. Էինք.
Էիր. Էիր. Էիք. Էիք.
Էր. Էր. Էին. Էին:

ՀՐՄ. Եր. Եղիր. Էք, երուք. Եղէք:

ՍՏՈՐ. Իցեմ. (նոյն) Ըլլամ. Իցեմք. Ըլլանք.
Իցես. Ըլլաս. Իցէք. Ըլլաք.
Իցէ. Ըլլայ. Իցեն. Ըլլան:

ԱՆՈ. Դ. Ել: (2)

ԱՆՑ. Դ. Եալ:

ԱՊՌ. Դ. Ելոց:

## 141. Արտաքսի ԵՂԱՆԻՄ, արմատ՝ ԵՂ:

Ս. Ներ. Եղանիմ. Կ'ըլլամ. եւն:

Անկ. Եղանէի. Կ'ըլլայի. եւն:

---

1. Չորս բայ կան. Եմ, Եղանիմ, Լինիմ, Գամ, որոնք էական բայ կ'ըսուին. եւ նշանակութեամբ չէզոք, ու խոնարհմանց մէջ ալ Արտաքսի եւ Պակասաւոր են:

Պակասաւոր կ'ըսուին այն բայերը, որոնց մէկ քանի ժամանակները միայն կը բանին:

2. Եմ բային դերբայներուն աշխարհաբար գործածութիւնն է Ըլլալ, Եղած, Ըլլալու, որ յետագայ Եղանիմ եւ Լինիմ բայերէն կ'առնուին. այսպէս նաեւ գրաբարի միւս պակաս ժամանակները կատարեալին ու Հրամանին կ'առնուն Եղանիմ բայէն կազմուելով, Եղէ, եղեր, եւն, Եղեց, եւն:

| | | | | |
|---|---|---|---|---|
| Կատ· | Եղէ· | Եղայ· | Եղաք· | Եղանք· |
| | Եղեր· | Եղար· | Եղէք· | Եղաք· |
| | Եղեւ· | Եղաւ· | Եղեն· | Եղան։ |

| | | | |
|---|---|---|---|
| Ապառ· | Եղէց· (պիտի) Ըլլամ· | Եղիցուք· | |
| | Եղիցիս· | Եղիջիք· | |
| | Եղիցի· | Եղիցին։ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՀՐՄ· | Եղիջիր· | Եղիր· | Եղերուք· | Եղէք· |
| | Մի եղանիր· | Մի ըլլար· | Մի եղանիք· | Մի ըլլաք։ |

ՍՏՈՐ· Եղանիցիմ· (Թէոր) Ըլլամ· եւն։

ԱՆՈ· Դ· Եղանել· Ըլլալ

ԱՆՑ· Դ· Եղեալ· Եղած։

ԱՊՌ· Դ· Եղանելոց· Ըլլալու։

## 142. Պակասաւոր ԼԻՆԻՄ, արմատ՝ ԼԻ։

Ս· Ներ· Լինիմ· Կ'ըլլամ· եւն։

Անկ· Լինէի· Կ'ըլլայի· եւն։

| | | | |
|---|---|---|---|
| Ապառ· | Լիցիմ (պիտի) Ըլլամ· | Լիցուք· | |
| | Լիցիս· | Լիջիք· | |
| | Լիցի· | Լիցին։ | |

| | | | |
|---|---|---|---|
| ՀՐՄ· | Լեր· | Եղիր· | Լերուք· |
| | Մի լինիր· | | Մի լինիք։ |

ՍՏՈՐ· Լինիցիմ· (Թէոր) Ըլլամ· եւն։

ԱՆՈ· Դ· Լինել· Ըլլալ

ԱՆՑ· Դ· Լեալ· Եղած։

ԱՊՌ· Դ· Լինելոց· Ըլլալու։



## 143. Պակասաւոր ԳՈՄ, արմատ՝ ԳՈՅ։

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ս· Ներ· | Գոմ· | Կամ· | Գոմք· | Կանք· |
| | Գոս· | Կաս· | Գոյք· | Կաք· |
| | Գոյ· (1) | Կայ· | Գոն· | Կան։ |
| Անկ· | Գոյի· | Կայի· | Գոյաք· | Կայինք· |
| | Գոյիր· | Կայիր· | Գոյիք· | Կայիք· |
| | Գոյր· | Կար· | Գոյին· | Կային։ |

| | | |
|---|---|---|
| ՍՏՈՐ· | Գուցեմ· (Թէոր) Ըլլամ· | Գուցեմք· |
| | Գուցես. | Գուցէք· |
| | Գուցէ. | Գուցեն։ |

ԱՆՈ· Դ· Գոլ· Ըլլալ

## 144. Պակասաւոր ՊԱՐՏԻՄ։ (2)

| | | |
|---|---|---|
| Ս· Ներ· | Պարտիմ· | Պարտիմք· |
| | Պարտիս· | Պարտիք. |
| | Պարտի. | Պարտին։ |
| Անկ. | Պարտէի· | Պարտէաք· |
| | Պարտէիր· | Պարտէիք· |
| | Պարտէր· | Պարտէին։ |
| ՍՏՈՐ· | Պարտիցիմ· | Պարտիցիմք· |
| | Պարտիցիս· | Պարտիցիք· |
| | Պարտիցի· | Պարտիցին։ |

ԱՆՈ· Դ· Պարտել· Պարտական ըլլալ

---

1· Ժխտ բայ մը կայ · որ Չկայ բառն է · եւ աւելի շատ կը գործածուի · Չիք · չկայ · Ոչ Գոյ բառին տեղ ։

2· Պարտիմ թէ գրաբար եւ թէ աշխարհաբար կը գործածուի Ներկայ ու Անկատար ժամանակներու մէջ ։ Աշխարհաբարի մէջ Պարտական եմ , պարտաւորուած եմ կամ՝ ըլլամ գործածութիւն ալ ունի ։

## 145. ԴԻՄԱԶՈՒՐԿ (1) ԲԱՅԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| Պիտի. | Պէտք է։ | Ցաւէ. | Ցաւ կ'ըլլայ։ |
| Պիտէր. | Պէտք էր։ | Ցաւէր. | Ցաւ կ'ըլլար։ |
| Պիտեցաւ. | Պէտք եղաւ։ | Ցաւեցաւ. | Ցաւ եղաւ։ |
| Պիտեսցի } Պիտիցի } | Պէտք ըլլայ։ | Ցաւեսցէ } Ցաւիցէ } | Ցաւ ըլլայ։ |

Մարթի. Կարելի է. Մարթէր. Կարելի էր։ Մարթիցի. Կարելի ըլլայ։

Ուրիշ դիմաւոր բայերէ շինուած գործածական դիմազուրկներ ալ կան. ինչպէս, Ասի, կ'ըսուի. Լսի, կը լսուի. Երևի, կ'երևայ. Կարծի, կը կարծուի։

### ԳԻՏԵԼԻՔ ԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐՈՒՆ ՎՐԱՅ

146. Եւ ըմորդութեամբ Արտուղի խոնարհում ունեցող ներգործական բայերուն կըրաւորականը ըստ կանոնի (124) եւ ըմորդութեամբ կը կազմուի. և որոնց որ կատարեալ Անդեմքը ի կը վերջանայ, կրաւորականի մէջ ալ յանգը կ'առնէ. իսկ արդէն ալ յանգն ունեցողները անփոփոխ կը մնան կրաւորականին մէջ ալ, իբրև Հասարակ բայ. ինչպէս,

Սահմանական Ներկայ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Առնիմ. | Դնիմ. | Ուտիմ. | Ըմպիմ. | Լսիմ. |

1. Մէկ երկու խիստ պակասաւոր բայեր կան, որոնց մէկ քանի եղանակի երրորդ դէմքերը միայն կը գտնուին. ուստի Դիմազուրկ կամ Ընդհանուր դէմ կ'ըսուին.



Անկատար.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Առնէի. | Դնէի. | Ուտէի. | Ըմպէի. | Լսէի. |

Կատարեալ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Առարայ. | Եդայ. | Կերայ. | Արբայ. | Լուայ. |
| Առարար. | Եդար. | Կերար. | Արբար. | Լուար. |
| Առարաւ. | Եդաւ. | Կերաւ. | Արբաւ. | Լուաւ. |
| Առարաք. | Եդաք. | Կերաք. | Արբաք. | Լուաք. |
| Առարայք. | Եդայք. | Կերայք. | Արբայք. | Լուայք. |
| Առարան։ | Եդան։ | Կերան։ | Արբան։ | Լուան։ |

Ապառնի.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Առարայց. | Եդայց. | Կերայց. | Արբայց. | Լուայց. |
| Առասցիս. | Դիցիս. | Կերիցիս. | Արբցիս. | Լուիցիս. |
| և այլն։ | և այլն։ | և այլն։ | և այլն։ | և այլն։ |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Առնիջիր. | Դնիջիր. | Կերիջիր. | Արբիր. | Լուիջիր. |
| Մի Առնիր. | Մի Դնիր. | Մի Ուտիր. | Մի Ըմպիր. | Մի Լսիր. |
| Առնիջիք. | Եդարուք. | Կերիջիք. | Արբերուք. | Լուիջիք. |
| Մի Առնիք։ | Մի Դնիք։ | Մի Ուտիք։ | Մի Ըմպիք։ | Մի Լսիք։ |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Առնիցիմ. | Դնիցիմ. | Ուտիցիմ. | Ըմպիցիմ. | Լսիցիմ. |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Առնել։ | Դնել։ | Ուտել։ | Ըմպել։ | Լսել։ |

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Առարեալ։ | Եդեալ։ | Կերեալ։ | Արբեալ։ | Լուեալ։ |

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Առնելոց։ | Դնելոց։ | Ուտելոց։ | Ըմպելոց։ | Լսելոց։ |

147. Ճանաչեմ ներգործականին կրաւո-

րականը կանոնաւոր ժամանակներուն մէջ գործածուած կայ. ճանաչիմ, ճանաչէի, ճանաչեցիմ. են։ Իսկ արմատական ժամանակները Ծանուցանիմ բայէն կ'առնէ. ինչպէս,

Կտր. Ծանուցայ, ծանուցար, ծանուցաւ. Ծանուցաք, ծանուցայք, ծանուցան։ Ապռ. Ծանուցայց, ծանուսցիս, ծանուսցի. Ծանուսցուք, ծանուսջիք, ծանուսցին։ Հրմ. Ծանուցիր. Ծանուցարուք։ Անց. Դ. Ծանուցեալ։

148. Ունիմ (1) բայը Հասարակ է, այսինքն թէ ներգործաբար և թէ կրաւորաբար նշանակութեամբ միակերպ խոնարհում ունի։

149. Տամ բայը որ ան լծորդութեամբ ներգործական արտաքի բայ է, կրաւորական միայն քանի մը ժամանակներն ունի. ինչպէս,

Կտր. Տուայ, տուար, տուաւ. Տուաք, տուայք, տուան։ Ապռ. Տուայց, տացիս, տացի. Տացուք, տաջիք, տացին։ Ստոր. Տայցիմ, տայցիս, տայցի. Տայցիմք, տայցիք, տայցին։ Անց. Դ. Տուեալ։ Ապռ. Դ. Տալոց։

Մնացեալ ժամանակները կը կազմուին Լինիմ էական բայով (տես 166, 167)։

---

150. Վերը Արտաքի և Պակասաւոր խո-

1. Ունիմ բային աշխարհաբար գործածութիւնը Ունենամի նշանակութեամբ է. ուստի Ունիմ միայն Ներկայ և Անկատար ունի. Ունիմ. Ունէի են. Մնացեալ ժամանակները Ունենամէն կ'առնէ. Ունեցայ. Ունեցիր են։



նարհում ունեցող բայերուն մէջ տեսանք որ գրաբարին պէս աշխարհաբարի մէջ ալ արտաքի կամ պակասաւոր խոնարհում ունէին կ'ԸՆԵՄ, կը ԳՆԵՄ, կ'ՈՒՏԵՄ, կու ՏԱՄ, կու ԳԱՄ, կ'ԵՐԹԱՄ, կ'ԸԼԼԱՄ և ԵՄ, ԿԱՄ բայերը. (տես 129, 130, 131, 137, 138,139, 140, 141, 143 )։

Ասոնցմէ զատ աշխարհաբարի մէջ կան քանի մը բայեր, որոնց գրաբարը թէև կանոնաւոր՝ բայց աշխարհաբարի կատարեալն ու հրամայականը անկանոն կամ արտաքի խոնարհում ունին. (ինչպէս որ գրաբար արտաքի խոնարհմանց մէջ ալ Ելանեմ, Ըմպեմ, Լսեմ, Ճանաչեմ, Ունիմ բայերուն աշխարհաբարները Ոտքի կ'ելլեմ, կը խմեմ. կը Լսեմ, կը ճանչեմ, կը Բռնեմ կանոնաւոր խոնարհում ունէին, տես 132, 133, 134, 138, 135, 136 թուահամարները.) ինչպէս,

| | կ'Ըսեմ. | կը Բերեմ. | կը Թողնեմ. | կը Պագնեմ. |
|---|---|---|---|---|
| Կտր. | Ըսի. | Բերի. | Թողի. | Պագի. |
| | Ըսիր. | Բերիր. | Թողիր. | Պագիր. |
| | Ըսաւ. | Բերաւ. | Թողաւ. | Պագաւ. |
| | Ըսինք. | Բերինք. | Թողինք. | Պագինք. |
| | Ըսիք. | Բերիք. | Թողիք. | Պագիք. |
| | Ըսին։ | Բերին։ | Թողին։ | Պագին։ |
| Հրմ. | Ըսէ. | Բեր. | Թող. | Պագ. |
| | Ըսէք։ | Բերէք։ | Թողէք։ | Պագէք։ |

| | կը Զարնեմ. | կը Խածնեմ. | կը Տանիմ. |
|---|---|---|---|
| Կտր. | Զարկի. | Խածի. | Տարի. |
| | Զարկիր. | Խածիր. | Տարիր. |

| | | | |
|---|---|---|---|
| | Զարկաւ· | Խածաւ· | Տարաւ· |
| | Զարկինք· | Խածինք· | Տարինք· |
| | Զարկիք· | Խածիք· | Տարիք· |
| | Զարկին: | Խածին: | Տարին: |
| Հրմ. | Զարկ· | Խած· | Տար. |
| | Զարկէք: | Խածէք: | Տարէք: |

151. Աշխարհաբարի մէջ արտաւղի խոնարհում ունեցող ներգործական բայերուն կրաւորականը ըստ կանոնի ուիլ յանգն առնելով (տես 126, 127) կը խոնարհի.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ներկ. | կը Դնեմ. | Կրաւ. | կը Դրուիմ. | Դրուեցայ. եւն: |
| » | կու Տամ. | » | կը Տրուիմ. | Տրուեցայ. » |
| » | կ'Ըսեմ. | » | կ'Ըսուիմ. | Ըսուեցայ. » |
| » | կը Բերեմ. | » | կը Բերուիմ. | Բերուեցայ. » |
| » | կը Պագնեմ. | » | կը Պագնուիմ. | Պագնուեցայ» |
| » | կը Զարնեմ. | » | կը Զարնուիմ. | Զարնուեցայ» |
| » | կը Խածնեմ. | » | կը Խածնուիմ. | Խածնուեցայ» |
| » | կը Տանիմ. | » | կը Տարուիմ. | Տարուեցայ » |

Միայն կ'Ուտեմին կրաւորական կատարեալը կը խոտորի. կերուեցայ, կերուեցար, եւն:

Կ'Ընեմին կրաւորական ձեւն է կ'Ըլլուիմ, որ քիչ կը գործածուի:

## ԲԱՑԱՍԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՒ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

152. Բացասական կամ ժխտական կ'ըլլայ բայ մը, երբ Չ կամ ՈՉ բառն իր վրայ կ'առնէ, և ուրանալով չէ ըսելով կը բացատրէ. ինչպէս, Չսիրել, Չխօսիլ, Չիմանալ եւն:



153. Գրաբար լեզուի մէջ բայերը ոչ բառն առնելով, բացասական կ'ըլլան. ինչպէս,

Ոչ Սիրեմ· Ոչ սիրէի· Ոչ Սիրեցի· Ոչ Սիրեցից· Ոչ Սիրիցեմ· Ոչ Սիրել· Ոչ Սիրեալ· Ոչ Սիրելոց:

154. Աշխարհաբարի մէջ բացասական բայ մը Չ գիրն առնելով կը կազմուի. բայց գիտնալու է որ Սահմանականի Ներկայն ու Անկատարը եմ էական բայով և իւրաքանչիւր բայի սահմանական ներկային ծայրի մ գիրը ր ի փոխելով կը շինուին. ինչպէս,

| | | |
|---|---|---|
| Ս. Ներ. | Չեմ սիրեր· | Չենք սիրեր· |
| | Չես սիրեր· | Չէք սիրեր· |
| | Չի սիրեր· | Չեն սիրեր: |
| Անկ. | Չէի սիրեր· | Չէինք սիրեր· |
| | Չէիր սիրեր· | Չէիք սիրեր· |
| | Չէր սիրեր· | Չէին սիրեր: |
| Կտր. | Չսիրեցի· | Չսիրեցինք. |
| | Չսիրեցիր. | Չսիրեցիք· |
| | Չսիրեց· | Չսիրեցին: |
| Ապռ. | (Պիտի) Չսիրեմ· | Չսիրենք. |
| | Չսիրես· | Չսիրէք· |
| | Չսիրէ· | Չսիրեն: |
| ՀՐՄ. | Մի սիրեր· | Մի սիրէք: |
| ՍՏՈՐ. | (Թէոր) Չսիրեմ, եւն: | |
| ԴԵՐԲ. | Չսիրել: Չսիրած: Չսիրելու: | |

Աշխարհաբարի մէջ ամէն ներգործական և չէզոք բայ այս օրինակին պէս բացասական խո-

նորհուամ կ՚ունենան. Չէմ տէմէր. Չէք տէմէր. Չը-տէմայ. եւն. Չէմ ննջէր. Չէք ննջէր. Չննջէյի. եւն։

155. Գիտնալ պէտք է որ Իմ լծորդու-թեամբ բայերը Անկատարին մէջ եր կը վերջաւո-րին. Ներկ. Չեմ խօսիր. Անկ. Չէի խօսէր։ Ներկ. Չեմ բնակիր. Անկ. Չէի բնակէր. եւն։

156. Աշխարհաբարի մէջ կրաւորական բայի բացասականն ալ միևնոյն կանոնով կ՚ըլլայ, միայն Անկատարին մէջ եր վերջաւորութիւնը եր ի փո-խելով. ինչպէս,

| | | |
|---|---|---|
| Ս. Ներ. | Չեմ սիրուիր. | Չենք սիրուիր. |
| | Չես սիրուիր. | Չէք սիրուիր. |
| | Չի սիրուիր. | Չեն սիրուիր։ |
| Անկ. | Չէի սիրուէր. | Չէինք սիրուէր. |
| | Չէիր սիրուէր. | Չէիք սիրուէր. |
| | Չէր սիրուէր. | Չէին սիրուէր։ |
| Կտր. | Չսիրուեցայ. | Չսիրուեցանք. |
| | Չսիրուեցար. | Չսիրուեցաք. |
| | Չսիրուեցաւ. | Չսիրուեցան։ |
| Ապա. | (պիտի) Չսիրուիմ. | Չսիրուինք. |
| | Չսիրուիս. | Չսիրուիք. |
| | Չսիրուի. | Չսիրուին։ |
| ՀՐՄ. | Մի սիրուիր. | Մի սիրուիք։ |
| ՍՏՈՐ. | (Թէոր) Չսիրուիմ. եւն։ | |
| ԴԵՐԲ. | Չսիրուիլ։ Չսիրուած։ Չսիրուելու։ | |

157. Եմ, կամ, Ունիմ բայերուն Սահմ. Ներ-կայն և Անկատարը կը խոտորին վերի կանոնէն և կ՚ըլլան. Չեմ, Չէի. Չկամ, Չկայի. Չունիմ, Չունէի։

Գիտեմ՝ կ՚ըլլայ, Չգիտեմ, Չգիտէի. կամ վե-րի կանոնին համեմատ, Չեմ գիտեր, Չէի գիտեր։



ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ԴԵՐԲԱՅ

158. Խոնարհմանց կարգը տեսանք որ ե-րեք Դերբայ կան, Անորոշ, Անցեալ, Ապառնի։ Ասոնք դէմք չունին, և թէ իբրև անուն և թէ իբրև բայ կը գործածուին. ասոր համար առան-ձին Մասունք բանի համարուած են։

159. Անորոշ դերբայը թէ գրաբար և թէ աշխարհաբար իբրև գոյական անուն միայն ե-զակի կը հոլովի այսպէս,

Սիրել, սիրելոյ, սիրելով. Սիրելը, սիրելու, սիրելով։
Խօսել, խօսելոյ, խօսելով. Խօսելը, խօսելու, խօսելով։
Աղալ, աղալոյ, աղալով. Աղալը, աղալու, աղալով։
Թողուլ, թողլոյ, թողլով։

160. Անցեալ դերբայն ալ թէ գրաբար և թէ աշխարհաբար իբրև ածական անուն (1) կը հոլովի այսպէս,

---

1. Բայց չմոռնուած և իբրև ածական անուն գործածուած ուրիշ բառեր ալ կան, որ Բայածական կ՚ըսուին, ող, ելի յան-գերով. Սիրող, սիրելի. Խօսող, խօսելի. Իմացող, իմանալի. եւն։

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Սիրեալ, | սիրելոյ, | սիրելով. |
| | Սիրած, | սիրածի, | սիրածով: |
| Յոգ. | Սիրեալք, | սիրելոց, | սիրելովք. |
| | Սիրածներ, | սիրածներու. | սիրածներով: |
| Եզ. | Խօսեալ, | խօսելոյ, | խօսելով. |
| | Խօսած, | խօսածի, | խօսածով: |
| Յոգ. | Խօսեալք, | խօսելոց, | խօսելովք. |
| | Խօսածներ, | խօսածներու, | խօսածներով: |
| Եզ. | Աղացեալ, | աղացելոյ, | աղացելով. |
| | Աղացած, | աղացածի, | աղացածով: |
| Յոգ. | Աղացեալք, | աղացելոց, | աղացելովք. |
| | Աղացածներ, | աղացածներու, | աղացածներով: |

---

Ող վերջացած բայածականը ներկայ եղող գործողութիւն մը, իսկ ել վերջացած բայածականն ըլլալու գործողութիւն մը կը յայտնէ:

Ող վերջացած բայածականը կը հոլովի Քաղաք բառին պէս. Սիրող, սիրողի, սիրողաւ. Սիրողք, սիրողաց, սիրողօք: Աշխարհաբարի մէջ ալ կը հոլովի (տես 16). Սիրող, սիրողի, սիրողով. Սիրողներ, սիրողներու, կամ Սիրողք, սիրողաց՝ գրաբարին պէս:

Ելի վերջացած բայածականը կը հոլովի Ծառ բառին պէս. Սիրելի, սիրելւոյ, սիրելեաւ. Սիրելիք, սիրելեաց, սիրելեօք: Աշխարհաբար Սիրելի, սիրելւոյ, սիրելւով. Սիրելիներ, սիրելիներու կամ Սիրելիք, սիրելեաց՝ գրաբարին պէս:

Աշխարհաբարի մէջ ել վերջացած բայածականը՝ Ապառնի դերբային տեղ յանգում ալ միևնոյն նշանակութեամբ կը գործածուի. Սիրելու ժամ. Բնակելու տուն. իբր թէ ըլլայ Սիրելու կամ սիրուելու արժանի ժամ. Բնակելու յարմար տուն:

Իչ վերջաւորութեամբ բայածական ալ կայ որ նշանակութեամբ գործածուած, բայց աւելի ներգործական բայերէ կը կազմուի. Փրկող. Փրկիչ. Աղաչող. Աղաչիչ:



| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Թողեալ, | թողելոյ, | թողելով. |
| | Թողած, | թողածի, | թողածով: |
| Յոգ. | Թողեալք, | թողելոց, | թողելովք. |
| | Թողածներ, | թողածներու, | թողածներով: |

161. Ապառնի դերբայը չհոլովիր:

162. Անցեալ դերբայը եմ էական բային հետ խոնարհուելով, զանազան բաղադրեալ ժամանակներու ծնունդ կուտայ. որոնք են Յարակատար, Գերակատար, և Ստորադասական անցեալ ժամանակները. ինչպէս,

Յարակատար. (1)

| | | | |
|---|---|---|---|
| Սիրեալ եմ. | Սիրած եմ. | Սիրեալ եմք. | Սիրած ենք. |
| Սիրեալ ես. | Սիրած ես. | Սիրեալ էք. | Սիրած էք. |
| Սիրեալ է. | Սիրած է. | Սիրեալ են. | Սիրած են: |

Գերակատար.

| | | | |
|---|---|---|---|
| Սիրեալ էի. | Սիրած էի. | Սիրեալ էաք. | Սիրած էինք. |
| Սիրեալ էիր. | Սիրած էիր. | Սիրեալ էիք. | Սիրած էիք. |
| Սիրեալ էր. | Սիրած էր. | Սիրեալ էին. | Սիրած էին: |

Ստորադասական անցեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Սիրեալ իցեմ. | Սիրած եմ նէ(2). | Սիրեալ իցեմք. | Սիրած ենք նէ |
| Սիրեալ իցես. | Սիրած ես նէ. | Սիրեալ իցէք. | Սիրած էք նէ. |
| Սիրեալ իցէ. | Սիրած է նէ. | Սիրեալ իցեն. | Սիրած են նէ: |

---

1. Յարակատարը շատ անցած անորոշ ժամանակի մը մէջ գործողութիւնն եղած կ'իմացնէ:

Գերակատարն ալ նոյնպէս շատ անցած ժամանակի մը մէջ կատարուած գործողութիւնը կը ցուցնէ. բայց ուրիշ անցեալ ժամանակով մը կը գրուի. ինչպէս, Ես այն օրը գնած էի. երբ դուն այս վարժելու եկար:

2. Նէ մասնիկը Թէոր բառին միայն ունի. Սիրեմ նէ. թէ

163. Աշխարհաբարի մէջ Ցարակատար և Գերակատար ժամանակները ունիմ բայով ալ կրնան ըլլալ. ինչպէս,

Սիրած ունիմ, Տեսած ունիմ. Սիրած ունէի, Տեսած ունէի, ևն։

164. Աշխարհաբարի մէջ Անցեալ դերբայը ած ի տեղ՝ եր վերջաւորութեամբ ալ կը գործածուի. ինչպէս,

Սիրեր եմ, Սիրեր էի. Տեսեր եմ, Տեսեր էի, ևն։

Եր վերջաւորութեամբ անցեալին նշանակութիւնը ած անցեալէն տարբերութիւն մ'ունի Ցարակատարի մէջ. այնպէս կը ցուցնէ թէ առաջուց եղած բան մը դեռ նոր կ'իմացուի։ Իսկ Գերակատարի մէջ նշանակութեան տարբերութիւն մը չկայ։

165. Եղեր (տե՛ս. ԻՁ) բառն ալ աշխարհաբարի մէջ յատուկ գործածութիւն մ'ունի. կը ցուցնէ թէ գործողութիւնն ուրիշին վկայութեամբը կը հաստատուի, կամ թէ յառաջ եղած բան մը դեռ հիմա կ'իմացուի. ինչպէս,

Կը տեսնէ եղեր. Տեսած է եղեր. Պիտի տեսնէ եղեր։

Միայն Ներկայ, Ցարակատար և Ապառնի ժամանակներուն վրայ կը դրուի։

---

որ սիրեմ. ուստի աշխարհաբարի մէջ Ստորադասական ժամանակի բայերուն վրայ կրնայ դրուիլ բայց աղէկ գրուածոց մէջ շատ չի գործածուիր. անոր համար խոնարհմանց մէջ Ստորադասական ժամանակի բայերուն աշխարհաբարը Թէ որով գրած ենք։



166. Անցեալ դերբայը Լինիմ էական բայով ալ կը բանի. և որովհետև Ներգործական կրաւորական բայերուն Անցեալ դերբայը մէկ է. Լինիմ բայով շինուածն ալ Հասարակ բայ կ'ըլլայ. որ աշխարհաբարին մէջ յայտնի կ'երևայ. ինչպէս

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Ներկայ.

Սիրեալ լինիմ. Սիրած կամ Սիրուած ըլլամ. ևն։

Անցեալ անկատար.

Սիրեալ լինէի. Սիրած կամ Սիրուած ըլլայի. ևն։

Անցեալ կատարեալ.

Սիրեալ եղէ. Սիրած կամ Սիրուած եղայ. ևն։

Ապառնի.

Սիրեալ եղէց. Սիրած կամ Սիրուած պիտի ըլլամ. ևն։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Սիրեալ լեր. Սիրած կամ Սիրուած եղիր. ևն։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

Սիրեալ լինիցիմ. (Թէ որ) Սիրած կամ Սիրուած ըլլամ. ևն։

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

Սիրեալ լինել. Սիրած կամ Սիրուած ըլլալ։

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ

Սիրեալ լեալ կամ եղեալ. Սիրած կամ Սիրուած եղած։

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

Սիրեալ լինելոց. Սիրած կամ Սիրուած ըլլալու։

167. Անցեալ դերբային Լինիմ էական բայով բանուած ձևը աւելի կրաւորականի ոյժ ունի.

ամէն Ներգործական բայ այս ձեւով կրաւորական կրնայ ըլլալ, մանաւանդ կրաւորականի յատուկ խոնարհում չունեցող ներգործական բայերը. և ան ատեն աշխարհաբարի գործածութիւնը կ'ըլլայ Կը սիրուիմ, կը սիրուիս, ևն։

168. Ապառնի դերբայն ալ Եմ Էական բայով կը բանի, և Ապառնիի նշանակութիւն կուտայ, բայց ստուգութիւն մ'աւելցնելով. ինչպէս, Գալոց է կ'ըսուի անոր համար, որուն գալը ստոյգ գիտենք. և այս է աշխարհաբարին պիտի գայ կամ գալու է ըսուածը. Եկեսցէ՝ որ բուն ապառնին է, աւելի աշխարհաբարին կու-գայ, գայ ըսուածին նշանակութեամբը կը գործածուի. Ցորժամ եկեսցէ, աշխարհաբար Երբոր գայ։

169. Ապառնի դերբայն ալ Անցեալ դերբային պէս գրաբարի մէջ ներգործաբար և կրաւորաբար հասարակ գործածութիւն ունի. ինչպէս,

Ներկայ Ապառնի. Սիրելոց եմ. Սիրելու կամ Սիրուելու եմ. Պիտի Սիրեմ կամ Պիտի Սիրուիմ. ևն։

Անկատար Ապառնի. Սիրելոց էի. Սիրելու կամ Սիրուելու էի. Պիտի Սիրէի կամ Պիտի Սիրուէի. ևն։

Ստորա, Ապառնի. Սիրելոց իցեմ. (Թէոր) Սիրելու կամ Սիրուելու եմ. ևն։

170. Անցեալ և Ապառնի դերբայները Եմ, Լինիմ Էական բայերէն ետքն ալ կրնան դրուիլ. այսպէս,

Եմ Սիրեալ. Լինիմ Սիրեալ. Եմ Սիրելոց. ևն։



## ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ՄԱԿԲԱՅ

171. Մակբայ կ'ըսուին այն բառերը, որ բայերու վրայ դրուելով՝ անոնց գործողութեան պարագաները, այսինքն կերպը, տեղը, ատենը ևն կը ցուցնեն։ Շատ գործածական մակբայները հոս կը դնենք, աշխարհաբարի մէջ ունեցած գործածութիւննին ալ մէկտեղ. սակայն գիտնալու է որ գրաբարի մէջ գործածութիւն ունեցող մակբայները աշխարհաբարի մէջ ալ կրնան գործածուիլ, մանաւանդ անոնք՝ որոնց առջև միայն տաճկերէն նշանակութիւն դրուած է. ինչպէս,

Աստ, Այսր } Հոս։
Այդր, Հոդ։
Անդ, Անդր, Անդանօր } Հոն։
Աստի, Ասկից։
Այտի, Ատկից։
Անտի, Անկից։
Ուստի՞, Ուսկի՞ց։
Արտաքս, Դուրս։
Արտաքուստ, Դրսէն։
Ի ներքս, Ներս։
Ի ներքուստ, Ներսէն։
Մօտ, Մերձ } Մօտ։

Հեռի, Հեռու։
Ի վեր, Վեր։
Հերուն, Հերու, անցած տարի։
Գիշերայն, Գիշերանց։
Այգուն, Առտուանց։
Իսկոյն, Մէկէն ի մէկ։
Վաղ, Վաղվաղակի, Ընդփոյթ } Շուտով։
Նախ, Առաջ։
Ապա, Ետքը։
Զարաչար, Խիստ գէշ։
Զուր, Վայրապար } Պարապ տեղը։
Զի՞, Ընդէ՞ր } Ինչո՞ւ։

Զի՞արդ, Ի՞նչպէս։
Ահա,
Ահաւասիկ,
Ահաւադիկ, } (տճ. Իշտէ)։
Ահաւանիկ,
Թերեւս, (տճ. Պէլքի)։
Այո, Այո։
Յայնժամ, Այն ատեն։
Ստէպ, (տճ. Սըք սըք)։
Յաճախ, Շատ, Շարունակ։
Սակաւ, Քիչ։
Յոյժ,
Կարի, } Շատ։
Ի վերուստ, Վերէն։
Բարւոք, Աղէկ։
Զ,
Մի, } Չէ, (եօք)։
Մինչ,
Մինչդեռ,
Յորժամ, } Երբ։
Իբրեւ,
Ո՞ւր, Ո՞ւր։
Անդրէն, Նորէն։
Այժմ, Հիմա։
Յետոյ, Ետքը։
Այսօր, Այսօր։
Վաղիւ, Վաղը։

Կանուխ, Կանուխէն։
Անագան, Ուշ։
Երէկ, Երէկ։
Եռանդ, Առջի օրը։
Մերթ, Մէյմը։
Երբեմն, Ատենով, Ատեն մը։
Մանաւանդ, (տճ. Հուսուսա)։
Այսչափ, Այսչափ։
Այդչափ, Այդչափ։
Այնչափ, Այնչափ։
Այսքան, Այսքան։
Միանգամ, Անգամ մը։
Միւսանգամ, Ուրիշ անգամ մը։
Դարձեալ,
Վերստին, } Նորէն։
Կրկին,
Միայն,
Եւ եթ, } (տճ. Սադէ)։
Արդեօք,
Միթէ, } (տճ. Աճապա)։
Ապաքէն, Ի հարկէ։
Զեւ,
Զեւ եւս, } Դեռ չըրած։
Ամէն,
Ամէն ամէն, } Իրաւ։
Միշտ,
Հանապազ, } Ամէն ատեն։

172. Ածականներն ալ Մակբայ կ'ըլլան. ինչպէս,

Նոր (շինել)։ Քաջ (գիտել)։ Մեծամեծս (փքալ). Մեծ մեծ խօսիլ։

173. Մակբայը Ածականի և ուրիշ Մակբայի վրայ ալ կը դրուի. ինչպէս,



Յոյժ չար, Շատ գէշ։ Կարի չարաչար, Խիստ գէշաչար։

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ՇԱՂԿԱՊ

174. Շաղկապ կ'ըսուին այն բառերը, որ բառ բառի և խօսք խօսքի հետ կը կապեն։

175. Գլխաւոր գործածական շաղկապները հետեւեալներն են,

Եւ. եւս. Զի (որ, ինչու որ). Եթէ, Թէ (Բէօր, որ). Կամ. Իսկ. Բայց. Այլ. Սակայն. Թէպէտ. Քանզի. Քան. Արդ. Ապա. Ուրեմն. Ապա ուրեմն. Գոնեայ (գոնէ). Գէթ. եւն։

## ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

176. Ձայնարկութիւն կ'ըսուին այն տեսակ բառերը կամ ձայները, որոնք կիրք մը կը յայտնեն, երկիւղ, զարմանք, բարկութիւն, զզուանք, ցաւ, արհամարհութիւն են։

177. Գլխաւոր ձայնարկութիւնները հետեւեալներն են,

Ո՜հ. Ո՛. Ո՜վ. Օ՜ն. Վա՜հ. Աղէ՛. Բարէ՛. Եղո՜ւկ. Հա՜պա. Վա՜յ. Իցի՜ւ. Աւա՜ղ. Ա՜յ. եւն։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

# ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

178. Առաջին մասին մէջ խօսքի մասերը կազմող ութ տեսակ բառերուն բնութեան վրայ խօսեցանք. հիմա պիտի խօսինք թէ բառերը ինչ պաշտօն կը կատարեն խօսքի մէջ. և այն պաշտօնները կատարելու համար ինչպէս կը համաձայնին իրարու հետ:

179. Բառերը խօսքի մէջ հետեւեալ պաշտօններն ունին.

Ա. Տէր Բայի և Բայ.
Բ. Խնդիր և Խնդրառու.
Գ. Յատկացուցիչ և Յատկացեալ.
Դ. Բացայայտիչ և Բացայայտեալ.
Ե. Ածական և Գոյական.
Զ. Յարաբերական և Յարաբերեալ:

## ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

## ՏԷՐ ԲԱՅԻ ԵՒ ԲԱՅ

180. Խօսք մը կազմելու համար պէտք է որ բայ մ՚ըլլայ, անանկ որ առանց բայի խօսք չըլլար. ինչպէս, Աստուած երկինքն ու երկիրը ըսելով բան մը չենք հասկնար, պէտք է որ ստեղծեց բայը դնենք, Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը. հիմա խօսք եղաւ:

181. Բայը գործողութիւն կը նշանակէ. գործողութիւնը ընողին Տէր բայի կ՚ըսուի, և ով կամ ինչ բան հարցման կը պատասխանէ. ինչպէս. Հայրս եկաւ. Աշակերտները պտտեցան. Եկողը ո՞վ է, հայրս է, որովհետեւ հայրս Տէր բայն է եկաւ ին. պտտողը ինչ բան է, աշակերտները. որովհետեւ աշակերտները Տէր բայն է պտտեցան բային:



182. Տէր բային (1) ուղղական հոլով կը դրուի. ու բայն ալ թուով ու դէմքով անոր համաձայն. ինչպէս,

Ես սիրեցի. Ես սիրեցի: Մենք սիրեցաք. Մենք սիրեցինք:
Դու ասացեր. Դուն ըսիր: Դուք ասացէք. Դուք ըսիք:
Նա գործեաց. Ան գործեց: Նոքա գործեցին. Անոնք գործեցին:

Օրինակներէն կ՚երեւի որ թէ գրաբարի և թէ աշխարհաբարի մէջ բայերը թուով ու դէմքով իրենց Տէր բայերուն հետ համաձայն դրուած են:

183. Առաջին և երկրորդ դէմք ցուցընող բառերը Ես, Մենք, Դուն, Դուք դերանուններն ըլլալով, խօսքի մէջ երբ Տէր բայի ըլլան, կրնան զօրութեամբ դրուիլ. նոյնպէս Նա, Նոքա երրորդ դէմք ցուցընող դերանուններն ալ զօրութեամբ կրնան դրուիլ. ինչպէս վերի օրի-

---

1. Հոս արժան կը համարինք ծանուցանել որ Համաձայնութեան կանոնաց մէջ ուր որ գրաբարի խօսք չյիշուի, գիտնալու է որ այն կանոնները թէ գրաբարի և թէ աշխարհաբարի համար սահմանուած են. գրաբարի կամ աշխարհաբարի յատուկ կանոնները մասնաւոր կերպով ցուցուած են:

նակներուն Տէր բայերը Ես, Դու, Նա, Մեք, Դուք, Նոքա դերանունները չդրուելով կրնան բաւել.

| | | | |
|---|---|---|---|
| Սիրեցի. | Սիրեցի: | Սիրեցաք. | Սիրեցինք: |
| Առացեր. | Ըսիր: | Առացէք. | Ըսիք: |
| Գործեաց. | Գործեց: | Գործեցին. | Գործեցին: |

184. Երբ Տէր բային մէկէն աւելի ըլլայ, բայը յոգնակի կը դրուի. ինչպէս,

Պետրոս եւ Յովհաննէս «ելին» (1). Պետրոս ու Յովհաննէս «ելան»:

Նոյ եւ որդիքն «մտին». Նոյ ու տղաքները «մտան»:

185. Երբ այլ և այլ դէմքով Տէր բայեր գտնուին, բայը յոգնակի կը դրուի, ու նախապատիւ (2) դէմքին հետ կը համաձայնի. ինչպէս,

Ես եւ դու եւ բազմութիւնդ «աշակերտեսցուք». Ես ու դուն ու բազմութիւնդ «աշակերտենք»:

Դու եւ որդիքդ «պատուեսջիք». Դուն ու տղաքներդ «պատուէք»:

186. Գրաբարի մէջ Տէր բային սեռական ու տրական ալ կը դրուի, Անցեալ և Անորոշ դերբայներուն քով. ինչպէս,

Տեսեալ «Յիսուսի». «Յիսուս» տեսնելով:

Լուեալ «ձեր». «Դուք» լսելով:

1. Օրինակներուն մէջ չակերտով գրուած են այն բառերը որոնց վրայ է կանոնին գիտելիքը:

2. Առաջին դէմքը երկրորդէն, երկրորդն ալ երրորդէն նախադասելի է:



Ի մտանել «Նորա». «Անոր» մտնելու ատենը:

Ի կալ «Նմա» յաղօթս. «Անոր» աղօթք ընելու ատենը:

Ոչ կամիմք թագաւորել «դմա». «Ատոր» թագաւորելը չենք ուզեր:

Օրինակներէն կ'երևայ որ Անցեալ դերբային սեռական Տէր բայերը աշխարհաբարի մէջ ուղղական գրուած են. իսկ Անորոշ դերբային սեռական և տրական Տէր բայերը աշխարհաբարի մէջ սեռական գրուած են:

187. Յարակատար, Գերակատար և Ստորադասական անցեալ ժամանակներուն եզակի երրորդ դէմքերը գրաբարի մէջ ամէն դէմքի տեղ կը բանին եզակի և յոգնակի, երբ քովերնին սեռական հոլովով Իմ, Քո, Նորա, Մեր, Ձեր, Նոցա դերանունները Տէր բայի առնեն. ինչպէս,

| | | |
|---|---|---|
| Սիրեալ է իմ, (1) | փոխանակ ըսելու | Սիրեալ եմ ես. |
| Սիրեալ է քո, | » | Սիրեալ ես դու. |
| Սիրեալ է նորա, | » | Սիրեալ է նա. |
| Սիրեալ է մեր, | » | Սիրեալ եմք մեք. |
| Սիրեալ է ձեր, | » | Սիրեալ էք դուք. |
| Սիրեալ է նոցա, | » | Սիրեալ են նոքա: |
| Սիրեալ էր իմ, եւն: | » | Սիրեալ էի ես. եւն: |
| Սիրեալ իցէ իմ, եւն: | » | Սիրեալ իցեմ ես. եւն: |

1. Այս կարգը կրնայ փոխուիլ. Է իմ սիրեալ. Իմ սիրեալ է. Իմ է սիրեալ: Չ կամ Ոչ մասնիկով՝ ստիպաբար Էական բայը անցեալ դերբայէն առաջ կը դրուի. Չէ սիրեալ իմ. Իմ չէ սիրեալ. Չէ իմ սիրեալ.

# ԽՆԴԻՐ ԵՒ ԽՆԴՐԱՌՈՒ

188. Միայն բայն ու Տէր բային ամբողջ խօսք մը չեն կազմեր, այլ ուրիշ բառեր ալ պէտք են, որոնց խնդիր կ'ըսուի ։

Երբ ըսենք Աստուած ստեղծեց. բայ մը եւ իր տէրն ըլլալով, իմաստ մը կը յայտնէ, բայց ամբողջ խօսք մը չի կազմեր. Աստուծոյ ստեղծածներն ինչ ըլլալը իմանալու համար աւելցնելու ենք, Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը ։ Թէ որ ուզենք գիտնալ թէ Աստուած ուսկէ՛ ստեղծեր է երկինքն ու երկիրը. աւելցնելու ենք, Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը ոչնչէ ։ Թէ որ ուզենք գիտնալ թէ Աստուած երկինքն ու երկիրը քանի՛ օրուան մէջ ստեղծեց. աւելցնելու ենք, Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը ոչնչէ վեց օրուան մէջ, կամ Աստուած վեց օրուան մէջ ոչնչէ ստեղծեց երկինքն ու երկիրը ։ Այսպէս երկինքն ու երկիրը, ոչնչէ, վեց օրուան մէջ բառերով Աստուած ստեղծեց խօսքը ամբողջացաւ. ուստի այս բառերը խնդիր են ստեղծեց բային ։

189. Խնդիրը երկու է, Սեռի խնդիր և Բնութեան խնդիր ։

## 1. ՍԵՌԻ ԽՆԴԻՐ

190. Սեռի խնդիր են այն բառերը, որ իրենց բայերուն սեռը կ'որոշեն ։

191. Բայերուն սեռը երկու է, (տես 84)



Ներգործական և Չէզոք ։ Չէզոք բայերն իրենց սեռը որոշող յատուկ հոլովով խնդիր չունին. իսկ Ներգործական բայերը, ինչպէս նաև անոնց կրաւորականները իրենց սեռը որոշող յատուկ հոլովով խնդիր ունին ։

192. Ներգործական բայերը Հայցական, իսկ կրաւորական բայերը Բացառական հոլով Սեռի խնդիր կ'ուզեն. անանկ որ բայի մը ներգործական կամ կրաւորական ըլլալը Սեռի խնդիր ունենալէն պիտի իմացուի, կամ յայտնի կամ զօրութեամբ. ապա թէ ոչ՝ Չէզոք կ'ըլլան. ինչպէս,

Յովհաննէս մկրտեաց «զՅիսուս». Յովհաննէս մկրտեց «Յիսուսը» ։

Զո՞վ մկրտեց Յովհաննէս. — զՅիսուս. Յիսուսը. հայցական Սեռի խնդիր է մկրտեց ներգործական բային ։

Յիսուս մկրտեցաւ «ի Յովհաննէ». Յիսուս «Յովհաննէսէն» մկրտուեցաւ ։

Ումէ՞ մկրտեցաւ Յիսուս. — ի Յովհաննէ. Յովհաննէսէն. բացառական Սեռի խնդիր է մկրտուեցաւ կրաւորական բային ։

Այս օրինակէն կ'երևայ որ ներգործական բայը հայցական Սեռի խնդիր կ'առնէ այն բառը, որ իր գործողութեան առարկան է. իսկ կրաւորական բայը բացառական Սեռի խնդիր կ'առնէ այն բառը, ուսկէ որ կը կրուի, գործողութիւնը կը կրէ ։ Ասկէ կը հետևի որ ներգործական բային Սեռի խնդիրը՝ կրաւորականի մէջ Տէր բայի. և ներգործականին Տէր բային՝ կրաւորականին մէջ բացառական Սեռի խնդիր (1) կ'ըլլայ ։

---

1. Կրաւորականին քով գտնուող ամէն բացառական հո-

193. Բան մը անորոշ կ'ըլլայ, երբ առաջուց գիտցուած, խօսուած կամ լսուած չէ. պարթեւ գնաց, անորոշ է, որովհետեւ չգիտցուիր թէ ո՛ր պարթեւը գնաց. բայց երբ ըսեմ պարթեւը գնաց, որոշեալ կ'ըլլայ. որովհետեւ կը հասկցուի թէ առաջուց գիտցուած, խօսուած այս կամ այն պարթեւը գնաց։

Այսպէս՝ տուն շինեցի, անորոշ է, տուն մը շինեցի. բայց եթէ ըսեմ տունս շինեցի, որոշեալ կ'ըլլայ. վասն զի կը հասկցուի որ արդէն ունեցած տունս՝ հինցած կամ այրած ըլլալով, շիներ եմ։

194. Ներգործական բային գործողութեան առարկան, որ հայցական Սեռի խնդիրն է, եթէ որոշեալ բան է, սովորական ձեւը կը գրուի. իսկ եթէ անորոշ բան է, հայցականի զ նախդիրը չառներ, եւ Անորոշ կամ Աննախդիր հայցական կ'ըլլայ. ինչպէս,

Որթ «խաղող» բերէ. Որթը «խաղող» կը բերէ։

Որթը ի՞նչ բան կը բերէ. — խաղող. Աննախդիր հայցական Սեռի խնդիր է բերէ ներգործական բային. ինչու որ չյայտներ թէ այս կամ այն խաղողէն կը բերէ։

---

ով Սեռի խնդիր չէ. Ծառն ի պտղոյ իւրմէ ծանուցի. ծառը պտուղէն կը ճանչցուի։ Հոս ծանուցի կրաւորական բայի ձեւ ունի. բայց ի պտղոյ Սեռի խնդիր չէ. որովհետեւ ներգործականի դարձնելով, պտուղն ծանուցէ զծառն չըլլար. պտուղը ծառը չի ճանչեր. ուրեմն ծանուցի բայն ալ կրաւորական չէ, այլ չէզոք։



Շինեաց իւր «տուն». Իրեն «տուն» շինեց։

Առեալ «հաց» գոհացաւ. «Հաց» առնելով գոհացաւ։

195. Յատուկ անունները, դերանունները, եւ ս, դ, ն դիմորոշ յօդով կամ յատկացուցչով եղած բառերն ալ, որոշեալ բաներ ըլլալով, աննախդիր հայցական չեն ըլլար. ինչպէս, չըսուիր Տեսի Մարկոս, նա, այրն, հայր իմ. հապա պիտի ըսուի Տեսի զՄարկոս, զնա, զայրն, զհայր իմ։

## 2° ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

196. Ներգործական եւ կրաւորական բայերուն Սեռի խնդիրներէն զատ, խօսքի մը մէջ գտնուած ուրիշ ամէն բառ, որ հոլովուած են, Բնութեան խնդիր կ'ըսուին խնդրառու Բային, կամ Դերբային, կամ Ածական անունի մը, կամ Նախադրութեան մը. որոնց վրայ կարգաւ պիտի խօսինք։

197. Բնութեան խնդիր ամէն հոլով կրնայ դրուիլ։

### Ուղղական հոլով։

198. Էական բայերը ուղղական հոլով Բնութեան խնդիր կը պահանջեն, որ Տէր բային ինչ ըլլալը կը ցուցնէ. ինչպէս,

Աստուած է «հզօր». Աստուած «հզօր» է։

Աստուած ի՞նչ է, — հզօր. ուղղական բնութեան խնդիր է է բային։

Դու «մեծ» ես. Դուն «մեծ» ես։

Նոքա եղիցին ձեր «դատաւորք». Անոնք ձեր «դատաւորներն» ըլլան։

199. Անուանեմ, կոչեմ, կացուցանեմ, գնեմ, կարգեմ, Առնեմ բայերը, և ուրիշ ասանց մօտ նշանակութիւն ունեցող բայերը ուղղական հոլով բնութեան խնդիր կ'առնեն. ինչպէս,

Կոչեաց զանուն նորա «Յիսուս»։ Անոր անունը «Յիսուս» կանչեց, կամ դրաւ։

Անունը ի՞նչ կանչեց. — Յիսուս. ուղ. հոլով բնութեան խնդիր է կոչեաց ներգործական բային։

Ո՞ կացոյց զիս «դատաւոր»։ Ով զիս «դատաւոր» կեցուց։

Դու կոչեսցիս «Կեփաս»։ Դուն «Կեֆաս» կոչուիս, կամ ըսուիս։

200. Այս բայերուն ուղղական խնդիրը երբեմն յոգնակի ըլլայ, յոգնականացուցիչ *ին տեղ աւելի «ս» առնելով կը գրուի գրաբարի մէջ, իսկ աշխարհաբարի մէջ եզակի կը մնայ. ինչպէս,

Կալցի զնոսա «իշխանս»։ Զանոնք «իշխան» կեցուր։

Կալցի ներգործական բային ուղղական խնդիրն է իշխանս. աշխարհաբարի մէջ իշխան կ'ըսուի, և ոչ իշխաններ։

Եդ զձեզ «տեսուչս»։ Ձեզ «տեսուչ» դրաւ։

«Կենդանիս» արար զմեզ։ Մեզ «կենդանի» ըրաւ։

201. Այն ուղղականը որ խօսքի մէջ առանց պաշտօնի է, և երկրորդ դէմքի անձի մը կանչելու կերպ մ'ունի, կոչական բառ կ'ըսուի՝ ինչպէս,



«Բժի՛շկ», բժշկեա զանձն քո։ «Բժիշկ», բժշկէ քու անձդ։

Լուր, «որդեա՛կ», խրատու հօր քո։ Մտիկ ըրէ, «որդեակ», քու հօրդ խրատին։

«Ո՛վ տէր», ո՞չ այս բանք են իմ։ «Ո՛վ տէր», ասոնք չէ՞ն իմ խօսքերս։

Կոչականը ով բառին հետ ալ կը գործածուի։

Սեռական հոլով.

202. Էական բայերը սեռական հոլով բնութեան խնդիր ալ կ'առնեն, և սեփականութիւն մը, բան մը մէկուն ըլլալը կամ վերաբերիլը կը ցուցընեն. ինչպէս,

«Իմ» է հանճար և զօրութիւն։ Հանճար ու զօրութիւնն «իմս» է։

«Քո» է տիւ և «քո» է գիշեր։ «Քուկդ» է ցերեկը և «քուկդ» է գիշերը։

Աշխարհաբարի մէջ իմս, քուկդ աւելի ստացական դերանուան ուղղական կը սեպուին։ Բայց ստացութեան եղծելն եղաւ. հոս ալ եղծելն բառը աւելի տրական հոլով համարելու է քան թէ սեռական. ինչպէս կ'ըսուի նաև Իմին ըլլայ, Քեզի ըլլայ, Անոր ըլլայ։

203. Գրաբարի մէջ էական բայի քով սեռական հոլովը ունենալ ալ կը նշանակէ. ինչպէս,

Են իմ եղբարք հինգ։ Ոյր իցեն երկու հանդերձք։

Ասոնք աշխարհաբարի մէջ ունիմ բայով կ'ըսուին. Ես հինգ եղբայր ունիմ։ Ով որ երկու հանդերձ ունի։

204. Գոյն, արժէք ցուցընող բառերը սեռական հոլով բնութեան խնդիր կ'ըլլան, ծա-

խօսելու և գնելու նշանակութիւն ունեցող բայերու քով. ինչպէս,

Վաճառեցին զՅովսէփ «քսան դահեկանի». «Քսան դահեկանի» ծախեցին Յովսէփը։

Գնեաց «յիսուն դահեկանի». «Յիսուն դահեկանի» ծախու առաւ։

205. Տարիք ցուցընող բառերն ալ սեռական հոլով Բնութեան խնդիր կ՚ըլլան. ինչպէս,

Վախճանեցաւ Յովսէփ «ամաց հարիւր եւ տասանց». «Հարիւր տասը տարուան» մեռաւ Յովսէփ։

Էր «ամաց երկոտասանից». «Տասներկու տարուան» էր։

Ինչպէս օրինակներէն կ՚երեւայ, թէ գրաբարի և թէ աշխարհաբարի մէջ տարիք ցուցընող բառերը սեռական դրըւած են. բայց աշխարհաբարի մէջ կ՚ըսուի նաև Հարիւր տասը տարեկան. Տասներկու տարեկան. տարուան սեռականին տեղ գործածուած։

Գործիական հոլով.

206. Գործիականը գործողութեան գործիքը կամ միջոցը կը ցուցընէ. որո՞վ կամ ինո՞վ բառով հարցման կը պատասխանէ. ինչպէս,

Ամենայն ինչ «նովաւ» եղեւ. Ամէն բան «անով» եղաւ։

«Զգեստուք» պատսպարիմք. «Զգեստներով» կը պատսպարուինք։

207. Գրաբարի մէջ Անորոշ դերբային գործիականը իր բային վրայ կը դրուի, խօսքին հաստատութիւն և սաստկութիւն տալու համար. աշխարհաբարի մէջ այդ սաստկութիւնը ուրիշ



բառով կը յայտնուի, ինչպէս օրինակներէն կ՚երեւայ։

«Օրհնելով» օրհնեցից զքեզ. «Շատ» պիտի օրհնեմ զքեզ։

«Բազմացուցանելով» բազմացուցից զզաւակ քո. «Խիստ» պիտի շատցընեմ զաւակներդ։

«Աճելով» աճէին եւ «բազմանալով» բազմանային. «Երթալէ երթալ» կամ «Երթալով» կ՚աճէին ու կը շատնային։

208. Ժամանակ ցուցընող բառերը հայցական հոլով Բնութեան խնդիր կ՚ըլլան. զ նախդրով կը դրուին երբ որոշեալ ժամանակ կը ցուցընեն, առանց նախդրի՝ երբ անորոշ ժամանակ կը ցուցընեն. և ո՞րչափ ատեն կամ ո՞րչափ ատենի մէջ հարցման կը պատասխանեն. ինչպէս,

«Զգիշերն ողջոյն» աշխատեցաք. «Բոլոր գիշերը» աշխատեցանք։

Ո՞րչափ ատեն աշխատեցաք. — զգիշերն ողջոյն. բոլոր գիշերը. հայց. Բն. խնդիր է։

«Ծառայեաց «ամս եօթն». «Եօթը տարի» ծառայեց։

Ո՞րչափ ատեն ծառայեց. — ամս եօթն. եօթը տարի. հայցական (անորոշ) Բն. խնդիր է։

«Զվեց օր» արար Տէր Աստուած զերկինս եւ զերկիր. «Տէր Աստուած վեց օրուան մէջ ստեղծեց երկինքն ու երկիրը»։

Ո՞րչափ ատենի մէջ ստեղծեց. — զվեց օր. վեց օրուան մէջ. հայց. Բն. խնդիր է։

Հոս աշխարհաբարը մէջ բառով սեռական դրուած է. և չէ թէ հայցական՝ առջի օրինակներուն պէս։

209. Ճամբայ կամ տեղ նշանակող բառերն ալ հայցական բնութեան խնդիր կը դրուին, տրականի կամ ներգոյականի տեղ, թէ գրաբարի և թէ աշխարհաբարի մէջ. ինչպէս,

Երթիջիք «զճանապարհն» ձեր, (ընդ ճանապարհ). Ձեր «ճամբան» գացէք:

Նոքա բնակեցան «զեզր» ծովուն, (յեզր կամ ընդ եզր). Անոնք ծովուն «եզրը» բնակեցան:

210. Չափի և ձևի բառերն ալ հայցական բնութեան խնդիր կ'ըլլան, փոխանակ տրականի կամ գործիականի. բայց աշխարհաբարի մէջ միայն չափի բառերը հայցական կ'ըլլան, ձևի բառերը գործիական կը դրուին. ինչպէս,

Բարձրանայ «հնգետասան կանգուն», (ի հնգետասան կանգուն կամ հնգետասան կանգնաւ). «Տասնհինգ կանգուն» բարձրանալ:

ԶՏարօն «զձև և զօրինակ» Բաբելոնի շինէր, (ձևով և օրինակաւ կամ ի ձև և յօրինակ). Կը շինէր Տարօն քաղաքը Բաբելոնին «ձևովն ու օրինակով»:

211. Տաս բայեր իրենց արմատը, կամ արմատին մօտ նշանակութիւն ունեցող բառերը հայցական հոլովով բնութեան խնդիր կ'առնուն. որ աշխարհաբարի մէջ գործիական կ'իմացուի. ինչպէս,

«Զմի սէր» սիրեցին զՅիսուս, (այսինքն՝ միով սիրով). «Մէկ սիրով» սիրեցին Յիսուսը:

Մեռանել «զպատուհասական մահն». «Պատժական մահով» մեռնիլ:



Երկեան «երկիւղ մեծ». «Մեծ վախով» վախցան:

Աշխարհաբարի մէջ ալ այս կանոնը փոքր ինչ գործածութիւն մ'ունի. «Լաց մը լացաւ որ ամենուն սիրտը ճմլեցաւ»: «Անձրև մը եկաւ որ բոլոր անդաստանները խորտակուեցաւ»:

Տրական հոլով.

212. Տրականը երկու կերպ է, վերջահոլով տրական՝ որ Յունուան ու Գերմանուան հոլովմանց մէջ դրուած տրականն է. և նախդրիւ տրական՝ որ նախդիրներուն մէջ ցուցուած է (տես 77):

1. Վերջահոլով տրական (1).

213. Վերջահոլով տրականը որո՞, ինչո՞ւ (կիմէ՞, նէյէ՞) հարցման կը պատասխանէ. ինչպէս,

Խոստովանել «քահանային». «Քահանային» խոստովանիլ:

Ո՞ւր խոստովանիլ. — քահանային. վերջ. տր. բնութեան խնդիր է:

Պատմել «եղբօրն». «Եղբօրը» պատմել:

Հրամայել «ծառային». «Ծառային» հրաման ընել:

214. Քանի մը ներգործական բայեր, ինչ-

---

1. Վերջահոլով տրականը կանոնաւոր և արտաքին հոլովմանց մէջ Յունականին հետ նմանութիւն ունի. քանի մը բառերու վերջահոլով տրականի ձևն է ու վերջաւորութիւնը. իսկ Հնդոյ Յունականաց և Գերմանուանց մէջ վերջ. տրականը Յունականէն բոլորովին տարբեր է:

պէս են Ցողնել, Տիրել, ևն, հայցականի տեղ վերջահոլով տրական Սեռի խնդիր կ'առնեն. ինչպէս,

Սէր «ամենայնի» յաղթէ. Սէրը «ամէն բանի» կը յաղթէ:

Տիրեաց «ծովու» եւ «ցամաքի». «Ծովու» և «ցամաքի» տիրեց:

Օրինակներէն կ'երևայ որ աշխարհաբարի մէջ ալ տրական գործած են Ցողնել. Տիրել բայերուն Սեռի խնդիրները. Կշտամբել բայը գրաբարի մէջ տրական կ'ուզէ. բայց աշխարհաբարի մէջ հայցական. Պաշտպանեաց Իսրայելի. Իսրայէլը պաշտպանեց կամ Իսրայէլին պաշտպան եղաւ: Նմանապէս Աղաչել բայը գրաբարի մէջ հայցական Սեռի խնդիր. բայց աշխարհաբարի մէջ տրական խնդիր կ'առնէ. Աղաչեմ զքեզ. Քեզի կ'աղաչեմ:

2. Նախդրիւ տրական.

215. Հայցականին զ նախդիրը վերցնելով, տեղը ի կամ յ (1), առ, ց, ընդ, ըստ նախդիրները դնելով, նախդրիւ տրական հոլովը կը շինուի. (տես 77, 78):

216. Երբ բայը մէկ տեղաց միւս տեղ շարժում կը նշանակէ, ու կը հարցուի ո՞ւր, (նէ՞րէյէ); ի կամ յ նախդրով տրական խնդիր (2) կ'առնէ. աշխարհաբարին մէջ աննախդիր տրական կ'ըլլան, այսինքն ուղղականի ձևով կը մնան. ինչպէս,

Երթալ «ի տուն». «Տուն» երթալ:

Ո՞ւր երթալ, — ի տուն. նախդրիւ տրական բնութեան խնդիր է:

Մտանել «ի նաւ». «Նաւ» մտնել:

Հանել «ի ցամաք». «Ցամաք» հանել:

Ելանել «ի լեառն». «Լեռն» ելնել:

Փախչել «յանապատ». Անապատները փախչիլ:

217. Առ նախդրով տրական խնդիր կ'առնէ բայը, երբ դէպ ի անձ մը կամ շնչաւոր մը շարժում նշանակէ. աշխարհաբարի մէջ վերջահոլով տրական (1) կը գործածուի. ինչպէս,

Երթալ «առ իշխանն». «Իշխանին երթալ:

Մատչել «առ քահանայս». «Քահանաներուն» մօտենալ:

218. Ց նախդրով տրական խնդիր կ'առնեն Ասել (2), Հարցանել, Տալ բայերը. աշխար-

---

1. Ինչպէս յայտնի է. ի նախդիրը բաղաձայն գրով սկսուած բառերուն առջև կը գրուի, ի Բանս. ի Քաղաք. բայց յ նախդիրը ձայնաւորով սկսուածներուն առջև. յԵւրոպա, յԵկեղեցի:

2. Նախդրիւ տրականը գրաբարի մէջ գործիականի պէս ալ ունի. ի ձայն բարձր. բարձր ձայնով: ի քրտան երեսաց. Քրտամբ երեսաց:

---

1. Անորոշ դերբայներն ալ ուրիշ բայի քով ի, առ, առ ի նախդիրներով տրական խնդիր կ'ըլլան, որ աշխարհաբարի մէջ վերջահոլով տրական կը գործածուի. "Ի լալ կամ առ ի լալ եկեալ են. "Լալու եկած են: Շատ անգամ առանց նախդրի ալ կը դրուի, և կ'ըլլայ աննախդիր տրական. Եկիր "փրկել զարարածս. Արարածները "փրկելու եկար. հոս փրկել աննախդիր տրական է. կ'ըսուի նաև ի փրկել, առ ի փրկել:

2. Ըսել, Ըսեմ բայը աշխարհաբարի մէջ անուանել բայի նշանակութեամբ հայցականի տեղ վերջ. տրական խնդիր կ'առնէ. Ասոր ի՞նչ կ'ըսեն. այսինքն Ասոր ի՞նչ կ'անուանեն:

հաբարի մէջ վերջահոլով տրական · ինչպէս ,

Ասել « ցնա » · « Անոր » ըսել ։

Հարցանել « ցտէրն » · « Տէրոջը » հարցնել ։

Տալ « ցպանդոկապետն » · « Պանդոկապետին » տալ ։

219. Ընդ նախդրով տրականը գրաբարի յատուկ գործածութիւններ ունի ·

Ա· Բանի մը մէջէն անցնիլ նշանակելու համար՝ ընդով նախդրիւ տրական կը գործածուի · ինչպէս ,

Մտանել « ընդ նեղ դուռն » · « Նեղ դռնէն » մտնել ։

Գնալ « ընդ արտորայսն » · « Արտերուն մէջէն » անցնիլ ։

Օրինակներէն կ'երեւայ որ , աշխարհաբարի մէջ · բացառական հոլովով · կամ սեռական հոլովի հետ դրուած մէջէն բառով բացատրուեր են ։

Բ· Տեղւոյ մը բոլոր տարածութեանը վրայ եղած բան մը ցուցնելու համար՝ տեղւոյն անունը ընդով նախդրիւ տրական կը դրուի · ինչպէս ,

Շրջել « ընդ քաղաքս » եւ « ընդ գիւղս » · « Ամէն քաղաքները եւ գիւղերը » շրջիլ ։

Անուն Քրիստոսի փառաւորեսցի « ընդ ամենայն տիեզերս » . Քրիստոսի անունը « բոլոր տիեզերքին » փառաւորուի ։

Օրինակներէն կ'երեւայ որ · աշխարհաբարի մէջ · աննախդիր տրական հոլովի հետ դրուած ամէն · բոլոր բառերով բացատրուեր են ։



Գ· Կիրք ցուցընող բայերը , ինչպէս են Խնդալ , Ուրախանալ , Տրտմել , Նախանձել , Ցասնուլ , Զարմանալ , եւն , ընդ նախդրով տրական խնդիր կ'առնեն · ինչպէս ,

Մի նախանձիր « ընդ չարս » · « Չարերուն վրայ » մի նախանձիր ։

Զարմանային « ընդ յամելն » նորա · Անոր « ուշանալուն վրայ » կը զարմանային ։

Օրինակներէն կ'երեւայ որ · աշխարհաբարի մէջ · սեռական հոլովի հետ դրուած վրայ բառով բացատրուեր են ։

220. Ըստ նախդրով տրականը գրաբարի մէջ կը գործածուի անցնելու յարմար նշանակութիւնով խօսքի մէջ · բայց սահմանէ դուրս ելնել կամ անցնիլ մը կը նշանակէ · որ աշխարհաբարի մէջ ալ անդին , դուրս բառերով կը բացատրուի · ինչպէս ,

Ելանել « ըստ քաղաքն » · « Քաղաքէն դուրս » ելնել ։

Անցանել « ըստ լեառն » · « Լեռնէն անդին » անցնիլ ։

## Բացառական հոլով ·

221. Բացառական հոլովը ուսկի՞ց , ի՞նչ բանէ հարցման կը պատասխանէ · ինչպէս ,

« Ի մէ՞նջ » եւ թէ « ի թշնամեաց մերոց » . « Մեզմէ՞ » են թէ մեր « թշնամիներէն » ։

« Ի պտղոյ » անտի ծառն ճանաչի · Ծառը « պտուղէն » կը ճանչցուի ։

### Պարառական հոլով.

222. Պարառական հոլովը (տես 75) մէկուն կամ բանի մը բոլորտիքը կամ վրան (էթրաֆըն-տա կամ իւսթիւնտէ) կը նշանակէ, աշխարհաբարի մէջ ալ սեռական հոլովի հետ դրուած բոլորտիք կամ վրայ բառերով կը բացատրուի. ինչպէս,

Խռնեցան «զնովաւ» ժողովուրդք բազումք. Շատ ժողովուրդ «անոր բոլորտիքը» լեցուեցան։

Անկաւ «զպարանոցաւ» նորա. Անոր «պարանոցին վրայ» ինկաւ։

Զորձ «զգլխով» արկանել. «Գլխուն վրայ» յորձ ձգել կամ առնել։

223. Գրաբարի մէջ Պարառականը (1) անորոշ ժամանակ մը ցուցնելու համար ալ կը գրուի. ինչպէս,

Զմիջաւուրբ. / Զհասարակ աւուրբ. / Զմիջօրէիւ. } Կէս օրուան ատենները։

Զհասարակ գիշերաւ. / Զմէջ գիշերաւ. } Կէս գիշերուան ատենները։

Զայնու ժամանակաւ. Այն ատենները։

### Պատմական հոլով.

224. Պատմական հոլովը (տես 76) մէկուն կամ բանի մը վրայօք (էօթիւրիւ) կը նշանակէ. աշխարհաբարի մէջ ալ սեռական հոլովի հետ դրուած վրայօք բառով կը բացատրուի. ինչպէս,

Եղեւ «զնմանէ» ամբաստանութիւն. «Անոր վրայօք» ամբաստանութիւն եղաւ։

Ունել ոխս «զումեքէ». «Մէկուն մը վրայօք» ոխ ունենալ։

225. Կախել, Կապել, Ունել, կամ Կալնուլ, Բուռն հարկանել բայերուն քով պատմականը, աշխարհաբարի մէջ բացառականի կը դառնայ. ինչպէս,

Կախել «զփայտէ». «Փայտէն» կախել։

Կալաւ «զձեռանէ». «Ձեռքէն» բռնեց։

Բուռն եհար «զհանդերձից». «Հանդերձներէն» բռնեց։

### Ներգոյական հոլով.

226. Ներգոյական հոլովը (տես 79) ո՞ւր, ի՞նչ բանի մէջ (նէրէտէ, նէտէ՞) հարցման կը պատասխանէ, և բային տեղ մը դադարումը կը նշանակէ. աշխարհաբարի մէջ սեռական հոլովի հետ դրուած մէջ կամ վրայ բառերով կը բացատրուի. կամ՝ ինչպէս նախդրիւ տրականին մէջ ըսինք (տես 216), ներգոյականն ալ աշխարհաբարի մէջ աննախդիր ներգոյական կրնայ ըլլալ. ինչպէս,

Կալ «ի տան». «Տան մէջ», կամ «Տունը» կենալ։

---

1. Գրաբարի մէջ Ընդունել բայի հետ դրուած Պարառականը ուրիշ նշանակութիւն մը կ'ունենայ. Ընդունել զպատուիրանս. Պատուէրը լսել։ Ընդունել զխրատս. Խրատը լսել։ Ընդունել զաւուրս. Օրերն առնել, ծերանալ։

Ո՞ր կ՚ինայ, — ի տուն · տան մէջ. Ներգոյական Բնութեան խնդիր է ։

Յիսուս մնաց « ի խաչին » · Յիսուս « խաչին՝ վրայ » մնաց ։

Բնակիմք « ի քաղաքս » · « Քաղաքներուս մէջ », կամ « Քաղաքները » կը բնակինք ։

227. Ներգոյական հոլովը Ե՞րբ · Ե՞նչ ատեն (ո՞ր ժամ) հարցման ալ կը պատասխանէ · աշխարհաբարի մէջ դարձեալ սեռական հոլովի հետ դրուած ատեն բառով կը բացատրուի · ինչպէս,

Տեղայր մարգարիտ « ի հարսնութեան » Սաթինկան · Մարգարիտ կը տեղար Սաթինիկին « հարսնութեան ատենը » ։

Ե՞րբ կը տեղար մարգարիտ · — Սաթինիկին հարսնութեան ատենը ։ Ներգ · հոլով Բնութեան խնդիր է ։

« Յաւուրս « Հերովդի արքայի · Հերովդէս թագաւորին « օրերը », կամ « օրերուն մէջ », կամ « օրով »։

Երկրորդ օրինակին մէջ յստակ գրաբարին աշխարհաբարը երեք կերպով բացատրուած է · Ընտանեկիր ներգոյական · մէջ բառով · և գործիական ձևով ։

### ԲԱՅԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆԸ

228. Ինչպէս բայերը, նոյնպէս ալ բայանունները, այսինքն բայի արմատ կամ արմատէ ածանցեալ անունները, իրենց նշանակութեանը համեմատ Բնութեան խնդիր կը պահանջեն այն հոլովով, որ իրենցմէ եղած բայը կը պահանջէ · ինչպէս,

Ծնունդ ի կուսէն · Կոյսէն ծնունդ ։



Ընծայումն ի տաճար · Տաճար կամ ի տաճար ընծայումը ։

Հայհոյութիւն զհոգւոյն · Հոգւոյն դէմ հայհոյութիւն ։

Օրինակներէն կ՚երևայ որ աշխարհաբարի մէջ ալ բայանունները խիստ վայելչաբար իրենց խնդիր կ՚առնեն ։

229. Գրաբարի մէջ ներգործական և կրաւորական բայանուններու քով սեռական հոլովով (իբրև Յատկացուցիչ) դրուած խնդիրը՝ հայցական և բացառական Սեռի խնդրի նշանակութիւն կրնայ ունենալ · ինչպէս,

Ճաշակմամբ պտղոյն · այսինքն ճաշակելով ըզպտուղն ։

Ծննդեամբ կուսին · այսինքն ծնանելով ի կուսէն ։

### ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒ ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆԸ

230. Ածական անուններն ալ թէ գրաբարի և թէ աշխարհաբարի մէջ իրենց նշանակութեանը համեմատ այլևայլ հոլովով խնդիր կ՚առնեն · ինչպէս,

Արժանի պատժոյ · Պատիժի արժանի ։

Պատժոյ սեռական խնդիր է Արժանիին ։

Ազատ ի բամբասանաց · Բամբասանքէ ազատ ։

Զուրկ յիմաստութենէ · Իմաստութենէ զուրկ ։

Ի բամբասանաց · յիմաստութենէ բաց · խնդիր են Ազատ Զուրկ ածականներուն ։

Աղքատ մօր (1) . Մօրը աղքատ :

Մօրը գործիական խնդիր է Աղքատին :

231. Որոշեալ և Անորոշ Թուականները սովորաբար բացառական խնդիր կ՚առնեն . ինչպէս .

Մին ի հինգ . Հինգէն մէկը :

Որո՞նցմէ մէկը . — ի հինգ , հինգէն . բաց . խնդիր է Մին թուականին :

Առաքելոց զերկուս յաշակերտացն . Աշակերտներէն երկուքը խրկեց :

Ոմն ի նոցանէ . Անոնցմէ մէկը :

Այլք յիմաստնոց . Իմաստուններէն ուրիշները :

Աշխարհաբարի մէջ կ՚ըսուի նաև Երկու աշակերտ . Ուրիշ իմաստուններ . Թուականը իբրև ածական գրուած :

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆԸ

232. Առաջին մասին նախդիր գլխոյն մէջ (տես 82) գործածական նախադրութիւններէն մէկ քանին աւանդեցինք . հիմա անոնց այլևայլ հոլովով խնդրառութեան վրայ համառօտիւ պիտի խօսինք (2) :

---

1. Աշխարհաբարի մէջ սովորաբար ածականներն իրենց խնդրէն ետև կը դրուին . գրաբարի մէջ ալ այս բանս կրնայ ըլլալ . Պարծոյ որդւոյ : Յիմաստութենէ զուրկ : Մօրը աղքատ :

2. Գիտնալ պէտք է որ նախադրութիւններէն ոմանք իրենց ձևովը աշխարհաբարի մէջ ալ գործածութիւն ունին միևնոյն կամ ուրիշ հոլովով . և ոմանք աշխարհաբարի մէջ ուրիշ ձևով գործածութիւն ունին միևնոյն կամ ուրիշ հոլովով . և ոմանք ալ թէև աշխարհաբարի մէջ ուրիշ գործածութիւն ունին , բայց գրաբարի ձևովն ալ խիստ վայելչութեամբ կը գործածուին . ինչպէս կը տեսնուի օրինակներէն :



### 233. Սեռական հոլովով :

« Վասն » մարդոյ . Մարդոյ « վասն » (1) . Մարդուն « համար » :

« Սակս » ձեր , « Ի սակս » ձեր . Ի ձեր « սակս » (2) . Ձեզի համար :

Աշխարհաբարի մէջ համար , սեռական հոլովով կը բանի :

« Ի վերայ » երկրի . Յերկրի « վերայ » . Երկրէ « վրայ » :

« Առ ընթեր » նորա . Առ նորա « ընթեր » . Անոր « քով » :

« Զկնի » չարին . Զչարին « զկնի » } Չարէն « ետևէն » :<br>
« Զհետ » չարին . Զչարին « զհետ » }

« Յանդիման » տանն . Տանն « յանդիման » } Տանը « դիմացը » :<br>
« Հանդէպ » տանն . Տանն « հանդէպ » }

« Առաջի » իմ . Իմ « առաջի » . Իմ « առջևս » :

« Առանց » իմ . « Առանց » ինծի . (տճ . պէնսիզ) :

---

1. Նախադրութիւններէն ոմանք իրենց խնդրէն միայն առաջ կը դրուին , ոմանք միայն ետև , ոմանք ալ առաջ ու ետև :

2. Գիտնալ պէտք է որ առաջ ու ետքը դրուող նախադրութիւնները երբ Ի , Յ , Զ նախդիր ունենան , նախդիրը առաջ դրուող խնդրոյն վրայ կը դրուի . ինչպէս եղեր է վերը , Ի ձեր սակս . և երբեմն ալ երկուքին վրայ կը կրկնուի . ինչպէս որ ետքը պիտի տեսնուի :

Աշխարհաբարի մէջ առանց · տրական հոլովով կը բանի ։

«Յետ» այսորիկ · Ասկէ «ետքը» ։

Աշխարհաբարի մէջ ետքը · բացառականով կը բանի ։

## 234. Գործիական հոլովով.

«Հանդերձ» մարբն · Մարբն «հանդերձ» ·
Մօրը «հետ» (պիրլէ) ։

Աշխարհաբարի մէջ հետ (պիրլէ) · սեռականով կը բանի ։

Ձեռօք «չափ» · Ձեռքի «ղադ» ։

Մահու «չափ» · Մեռնելու «ղադ» ։

Աշխարհաբարի մէջ ղադ · տրականով կը բանի ։

## 235. Հայցական հոլովով.

«Իբրեւ» զձեզ
«Որպէս» զձեզ } Ձեզի «պէս» ։

Աշխարհաբարի մէջ պէս · տրականով կը բանի ։

«Քան» զԱմենայնմարդ · Ամենմարդէ «աւելի» (1) ։

## 236. Նախդրիւ տրականով.

«Մինչ» ի գետին · «Մինչեւ» գետին ։

«Մինչեւ» ցԴաւիթ · «Մինչեւ» Դաւիթ ։

Աշխարհաբարի մէջ մինչեւ՝ աննախդիր տրականով կը բանի . իսկ թէ որ խնդիրը դերանուն ըլլայ · վերջանալով տրականով. Մինչեւ անոր· Մինչեւ ինծի ։

## 237. Բացառական հոլովով.

«Բաց» ի քէն · Քեզմէ «զատ» ։

Ի սկզբանէ «հետէ» · Սկիզբէն «ի վեր» ։

---

1. Քան նախադրութիւնով բաղդատութիւն մը կը ցուցանի · Ամենմարդէ աւելի գեղեցիկ ։



238. Նախադրութիւն բռնած ուրիշ շատ հոլովառու բառեր կան, որ այլեւայլ հոլովներով կը բանին, և վարժութեամբ հնար է սորվիլ ։

239. Առ, Ընդ, Ըստ, որ նախդրիւ տրական հոլով չինող նախդիր են (տես 217, 219, 220), գրաբարի մէջ երբեւ նախադրութիւն այլեւայլ հոլովով կը բանին · աշխարհաբարի մէջ ուրիշ բառերով և միենոյն կամ ուրիշ հոլովով նոյն նշանակութիւնը կը յայտնեն · ինչպէս,

240. Առ սեռականով՝ համար կը նշանակէ. ինչպէս,

Առ ամօթոյ · Ամօթի համար ։

Առ իմոյ յիշատակի · Իմ յիշատակիս համար ։

Գործիականով կը նշանակէ ատենը, երբ ատեն ցուցընող բառի կամ մարդու անունի վրայ դրուի · ինչպէս,

Առ ջրհեղեղաւն · Ջրհեղեղին ատենը ։

Առ Հայկաւ · Հայկայ ատենը ։

Դարձեալ գործիական հոլովով՝ քովը, քովէ ի վեր, վրայ նշանակութիւնները կուտայ, երբ տեղ ցուցընող բառերու վրայ դրուի · ինչպէս ։

Առ գետովն · Գետին քով ։

Առ ափամբք · Եզերքէն ի վեր ։

Առ ճանապարհաւ · Ճամբու վրայ ։

Դարձեալ գործիականով, համեմատութիւն մ'ալ կը ցուցընէ · ինչպէս,

Զի՞նչ է յարդ «առ ցորենով» · Յարդը «ցորենին քով» ինչ է ։

Տրական հոլովով կը նշանակէ քովը , ինչպէս ,

Առ նմա . Անոր քովը :

Առ դրանն . Դրանը քովը կամ մօտը :

Առ նոսա (1) . Անոնց քով .

Առ ձեզ . Ձեր քովը :

Բացառականի հետ առանց ի կամ յ նախդրին՝ համար կը նշանակէ . ինչպէս ,

Առ երկիւղէ . Երկիւղի համար :

Առ հակառակութենէ . Հակառակութեան համար :

Բացառականին ի կամ յ նախդրովը՝ կողմէն կը նշանակէ . ինչպէս ,

Առ ի մարդկանէ . Մարդոց կողմէն :

Առ յԱստուծոյ . Աստուծոյ կողմէն :

241. Ընդ սեռական հոլովով՝ փոխանակ կամ տեղը կը նշանակէ . ինչպէս ,

Ընդ նորա . Անոր տեղը :

Ակն ընդ ական . Աչքի տեղ աչք :

Գործիականով տակը կը նշանակէ . ինչպէս ,

Ընդ ծառով . Ծառին տակը :

Ընդ հողով . Հողին տակը :

Տրականով հետ կը նշանակէ . ինչպէս ,

Ընդ նմա . Անոր հետ :

Ընդ նոսա . Անոնց հետ :

---

1. Առ , ընդ , ըստ , երբ իբրև նախադրութիւն յոգնակի նախդրիւ տրական հոլով խնդիր առնեն , հոլովին ի կամ յ նախդիրները չեն դրուիր . չըսեր Առ ի նոսա . Առ ի ձեզ .



242. Ըստ տրական հոլովով պէս , չափ , (կէօրէ) կը նշանակէ . ինչպէս ,

Ըստ բանի քում . Քու խօսքիդ պէս :

Ըստ գործս . Գործերուն չափ (կէօրէ) :

Կ'ըսուի նաև ըստ մարդ . ըստ տուն . Մարդ գլուխ . տուն գլուխ :

---

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ ԵՒ ՅԱՏԿԱՑԵԱԼ

243. Յատկացուցիչ կ'ըսուի այն սեռական հոլովը, որ մէկ ուրիշ անուան որո՞ւն ըլլալը կը ցուցընէ . ուստի այն անունն ալ կ'ըսուի յատկացեալ : Ինչպէս երթէ ըսենք Պետրոսին տունը, կ'իմանանք որ տունը Պետրոսինն է . ուստի Պետրոսին յատկացուցիչ կ'ըլլայ տունին և տունն ալ յատկացեալ :

244. Գրաբարի մէջ յատկացուցիչը յատկացեալէն ետքը կը դրուի , և աշխարհաբարի մէջ յառաջ . և որո՞ւն (ումին) հարցման կը պատասխանէ . ինչպէս ,

Օրհնութիւն « հօր » . « Հօր » օրհնութիւնը :

Բեռն « ընկերին » . « Ընկերին » բեռը :

Աշխարհաբարի մէջ ալ յատկացուցիչը գրաբար ձևով յետադաս կրնայ ըլլալ . Փրկիչ « աշխարհի » . Սրբութիւն « սրբոց » :

245. Գրաբարի մէջ ալ աշխարհաբարի պէս

Յատկացուցիչը Յատկացեալէն առաջ կրնայ դրուիլ, և Յատկացեալին նախդիրն առնել. ինչպէս.

Փրկեցաւ «յառիւծուցն» բերանոյ, (ի բերանոյ առիւծուցն). «Առիւծներուն» բերնէն ազատուեցաւ։

Յովսէփ մեկնեաց «զփարաւոնի» զերազն, (զերազն փարաւոնի). Յովսէփ «Փարաւոնին» երազը մեկնեց։

Աշխարհաբարի մէջ ալ երբ նախդիր ունենայ յետադաս յատկացեալը, նախադաս Յատկացուցչին վրայ կը դրուի. Յովսէփ «զՓարաւոնի» երազը մեկնեց։

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ԲԱՑԱՅԱՅՏԻՉ ԵՒ ԲԱՑԱՅԱՅՏԵԱԼ

246. Բացայայտիչ կ'ըսուի այն գոյականը, որ ուրիշ գոյականէ մ'ետքը դրուելով, անոր ո՛վ կամ ի՛նչ ըլլալը կը յայտնէ կամ կ'որոշէ։ ինչպէս եթէ ըսենք Աշոտ սպարապետ, կ'իմանանք թէ Աշոտ բանծնիս սպարապետ Աշոտն է. և եթէ ըսենք Սպարապետն Աշոտ, կ'իմանանք թէ սպարապետ բանծնիս Աշոտն է և ոչ ուրիշը։ Առաջինին մէջ Սպարապետ Բացայայտիչ է՝ Աշոտ Բացայայտեալ. Երկրորդին մէջ Աշոտ Բացայայտիչ է՝ Սպարապետ Բացայայտեալ։

247. Թէ գրաբարի և թէ աշխարհաբարի մէջ Բացայայտիչը իր բացայայտեալէն ետքը կը



դրուի, և անոր հետ թուով ու հոլովով կը համաձայնի. ինչպէս,

Յինէն «ի կնոջէ» Սամարացւոյ. Ինծմէ՝ Սամարացի «կնիկէ» մը։

Ի կնոջէ, կնիկէ՝ Բացայայտիչ է. Յինէն, Ինծմէ՝ Բացայայտեալ։

Թողեալ ի բաց զփառս հայրենի «զքահանայութիւն» (1). Մէկդի Թողլով հայրենի փառքը «քահանայութիւնը»։

Քահանայութիւն Բացայայտիչ է՝ զփառսն Բացայայտեալ։

248. Գրաբարի մէջ երբ Բացայայտեալը նախդրիւ հոլով է, Բացայայտիչը առանց նախդրի կրնայ դրուիլ. ինչպէս,

Զառաւօտ խաղաղութեան «Քրիստոս» սիրով ի մեզ ընկալցուք. Խաղաղութեան առաւօտը «Քրիստոս» սիրով մեր մէջ ընդունինք։

249. Մարդու յատուկ անունները երբ Բացայայտիչ ըլլան, իրենց նախադաս Բացայայտեալին հետ կը համաձայնին գրաբարի մէջ. իսկ աշխարհաբարի մէջ ածականի պէս յառաջ կը դրուին անհամաձայն. ինչպէս,

---

1. Բացայայտչին ու իր բացայայտեալին մէջ գործածուած կ'իմացուին այսինքն, այս է, ասեմ, անուն բառերը. Յինէն այսինքն ի կնոջէ Սամարացւոյ. նոյն։ Այս բառերը յաճախ ալ կը դրուին. Ի նա հաւատացին. այսինքն ի Յիսուս Քրիստոս։ Հրաշալի պատուով յարգեալ. բանիւ ասեմ և մտօք։ Ահա մի Մատթէոս անուն։

Մարգարէին «Եսայեայ» · «Եսայի» մարգարէին։
Յարքայէն «Սողոմոնէ» · «Սողոմոն» թագաւորէն։

Աշխարհաբարի մէջ ալ մարդու անունները յետադաս բացայայտիչ ըլլալով համաձայն կը դրուին փոխակերպաբար · Իրենց հօրը «Յովհաննու» էջման։ Ս. Գրիգորի հօր «Անակին» դաւաճանութը։

250. Տեղւոյ յատուկ անուններն ալ երբ բացայայտիչ ըլլան, յատկացուցչի պէս սեռական կը դրուին գրաբարի մէջ. իսկ աշխարհաբարի մէջ ածականի պէս յառաջ կը դրուին անհամաձայն. ինչպէս,

Ի լեռնէ «Սիոնի» · «Սիոն» լեռնէն։

Ի գաւառին «Այրարատայ» · «Այրարատ» գաւառին մէջ։

251. Թէ մարդու և թէ տեղւոյ յատուկ անունները գրաբարի մէջ ալ ածականի պէս յառաջ կը դրուին. մարդու անունները թէ՛ համաձայն և թէ՛ անհամաձայն, իսկ տեղւոյ անունները միշտ անհամաձայն կը մնան. ինչպէս,

«Ի Տրայիանոսէ» արքայէ · «Տրայիանոս» թագաւորէ։

«Կղէոպատրաւ» դստերըն · «Կղէոպատրա» աղջկանը։

Այս օրինակներուն մէջ մարդու անունները նախադաս համաձայն դրուած են. աշխարհաբարի մէջ անհամաձայն։ Սակայն աշխարհաբարի մէջ ալ այս համաձայնութիւնը երբեմն կ'ըլլայ. Անանիայ մարգարէին. և այլն.

«Յովհաննու» կայսերէ · «Օգոստոս» կայսրէն։

Այս օրինակին մէջ մարդու անունը նախադաս անհամաձայն դրուած է, ինչպէս նաև աշխարհաբարին մէջ։



«Ի Սիոն» լեռնէ · «Սիոն» լեռնէ։

Այս օրինակին մէջ տեղւոյ անունը նախադաս անհամաձայն դրուած է. ինչպէս նաև աշխարհաբարին մէջ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ԱԾԱԿԱՆ ԵՒ ԳՈՅԱԿԱՆ (1)

252. Ածականը (2) գրաբարի մէջ գոյականէն առաջ ալ կը դրուի, ետքն ալ. իսկ աշխարհաբարի մէջ միշտ առաջ կը դրուի. գրաբար կ'ըսուի Մեծ տուն, Տուն մեծ. իսկ աշխարհաբար կ'ըսուի Մեծ տուն։

253. Ածականը աշխարհաբարի մէջ առաջ դրուելով, միշտ անհամաձայն կը մնայ. իսկ գրաբարի մէջ առաջ դրուելով սովորաբար անհամաձայն կը մնայ (3), և միայն գոյականին

---

1. Ածականը գոյականէն որոշելու դիւրին միջոցն է. երբ բան (մէկ) բառը դրուի անունի մը քով և յարմարի. ածական է. ճերմակ բան. տգեղ բան. ուստի ճերմակ, տգեղ ածական են. թուղթ բան, տուն բան չըսուիր. ուստի թուղթ, տուն գոյական են։

2. Ածական անունը խօսքի մէջ մինակ կրնայ գործածուիլ գոյականաբար։

3. Գրաբարի մէջ նախադաս ածականը եթէ միավանկ կամ երկավանկ բառ ըլլայ. կը համաձայնի գոյականին հետ. Մեծաւ ուրախութեամբ. Քաջի առն. Բարեաց գործոց։ Բազմավանկ ածականն ալ կը համաձայնի, երբ գոյականին ու ածականին մէջ ուրիշ բառ մտնէ. Երջանկացն Հերովդեսեան Հռոմայ արքային. այսինքն երջանիկ արքային։

Նախդիրը ինք կ'առնէ․ իսկ նոյնը գրուելով, ամբողջաբար կը համաձայնի (1), Նախդիրը նախադաս գոյականին վրայ կը մնայ (2) · ինչպէս ,

Նախադաս անհամաձայն․

| | | |
|---|---|---|
| Ո․ | Իմաստուն այր․ | Իմաստուն արք․ |
| Ս․ | Իմաստուն առն․ | Իմաստուն արանց․ |
| Գ․ | Իմաստուն արամբ․ | Իմաստուն արամբք․ |
| Հ․ | զԻմաստուն այր․ | զԻմաստուն արս․ |
| Տ․ | Իմաստուն առն․ | Իմաստուն արանց․ |
| Բ․ | յԻմաստուն առնէ․ | յԻմաստուն արանց։ |

Այսպէս պէտք է հոլովել

Խաւարին բանտ, խաւարին բանտի․
Մտերիմ բարեկամ, մտերիմ բարեկամի․
Իմաստուն որդի, իմաստուն որդւոյ․
Յորդառատ աղբիւր, Յորդառատ աղբեր․ ևն։

Աշխարհաբարի մէջ խաւար բանը․ խաւար բանի․ խաւար բանով, խաւար բանը․ խաւար բաներ․ խաւար բաներու․ և այն կը հոլովի միշտ նախադաս և անհամաձայն․

Յետադաս համաձայն․

| | | |
|---|---|---|
| Ո․ | Այր իմաստուն․ | Արք իմաստունք․ |
| Ս․ | Առն իմաստնոյ․ | Արանց իմաստնոց․ |

1․ Յետադաս ածականը կրնայ նաև անհամաձայն գրուիլ մէկ անգամ․ Աջոյ հայրական (հայրականաւ)․ Տանն Արծրունի (Արծրունեաց)։

2․ Նախդիրը յետադաս ածականին կամ գոյականին վրայ կրնայ գրուիլ․ Որպէս զարդն ոսկեղէնս ի վերայ նորա․ Յամենայն ի կէսն տէ։



| | | |
|---|---|---|
| Գ․ | Արամբ իմաստնով․ | Արամբք իմաստնովք․ |
| Հ․ | զԱյր իմաստուն․ | զԱրս իմաստունս․ |
| Տ․ | Առն իմաստնոյ․ | Արանց իմաստնոց․ |
| Բ․ | յԱռնէ իմաստնոյ․ | յԱրանց իմաստնոց։ |

Այսպէս պէտք է հոլովել

Ծառ վայրենի, ծառոյ վայրենւոյ․
Բարեկամ մտերիմ, բարեկամի մտերմի․
Եղբայր սիրելի, եղբօր սիրելւոյ․
Գանձ ծածկեալ, գանձի ծածկելոյ․ ևայլն։

Աշխարհաբարի մէջ իմաստուն մարդ․ իմաստուն մարդու․ իմաստուն մարդէն, իմաստուն մարդով և այլն կը հոլովի միշտ նախադաս ու անհամաձայն։

## ՈՐՈՇԵԱԼ ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

254․ Գրաբարի մէջ որոշեալ թուականները իրենց գոյականին հետ նախադաս կամ յետադաս համաձայնութեան կամ անհամաձայնութեան յատուկ կանոններ ունին, բայց աշխարհաբարի մէջ միշտ նախադաս մնալով անհամաձայն կը մնան․ ինչպէս պիտի տեսնուի։

255․ Մի թուականը եզակի ըլլալով, եզակի գոյական կ'ուզէ, և թէ նախադաս ու թէ յետադաս կը համաձայնի․ ինչպէս,

| | | |
|---|---|---|
| Ո․ | Մի այր․ | Այր մի |
| Ս․ | Միոյ առն․ | Առն միոջ․ |
| Գ․ | Միով արամբ․ | Արամբ միով․ |
| Հ․ | զՄի այր․ | զԱյր մի․ |
| Տ․ | Միում առն․ | Առն միում․ |
| Բ․ | ի Միոջէ առնէ․ | յԱռնէ միոջէ։ |

Աշխարհաբար. Մէկ մարդ, մէկ մարդու, մէկ մարդով. և այլն. որ նախադաս հոլովուած են, Մի այր ին աշխարհաբարն է. իսկ Այր մի յետադասին աշխարհաբար կ'ըլլայ Մարդ մը, մարդու մը, և այլն. վասն զի առաջինին նշանակութիւնը չունի. Մի թուականը յետադաս ըլլայ նէ, աւելի անորոշ թուականի (մը) նշանակութիւն կ'ունենայ:

256. **Երկու, Երեք, Չորս** անեզական ըլլալով, յոգնակի գոյական կ'ուզեն, և թէ՛ նախադաս ու թէ՛ յետադաս կը համաձայնին. ինչպէս,

| | | |
|---|---|---|
| Ո. | Երկու աւուրք. | Աւուրք երկու. |
| Ս. | Երկուց աւուրց. | Աւուրց երկուց. |
| Գ. | Երկու աւուրբք. | Աւուրբք երկու. |
| Հ. | զԵրկուս աւուրս. | զԱւուրս երկուս. |
| Տ. | Երկուց աւուրց. | Աւուրց երկուց. |
| Բ. | յԵրկուց աւուրց. | յԱւուրց երկուց: |

Երեք վկայք, երից վկայից, երիւք վկայիւք. Վկայք երեք, վկայից երից, վկայիւք երիւք, և այլն:

Չորք քաղաքք, չորից քաղաքաց, չորիւք քաղաքօք. Քաղաքք չորք, քաղաքաց չորից, քաղաքօք չորիւք, և այլն:

Աշխարհաբար, Երկու օր, երկու օրէ, երկու օրով. Երեք վկայ, երեք վկայէ, երեք վկայով. և այլն: Աշխարհաբարի մէջ որոշեալ թուականներուն գոյականները սովորաբար եզակի կը դրուին. իսկ յոգնակի Երկու օրեր, երկու օրերու. և այլն քիչ անգամ կը գործածուին:

257. **Հինգ** էն անդին մնացած թուականները թէ՛ եզակի և թէ՛ յոգնակի գոյական կրնան ունենալ. թէ որ նախադաս ըլլան՝ եզակիի մէջ անհամաձայն, բայց յոգնակիի մէջ թէ՛ անհամաձայն և թէ՛ համաձայն կրնան դրուիլ.



(բաց ի Ուղղական և Հայցական հոլովներէն, որ եզակի կը մնան) ինչպէս,

| Եզակի | Յոգնակի | |
|---|---|---|
| Անհամաձայն | Անհամաձայն | Համաձայն |
| Հինգ օր. | Հինգ աւուրք. | Հինգ աւուրք. |
| Հինգ աւուր. | Հինգ աւուրց. | Հնգից աւուրց. |
| Հինգ աւուրբ. | Հինգ աւուրբք. | Հնգօք աւուրբք. |
| զՀինգ օր. | զՀինգ աւուրս. | զՀինգ աւուրս. |
| Հինգ աւուր. | Հինգ աւուրց. | Հնգից աւուրց. |
| ի Հինգ օրէ. | ի Հինգ աւուրց. | ի Հնգից աւուրց: |

**Իսկ** թէ որ յետադաս ըլլան, միշտ յոգնակի գոյական կ'ուզեն և կը համաձայնին, բաց ի Ուղղական և Հայցական հոլովներէն, որ եզակի կը մնան. ինչպէս,

| | | |
|---|---|---|
| Ո. | Աւուրք հինգ | կանայք տասն. |
| Ս. | Աւուրց հնգից. | կանանց տասանց. |
| Գ. | Աւուրբք հնգօք. | կանամբք տասամբք. |
| Հ. | զԱւուրս հինգ. | զկանայս տասն. |
| Տ. | Աւուրց հնգից. | կանանց տասանց. |
| Բ. | յԱւուրց հնգից: | ի կանանց տասանց: |

## ԱՆՈՐՈՇ ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

258. **Ոմն**, Ոք անորոշ թուականները միայն մարդու համար կը զրուցուին, և սովորաբար գոյականէն ետքը կը դրուին ու կը համաձայնին. ինչպէս,

| | | |
|---|---|---|
| Ո. | Եղբայր ոմն. | Եղբարք ոմանք. |
| Ս. | Եղբօր ուրումն. | Եղբարց ոմանց. |

Գ. Եղբարբ ոմամբ. Եղբարբք ոմամբք.
Հ. ՚ի Եղբայր ոմն. ՚ի Եղբարս ոմանս.
Տ. Եղբօր ումեմն. Եղբարց ոմանց.
Բ. յԵղբօրէ ումեմնէ. յԵղբարց ոմանց։

Եղբայր ոք, եղբօր ուրուք, եղբարբ ոմամբ, եւայլն։

Ոմն, ով ի աշխարհաբար եզակի գործածութիւնն է Մէ-կը, Մէկու մը, որ գոյականի հետ այսպէս կը գործածուի, Մէկ եղբայր մը, Մէկ եղբօր մը, եւայլն. կամ Եղբայր մը, Եղբօր մը, եւայլն։ Նոյն մը անորոշն է որ աշխարհաբարի մէջ յե-տադաս կը մնայ եզակի գոյականի քով. իսկ յոգնակի կ'ըս-ուի Մէկ քանի եղբայրներ, Մէկ քանի եղբայրներու։ Մը անորո-շին՝ գործածութիւնը մարդու անուանց քով՝ գրաբարի յետադաս Մի իւր նշանակութիւնն ունի. Այր մի, Մարդ մը, ինչպէս քիչ մը վերն ըսինք. և իրերու քով գրաբարի Ինչ, Ինչ ի նշանակութիւնն ունի, Գործ ինչ՝ Գործ մը, ինչպէս յետոյ կանոնին մէջ պիտի տեսնենք։

259. Ինչ, ինչ անորոշ թուականները միայն հոգի չունեցող բաներուն և իրաց համար կը գրուցուին. Ինչ սովորաբար յետադաս կը համաձայնի, յոգնակի գոյականի հետ ալ եզակի հոլովելով. ինչպէս,

Ո. Գործ ինչ. Գործք ինչ.
Ս. Գործոյ իրիք. Գործոց իրիք.
Գ. Գործով իւիք. Գործովք իւիք.
Հ. ՚ի Գործ ինչ. ՚ի Գործս ինչ.
Տ. Գործոյ իմիք. Գործոց իմիք.
Բ. ՚ի Գործոյ իմեքէ. ՚ի Գործոց իմեքէ։

Ինչ անորոշն ալ ամէն հոլովի տեղ կը դըր-ուի, այսինքն անփոփոխ է. ինչպէս,



Գործ ինչ, գործոյ ինչ, զգործ ինչ. Գործք ինչ, գործոց ինչ, զգործս ինչ, եւայլն։

Աշխարհաբար, Գործ մը, գործի մը, գործով մը եւայլն։

260. Այլ անորոշ թուականը թէ՛ նախադաս և թէ՛ յետադաս կը համաձայնի գոյականին հետ. ինչպէս,

Այլ քաղաք, այլոյ քաղաքի, զայլ քաղաք. Այլ քաղաքք, այլոց քաղաքաց, զայլ քաղաքս. եւն։
Քաղաք այլ, քաղաքի այլոյ, զքաղաք զայլ. Քաղաքք այլք, քաղաքաց այլոց, զքաղաքս զայլս. եւայլն։

Աշխարհաբար, Ուրիշ քաղաք, ուրիշ քաղաքի, եւայլն։

261. Միւս անորոշ թուականը եզակի գոյական կ'ուզէ, ու նախադաս կը համաձայնի. ինչպէս,

Միւս օր, միւսոյ աւուր, միւսով աւուրբ, եւայլն։

Աշխարհաբար, Միւս օր, միւս օրէ, միւս օրով. յոգնակի ալ կ'ըսուի Միւս օրեր, միւս օրերուն, եւայլն։

262. Ամենայն թէ որ նախադաս ըլլայ չհամաձայնիր. ինչպէս,

Ամենայն այր, ամենայն առն, զամենայն այր, եւայլն։

Իսկ թէ որ յետադաս ըլլայ կը համաձայնի, բայց յոգնակի գոյականին քով ալ եզակի կը հոլովի. ինչպէս,

Ո. Այր ամենայն. Արք ամենայն.
Ս. Առն ամենայնի. Արանց ամենայնի.

Գ. Արամբ ամենայնիւ. Արամբք ամենայնիւ.
Հ. զԱյր ամենայն. զԱրս ամենայն.
Տ. Առն ամենայնի. Արանց ամենայնի.
Բ. յԱռնէ ամենայնէ. յԱրանց ամենայնէ:

Աշխարհաբար. Ամէն մարդ, ամէն մարդու. Ամէն մարդէն. ամէն մարդոց, եւայլն:

## ԱԾԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

263. **Այս, Այդ, Այն** ցուցական դերանունները գոյականի հետ թէ՛ նախադաս և թէ՛ յետադաս կրնան ըլլալ: Երբ նախադաս ըլլան, կարճ հոլովներով կը համաձայնին. ինչպէս,

Ո. Այն տուն. Այն տունք.
Ս. Այնր տան. Այնց տանց.
Գ. Այնու տամբ. Այնու տամբք.
Հ. զԱյն տուն. զԱյն տունս.
Տ. Այնմ տան. Այնց տանց.
Բ. յԱյնմ տանէ. յԱյնց տանց:

Իսկ յետադաս՝ երկայն հոլովներով կը համաձայնին. ինչպէս,

Ո. Տունն այն. Տունքն այնոքիկ.
Ս. Տանն այնորիկ. Տանցն այնոցիկ.
Գ. Տամբն այնուիկ. Տամբքն այնոքիւք.
Հ. զՏունն զայն. զՏունսն զայնոսիկ.
Տ. Տանն այնմիկ. Տանցն այնոցիկ.
Բ. ի Տանէն յայնմանէ (1) ի Տանցն յայնցանէ:

1. Գրաբարի մէջ Բացառական, Նախդրիւ տրական և Ներգոյական հոլովներու քով այս, այդ, այն ցուցական դե-



Ինչպէս կ'երեւայ, Այն յետադաս եղած ատեն, գոյականին ծայրը ն դիմորոշ յօդ մը դրուեր է. այսպէս ս կը դրուի երբ Այս դերանունն ըլլայ, դ՝ երբ Այդ դերանունը:

Աշխարհաբարի մէջ ալ կը հոլովի այսպէս, Այս տունս, այս տանս, Այդ տունդ, այդ տանդ, եւայլն, ս, դ, ն դիմորոշ յօդերով. բայց աւելի յաճախեալ է ն կամ ը յօդով հոլովել այսպէս,

Ո. Այս տունը. Այդ կղզին Այն քաղաքը.
Ս. Այս տանը. Այդ կղզւոյն. Այն քաղաքին.
Գ. Այս տընով. Այդ կղզւով. Այն քաղաքով.
Բ. Այս տընէն. Այդ կղզիէն. Այն քաղաքէն.

Յոգնակի, Այս տըներս, այս տըներուս. Այդ կղզիները, այդ կղզիներուն. Այն քաղաքները, այն քաղաքներուն, եւայլն:

264. **Սոյն, Դոյն, Նոյն** ցուցական դերանուններն ալ գոյականի հետ միայն նախադաս կ'ըլլան և կը համաձայնին. ինչպէս,

Ո. Նոյն մարմին. Նոյն մարմինք.

րանուններու կամ ս, դ, ն դիմորոշ յօդերու տեղ կը դըրուին քանի մը մակբայներ, որ անոնց պաշտօնը կը վարեն: Բացառականի հետ կը դրուին Աստի, Այտի, Անտի. ինչպէս, ի տանէ աստի (ի տանէս յայսմանէ). ի տանէ այտի (ի տանէդ յայդմանէ). ի տանէ անտի (ի տանէն յայնմանէ): Նախդրիւ տրականի հետ կը դրուին Այսր, Այդր, Անդր. ինչպէս, ի տուն այսր, այդր, անդր (ի տունս յայս, ի տունդ յայդ, ի տունն յայն): Ներգոյական հոլովի հետ կը դրուին Աստ, Այդր, Անդ. ինչպէս, ի տան աստ, այդր, անդ (ի տանս յայսմիկ, ի տանդ յայդմիկ, ի տանն յայնմիկ):

| | | |
|---|---|---|
| Ս. | Նորին մարմնոյ. | Նոցին մարմնոց. |
| Գ. | Նովին մարմնով. | Նոքին մարմնովք. |
| Հ. | զՆոյն մարմին. | զՆոյն մարմինս. |
| Տ. | Նմին մարմնոյ. | Նոցին մարմնոց. |
| Բ. | ի Նմին մարմնոյ. | ի Նոցին մարմնոց։ |

Աշխարհաբարի մէջ Սոյն, Դոյն, Նոյն կը գործածուին գոյականի հետ, նախադաս եւ անհամաձայն մնալով, Սոյն մարմինը, սոյն մարմնոյն, սոյն մարմնէն. Սոյն մարմինները, եւայլն. Բայց աւելի Այս, Այդ, Այն դերանունները կը գործածուին. ինչպէս վերը տեսանք։

265. Իմ, Քո, Մեր, Ձեր, Իւր Ստացական դերանունները սովորաբար գոյականէն յետադաս և նախադաս կրնան ըլլալ, ու անոր հետ կը համաձայնին. ինչպէս,

Յետադաս համաձայն.

| | | |
|---|---|---|
| Ո. | Եղբայր իմ. | Եղբարք իմ. |
| Ս. | Եղբօր իմոյ. | Եղբարց իմոց. |
| Գ. | Եղբարբ իմով. | Եղբարբք իմովք. |
| Հ. | զԵղբայր իմ. | զԵղբարս իմ. |
| Տ. | Եղբօր իմում. | Եղբարց իմոց. |
| Բ. | յԵղբօրէ իմմէ. | յԵղբարց իմոց։ |

Նախադաս համաձայն.

| | | |
|---|---|---|
| Ո. | Իմ եղբայր. | Իմ եղբարք. |
| Ս. | Իմոյ եղբօր. | Իմոց եղբարց. |
| Գ. | Իմով եղբարբ. | Իմովք եղբարբք. |
| Հ. | զիմ եղբայր. | զիմ եղբարս. |
| Տ. | Իմում եղբօր. | Իմոց եղբարց. |
| Բ. | յիմմէ եղբօրէ. | յիմոց եղբարց։ |



Այսպէս կը հոլովին.

Հայր քո, հօր քո կամ քոյոյ. Քոյր մեր, քեռ մերոյ։ Տուն ձեր, տան ձերոյ։ Բան իւր, բանի իւրոյ. եւայլն։

Աշխարհաբարի մէջ Ստացականները գոյականի հետ հոլովելու ատեն իրենք նախադաս եւ անփոփոխ կը մնան, միայն գոյականին ծայրը յօդ կը դրուի. Իմով հոլովուածը ս կ'առնէ, Քուով հոլովուածը դ, Իւր կամ Իրով հոլովուածը ն կամ ը. իսկ Մեր, Ձեր, Իրենց Ստացականներուն հետ հոլովուած գոյականներուն ծայրը ն կամ ը յօդ կը դրուի. ինչպէս, Իմ եղբայրս, իմ եղբօրս. Քու եղբայրդ, քու եղբօրդ. Իր եղբայրը, իր եղբօրը. Մեր եղբայրը, մեր եղբօրը. Ձեր եղբայրը, ձեր եղբօրը. Իրենց եղբայրը, իրենց եղբօրը, եւայլն։

266. Թէ գրաբարի և թէ աշխարհաբարի մէջ շատ անգամ Ստացական դերանունը չդրուիր, և գոյականին ծայրի ս, դ, ն դիմորոշ յօդերը անոնց նշանակութիւնը կը պահեն (1). ինչպէս,

Ծածկեա զգլուխդ, (զգլուխ քո). Գլուխդ (քու գլուխդ) ծածկէ։

Աշխարհաբարի մէջ եթէ Իմ, Քու, Իւր Ստա-

1. Գոյականի մը ծայրը դրուած դիմորոշ յօդերը ս, դ, ն ցուցական դերանուններու ոյժ ալ կ'ունենան. Զօրէնս, այսինքն Զօրէնս այսորիկ. Ի տանէդ, այսինքն ի տանէդ այդմանէ. եւայլն։

ցականները մէկդի թողուին, գոյականը ս, դ, ն (ը) յօդերով կը հոլովի այսպէս,

Խօսքս, խօսքիս, խօսքովս. Խօսքերս, խօսքերուս, խօսքերովս.

Խօսքդ, խօսքիդ, խօսքովդ. Խօսքերդ, խօսքերուդ, խօսքերովդ.

Խօսքը, խօսքին, խօսքովը. Խօսքերը, խօսքերուն, խօսքերովը։

Իսկ եթէ Մեր, Ձեր, Իրենց ստացականները մէկդի թողուին, ան ատեն գոյականը եթէ բազմավանկ է, իր ծայրը կ'ընդունի Նիս, Նիդ. Նին մասնիկները, եւ կը հոլովի այսպէս,

Ծաղիկ-նիս (մեր ծաղիկը), ծաղիկ-նուս, ծաղիկով-նիս.

Ծաղիկներ-նիս, (մեր ծաղիկները), ծաղիկներ-նուս, ծաղիկներով-նիս։

Ծաղիկ-նիդ (ձեր ծաղիկը), ծաղիկ-նուդ, ծաղիկով-նիդ.

Ծաղիկներ-նիդ (ձեր ծաղիկները), ծաղիկներ-նուդ, ծաղիկներով-նիդ։

Ծաղիկ-նին (իրենց ծաղիկը), ծաղիկ-նուն, ծաղիկով-նին.

Ծաղիկներ-նին (իրենց ծաղիկները), ծաղիկներ-նուն, ծաղիկներով-նին։

Եթէ գոյականը միավանկ է, ան ատեն անոր յոգնականին վրայ կ'աւելցուին Նիս, Նիդ, Նին մասնիկները, եւ նշանակութիւնը թէ՛ եզակի եւ թէ՛ յոգնակի կ'ըլլայ. միայն գործիականին մէջ տարբերութիւն կ'ունենայ, այսինքն եզակի գործիականը եզակի կը մնայ, եւ յոգնակիին մէջ յոգնականացուցիչ մասնիկը կ'առնէ. ինչպէս,



| Եզակի. | Յոգնակի. |
|---|---|
| Գործ-երնիս (մեր գործը). | Գործեր-նիս (մեր գործերը) |
| Գործ-երնուս. | Գործեր-նուս. |
| Գործով-նիս. | Գործերով-նիս։ |
| Գործ-երնիդ (ձեր գործը). | Գործեր-նիդ (ձեր գործերը) |
| Գործ-երնուդ. | Գործեր-նուդ. |
| Գործով-նիդ. | Գործերով-նիդ։ |
| Գործ-երնին (իրենց գործը). | Գործեր-նին (իրենց գործերը). |
| Գործ-երնուն. | Գործեր-նուն |
| Գործով-նին. | Գործերով-նին։ |

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԵՒ ՅԱՐԱԲԵՐԵԱԼ

267. Յարաբերական Որ դերանունը դէմք չունի, բայց ամէն դէմքի անուն կամ դերանուն մէջ կը բերէ. ինչպէս,

Ես որ խօսիմ. Դու որ խօսիս. Նա որ խօսի։

Առաջինին մէջ որ յարաբերականը կը յարաբերէ Ես առաջին դէմք դերանունը, երկրորդին մէջ Դուն, երրորդին մէջ Նան։

Յարաբերականին ցուցըցած անունը կամ դերանունը Յարաբերեալ կ'ըսուի. վերի օրինակին մէջ Ես, Դու, Նա բառերը Յարաբերեալ են։

268. Յարաբերականը՝ թէ՛ գրաբարի և թէ՛ աշխարհաբարի մէջ, իր Յարաբերեալէն

նաքը կը դրուի՝ իրեն վերաբերեալ բոլոր բառերովը. թուով իր Յարաբերեալին հետ կը համաձայնի, իսկ հոլովով իր բային հետ. ինչպէս,

Ծառայ՝ «որ գիտիցէ զկամս տեառն եւ ոչ առնիցէ», արբցէ գան բազում.

Այն ծառան «որ տէրոջը կամքը գիտնայ ու չընէ» շատ ծեծ պիտի ուտէ:

Որը կը յարաբերի ծառայ բառը, իրեն վերաբերեալ գիտիցէ զկամս տեառն եւ ոչ առնիցէ բառերով ետքը գրուեր է:

Բանն «զոր խօսեցայ ձեզ», հոգի է եւ կեանք. Այն խօսքը «որ ձեզի խօսեցայ», հոգի ու կեանք է: (1)

Բանն եւ զոր թուով համաձայն են, բայց հոլովով անհամաձայն. Բանն ենթակայ է իր բային (էին), զոր Սեռի խնդիր է իր բային (խօսեցային).

269. Յարաբերականը իրեն վերաբերեալ բառերով կրնայ առաջ ալ դրուիլ գրաբարի մէջ. ինչպէս,

Ո՛վ է «որ ծնաւ» արքայն հրէից. Ո՛վ է հրէից թագաւորը որ ծնաւ:

Որ ծնաւ կը յարաբերի արքայն հրէից ը, եւ առաջ դրուեր է:

Աշխարհաբարի մէջ ալ վայելչաբար կրնայ ըսուիլ, Ո՛վ է որ ծնաւ՝ հրէից թագաւորը: Որ իր ընկերը

---

1. Յարաբերականին իրեն վերաբերեալ բառերովը Միջանկեալ խօսք կ՚ըսուի. Յարաբերեալն ալ իր բառերով՝ Գլխաւոր խօսք. ինչպէս վերի օրինակներուն մէջ որ գիտիցէ զկամս տեառն եւ ոչ առնիցէ. զոր խօսեցայ ձեզ Միջանկեալ խօսք են. և ծառայ արբցէ գան բազում, բանն հոգի է և կեանք՝ Գլխաւոր խօսք:



կը սիրէ, նա՛ Աստուած սիրած կ՚ըլլայ: Աշխարհաբարի մէջ խօսքի մը պարբերութեան սկիզբը որ յարաբերականով սկսիլ սովորութիւն եղած չէ, այլ ով որով կ՚ըսկսուի. Ով որ իր ընկերը կը սիրէ. բայց որ իր ընկերը կը սիրէ սխալ չէ, գրաբարի մօտ դարձուածք մ՚է:

270. Յարաբերականը Ուղղական և Հայցական հոլովներուն մէջ եզակի ձեւով, յոգնակի բառ կը յարաբերէ. ինչպէս,

Երանի այնոցիկ որ (որք) սուրբ են սրտիւք. Երանի անոնց՝ որ (որոնք) սրտով սուրբ են:

Զգործս զոր (զորս) ես գործեմ. Այն գործերը որ (որոնք) ես կը գործեմ:

271. Գրաբարի մէջ Յարաբերեալ դերանունը շատ անգամ զօրութեամբ կը մնայ, և Յարաբերականը անոր հոլովով կը դրուի. ինչպէս,

Որում խնդրէ ի քէն տուր. (Տուր այնմ՝ որ խնդրէ ի քէն). Տուր անոր՝ որ քեզմէ կը խնդրէ:

Դու ո՛չ մտանես, եւ զորս մտանէին՝ ընդդէմ կացեալ արգելուս. (զայնոսիկ՝ որք մտանէին ընդդէմ կացեալ արգելուս). Դուն չես մտներ, և անոնք որ կը մտնէին՝ դէմ կեցած կ՚արգիլես:

Աշխարհաբարի մէջ ալ այս ոճը կրնայ գործածուիլ, Նրանք որոնց սիրած կը հաստատէ. այսինքն անոնց որ սիրած կը հաստատէ:

272. Յարաբերականը յատկացուցիչ եղած ատեն, միշտ իր յատկացեալէն առաջ կը դրուի, և եթէ յատկացեալը նախդիր ունի, նախ-

դիրն ինք կ'առնէ, կամ երկուքին վրայ ալ կը դրուի · ինչպէս,

Կինն «որոյ անունն» պատմի ընդ ամենայն աշխարհ · Այն կինը «որուն անունը» բոլոր աշխարհ կը պատմուի :

Դուստր «ընդ որոյ իմաստութիւնն» զարմանային Յոյնք. Դուստրը «որուն իմաստութեանը վրայ» Յոյները կը զարմանային :

Դարեհ՝ «զորոյ զմայրն» կալաւ Աղեքսանդր · Դարեհ՝ «որուն մայրը» բռնեց Աղեքսանդր :

273. Որ, Անորոշ ածականի պաշտօն ալ կը վարէ, և անձանց ու իրաց վրայ կ'ըսուի, բայց ան ատեն յարաբերական դերանուն չէ, և +ի՞Տ Հա՞նկը նշանակութիւնը կ'ունենայ · գրաբարի մէջ գոյականէն նախադաս ըլլալով, կը համաձայնի անոր հետ, իսկ աշխարհաբարի մէջ նախադաս անհամաձայն կը մնայ · ինչպէս,

Ո՞ր քաղաք, որո՞յ քաղաքի, որո՞վ քաղաքաւ · Ո՞ր քաղաքք, որո՞ց քաղաքաց, որո՞վք քաղաքօք, զո՞ր քաղաքս · Ո՞ր քաղաքը, ո՞ր քաղաքին, ո՞ր քաղաքով, ո՞ր քաղաքները, ևայլն :

274. Որ, Հարցական չեղող խօսքերու մէջ ալ կը գործածուի · ինչպէս,

Զոր առն մատնիցէք · Որ մարդն որ մատնէք :

175. Վերը յարաբերականի օրինակներուն աշխարհաբարները տեսանք որ գրաբարի կարգով ու կանոնով փոխուած էին · բայց գիտնալու է որ աշխարհաբարի մէջ սովորութիւն եղած է աւելի ալ Բայածականով կամ Անցեալ դերբայով բացատրել՝ գրաբարի մէջ յարաբերականով ու գլխաւոր բայով եղած բացատրութիւնները · ինչպէս,



« Տէրոջը կամքը ըրողին ու լսողին » մարդուն շատ մեծ վարձք կայ · այսինքն Այն մարդուն « որ Տէրոջը կամքը ըրաւ ու լսեց » շատ մեծ վարձք կայ :

« Ձեզի խօսած խօսքս » հոգի ու կեանք է · այսինքն Այն խօսքը՝ « որ ձեզի խօսեցայ » հոգի ու կեանք է :

Կարդացողը ( ան՝ որ կը կարդայ ) թող հասկնայ · Որ ընթեռնու ի միտ առցէ :

Իրենց ունեցածը, Ունեցածնին ( ան՝ որ ունէին ) տուին · Զոր ունէին ետուն :

Այսպէս են նաև ·

Տեսած մարդս · Մարդը՝ որ տեսայ :

Ձեզ հրաւիրած տեղերնին · Այն տեղը՝ ուր ձեզ հրաւիրեցին :

Յիսուսին ծնած քաղաքը · Այն քաղաքը՝ ուր Յիսուս ծնաւ :

Աշխարհաբարի մէջ Անցեալ դերբայով կամ ալ Բայածականով եղած բացատրութիւնները այն ատեն փոխելու կ'ըլլան, երբ վերի օրինակներուն պէս մէկ կամ երկու երեք բառով իրարու կապակցեալ խօսքեր են · այսինքն գլխաւոր բայը անցեալ դերբայի փոխուած, և Տէր բային ալ իբրև յատկացուցիչ սեռական գրուած ըլլան :

Բայց փոխանակ ըսելու, Աստուծոյն տուածին երեսէն թողուցած վայրկեանը մտքէս չ'ելներ, ըսելու մը-

Քեռ վէճեր այն հայրենեանը՝ որ (յորում) առաջնը դառծին երեսէն կը դողար, աւելի յայտնի ու փայլուն կերպով իմաստը բացատրած կ'ըլլանք։ Իսկ եթէ դառծին երեսէն խնդիրը վերցնենք, կրնանք ըսել Առաջնին դողացած հայրենանը մօրեռ վէճեր։



# ՑԱՆԿ


| | | |
|---|---|---|
| ԱՌԱՋԻՆ ՄԱՍ | ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ . . . . | 1 |
| Ա. ԳԼՈՒԽ | ԱՆՈՒՆ . . . . . . . . | 1 |
| | Տասը կանոնաւոր հոլովմունք . . | 3 |
| | Գործեցէք կանոնաւոր հոլովմանց վրայ | 7 |
| | Անկանոն կամ Արտաքոյ հոլովմունք | 17 |
| | Գործեցէք Արտաքոյ հոլովմանց վրայ | 19 |
| | Որոշեալ Բառականներուն հոլովմունքը . . . . . . . . | 21 |
| | Գործեցէք Որոշեալ Բառականաց վրայ | 23 |
| | Անորոշ Բառականներուն հոլովմունքը . . . . . . . . | 24 |
| Բ. ԳԼՈՒԽ | ԴԵՐԱՆՈՒՆ . . . . . . . | 26 |
| Գ. ԳԼՈՒԽ | ՆԱԽԴԻՐ . . . . . . . . | 31 |
| Դ. ԳԼՈՒԽ | ԲԱՅ . . . . . . . . . . | 34 |
| | Ութը Կանոնաւոր խոնարհմունք . | 36 |
| | Գործեցէք ութը Կանոնաւոր խոնարհմանց վրայ . . . . . | 45 |
| | Արտաքոյ Բայերու խոնարհումը . | 60 |
| | Գործեցէք Արտաքոյ Բայերուն վրայ | 70 |
| | Բացառական Բայերու խոնարհումը | 74 |
| Ե. ԳԼՈՒԽ | ԴԵՐԲԱՅ . . . . . . . . | 77 |
| Զ. ԳԼՈՒԽ | ՄԱԿԲԱՅ . . . . . . . . | 83 |
| Է. ԳԼՈՒԽ | ՇԱՂԿԱՊ . . . . . . . . | 85 |
| Ը. ԳԼՈՒԽ | ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ . . . . | 85 |
| ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ | ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ . . . . | 86 |
| Ա. ԳԼՈՒԽ | ՏԷՐ ԲԱՅԻ ԵՒ ԲԱՅ . . . . | 86 |
| Բ. ԳԼՈՒԽ | ԽՆԴԻՐ ԵՒ ԽՆԴՐԱՌՈՒ . . | 90 |
| | Սեռի խնդիր . . . . . . | 90 |
| | Բնաբեան խնդիր . . . . . | 93 |

Բայանուններու խնդրառութիւնը 106
Ածականներու խնդրառութիւնը 107
Նախադրութիւններուն խնդրառութիւնը . . . . . . 108
Գ. ԳԼՈՒԽ ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ ԵՒ ՅԱՏԿԱՑԵԱԼ 113
Դ. ԳԼՈՒԽ ԲԱՑԱՅԱՅՏԻՉ ԵՒ ԲԱՑԱՅԱՅՏԵԱԼ 114
Ե. ԳԼՈՒԽ ԱԾԱԿԱՆ ԵՒ ԳՈՅԱԿԱՆ . . 117
Որոշեալ թուականներուն համաձայնութիւնը . . . . . . 119
Անորոշ թուականներուն համաձայնութիւնը . . . . . . 121
Ածական դերանուններուն համաձայնութիւնը . . . . . 124
Զ. ԳԼՈՒԽ ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԵՒ ՅԱՐԱԲԵՐԵԱԼ . . . . . . . . 129